

ՆՅՈՒՄԻՆԳԵՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈՒՆԸ

Տիկին Զյուլմա Կարոյին.

Չէ՞ որ ես ձեզ եմ պարտավոր նվիրելու այս երկը տիկին, ձե՛զ, որի բարձր և ազնիվ իմացականությունը մի գանձ է իր բարեկամների համար, ձե՛զ, որ ինձ համար հանդիսացել եք միաժամանակ և՛ որպես մի ամբողջ հասարակություն, և՛ որպես ամենաներողամիտ մի քույր: Հաճեցեք ընդունել այն ի նշան այն բարեկամության, որով պարծենում եմ ես: Դուք և ձեզ նման ազնիվ հոգի ունեցող սակավ մարդիկ կհասկանան իմ միտքը՝ կարդալով ՆՅՈՒՄԻՆԳԵՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈՒՆԸ՝ ՍԵԶԱՐ ԲԻՐՈՏՈՅԻ հետ միասին: Չէ՞ որ սոցիալական մի ամբողջ խրատական կա այդ հակադրության մեջ:

Դը Բալզակ

Դուք գիտե՞ք, թե ինչքան բարակ են այն միջնորմները, որ բաժանում են Փարիզի շքեղ կաբարենների առանձին կաբինետները: Վեռիի կաբարեյում, օրինակ, ամենամեծ դահլիճը բաժանված է երկու մասի այնպիսի միջնորմով, որն ուզած ժամանակ կարելի է վերցնել կամ նորից տեղը դնել: Դեպքն այդտեղ չի տեղի ունեցել, այլ շատ լավ մի վայրում, որի անունը հարմար չեմ գտնում հիշատակել: Մենք երկուսով էինք այնտեղ, և Անրի Մոննիեի Պրյուդոմի խոսքով ասած՝. «Ես չեի կամենա անվանարկել նրան»: Զանազան տեսակի համադամ կերակուրներից հետո մենք մեծ ախորժակով քաղցրավենիներ էինք ուտում մի փոքր դահլիճում, որտեղ մեզ բաժանող միջնորմի բարակությունն իմանալուց հետո, սկսել էինք ցածր ձայնով խոսել: Մինչև տապակած միս ուտելը, մեզ բաժանող միջնորմի այն կողմում դեռ ոչ ոք չկար, միայն լսվում էր վառվող կրակի ճարճատյունը, իսկ երբ ժամը ութը խփեց, լսվեցին աշխույժ ոտնաձայներ. ինչ-որ բառեր փոխանակվեցին, սպասարկողներ մոմեր բերին, այնժամ մեզ համար պարզ դարձավ, որ դահլիճն զբաղեցրած էր: Խոսողներին ձայներից ճանաչելով, ես հասկացա, թե ինչպիսի մարդկանց հետ էր լինելու մեր գործը:

Նրանք այն չորս ամենախիզախ ջրագռավներն էին, որ ծնունդ են նոր սերնդի անընդհատ վերանորոգվող ալիքները պսակող ծովի փրփուրների: Համակրելի տղաներ՝ որոնց գոյավիճակն առեղծվածային է. նրանք ո՛չ ռենտա ունեն և ոչ էլ կալվածք, բայց լա՛վ են ապրում:

Պատերազմներից ամենադաժանը հանդիսացող արդի ինդուստրիայի այս սրամիտ

կոնդոտիերները, իրենց պարտատերերի վրա են թողնում ամբողջ մտատանջությունը, իսկ հաճույքները իրենց համար են պահում և չունեն ոչ մի հոգս, բացի իրենց կոստյումից: Բացի այդ, քաջ ծխողներ են, ինչպես Ժան Բարը և սիգարը վառողի տակառի վրա են պահում, գուցե չձախողվելու համար իրենց դերում: Նրանք ավելի երգիծող են, քան փոքր լրագրերը, ընդունակ՝ մինչև իսկ իրենք իրենց երգիծելու: Սրամիտ են և թերահավատ, գործունյա, անկուշտ ու շոայլ, ուրիշներին նախանձող, սակայն գոհ՝ իրենց անձից. մեկ-մեկ այնքան խոր քաղաքագետներ են դառնում, որ կարողանում են ամեն ինչ վերլուծել, ամեն ինչ գուշակել, բայց դեռևս չեն հաջողել տեղ գտնել կյանքում առաջ գնալու համար:

Չորսից մեկն էր միայն նորելուկ, այն էլ դեռ գտնվում էր սանդուղքի առաջին աստիճանին: Փող ունենալը դեռ ոչ մի բան չի նշանակում. նորելուկը վեց ամսվա շողոքորթությունից հետո է, որ իմանում է, թե ինչ է պակասում իրեն: Սակավախոս, սառը, անմիտ ու ինքնահավան նախկին ժուռնալիստը, Անդռ Ֆինոն, սիրտ արեց սողալ այն մարդկանց առաջ, որոնք կարող էին հարկ

եղած դեպքում իրեն օգտակար լինել և խելք արեց լինել անպատկառ բոլոր նրանց հանդեպ, որոնց նա այլևս կարիք չէր զգում: «Գյուստավ» բալետի խելկատակներից մեկի նման նա հետևից մարկիզ էր, առջևից՝ ստահակ: Արդյունաբերության այս հովվապետն ունի մի քղանցքակալ՝ Ալֆրեդ Բլոնդեն, թերթի խմբագիր, շատ սրամիտ, բայց վարքից թույլ, անհարիր, երևելի, ընդունակ, ծույլ, որ գիտակցում է իր շահագործումը և այն թույլ է տալիս նենգամտորեն կամ բարեսիրտ, նայած տրամադրության: Նա այն մարդկանցից է, որոնց սիրում են, բայց չեն հարգում, բացի այդ, նա ճկուն է, ինչպես կոմեդիայի նաժիշտը, անկարող՝ մերժելու իր գրիչը նրան, ում հարկավոր է և իրսիրտը նրան, ով ուզում է փոխ վերցնել. վերջապես, ամենահրապուրիչը այն կնաբարո մարդկանցից, որոնց մասին մեր սրամիտներից ամենաչար լեզուն ասել է. «Ես նրանց ավելի սիրում եմ, երբ հագին ունեն ատլասե կոշիկներ, քան սապոգներ»:

Երրորդը, Կուսյուր անվանյալը, իր գոյությունը պահում է սպեկուլյացիայով.— նա փորձում է գործարք գործարքի հետևից, մեկի հաջողությունը ծածկում է մյուսի անհաջողությունը: Նա ջրի երեսն է մնում իր խաղի ներվային ուժով, թևերի ու ոտների պիրկ և հանդուգն հարվածներով: Նա լողում է մեկ այս, մեկ այն կողմ, փարիզյան շահասիրտությունների անհուն ծովի մեջ, փնտրելով բավական վիճելի մի կոզյակ, որտեղ կարողանա բնակվել: Իհարկե, նա դեռ իր տեղը չի գտել:

Գալով վերջինին, որը չորսից ամենաթունոտն է, բավական է հիշել միայն նրա անունը — Բիսիու: Ոչ թե 1825 թվականի Բիսիուն, այլ 1836 թվականի ծիծաղելի մարդաստացը, որին ճանաչում են որպես մարդկանց մեջ ամենից սրամիտն ու խայթողը. զուր տեղ այնքան սրամտություն վատնած լինելու համար նա դարձել էր կատաղած մի սատանա, վերջին ռևոլյուցիայի ժամանակ առատ ավարներից իր բաժինը հափշտակած չլինելու համար՝ սաստիկ զայրացած մի մարդ, մի իսկական լարախաղաց, որ սրան-նրան քացի է տալիս, որ իր ժամանակաշրջանն ու բոլոր գայթակղեցուցիչ արկածախնդրությունները իր տասը մատերի պես է ճանաչում և իր ծիծաղաշարժ հնարանքներով զարդարում դրանք, որ կլոունի նման բոլորի ուսերի վրա է ցատկում՝ աշխատելով միշտ այնտեղ թողնել դահճի հարվածի հետքեր:

Որկրամոլության առաջին պահանջները բավարարելուց հետո, մեր հարևանները մեզ նման հասան աղանդերին: Որովհետև մենք մեզ զսպված էինք պահում և մնում էինք անշարժ, նրանք իրենց կարծեցին մենակ: Սիգարի ծխի տակ, Շամպայնի գինու օգնությամբ և որովայնահաճո աղանդերի պատճառած զվարճությունների պահին, սկսվեց մի մտերիմ խոսակցություն՝ այնպիսի սառը շնչով, որը չորացնում է ամենասուր զգացումներն անգամ, կասեցնում ամենավեհ ներշնչումները և մարդկանց ծիծաղին տալիս է ինչ-որ խայթող բնույթ, լի այնպիսի հեգնանքով, որը զվարթությունը փոխում է քմծիծաղի և ցույց է տալիս իրենք իրենց նվիրված հոգիների սպառումը, որ այլ նպատակ չունի եսասիրտության բավարարությունից բացի, եսասիրտություն, որ մեր ժամանակի խաղաղության արդյունքն է: Մարդու դեմ գրված այն պամֆլետը՝ «Ռամոյի եղբորորդին», որ Դիդրոն չհամարձակվեց հրատարակել, վերքեր ցույց տալու համար դիտումնավոր կերպով համարձակ գրված այս գրքույկը միակ գրքույկն է, որը կարելի է համեմատել առանց որևէ հետին նպատակի ասված այն պամֆլետի հետ, որտեղ բառը չի հարգում այն, ինչի մասին մտածողը վիճում է դեռ, որտեղ միայն կործանումներով են կառուցում, որտեղ ամեն ինչ ուրացել են, որտեղ հիանում են միայն այն ամենի վրա, ինչ որ սկեպտիցիզմն է որդեգրել, այսինքն՝ փողի գերիշխանությունը, ամենագիտությունը, ամենահարմարավորությունը: Ծանոթ շրջանակին աջ ու ձախ հարվածելուց հետո, բամբասանքն սկսվեց գնդակոծել մտերիմ բարեկամներին: Երբ Բիսիուն սկսեց խոսել, ես նշանով հասկացրի, որ ուզում եմ մնալ և լսել: Այնժամ մենք լսեցինք մեկն այն զարհուրելի իմպրովիզացիաներից, որոնք մի քանի բթացած մտքի տեր մարդկանց մոտ հռչակ էին ստեղծել նրա համար: Եվ չնայած այն բանին, որ այդ իմպրովիզացիան հաճախ էր ընդմիջվում, սկսվում ու վերսկսվում, այնուամենայնիվ իմ հիշողության մեջ այն մնաց սղագրված: Այնտեղ ամեն ինչ, թե՛

կարծիքները և թե ձևը դուրս էին գրական ընդունված պահանջներից, բայց հենց դրա համար էլ ստեղծվեց չարանենգ գործերի ինչ-որ մի խառնակույտ, մեր ժամանակների հարազատ պատկերը, որի մասին բացի նման պատմություններից, արդեն այլ բան հնարավոր չէ պատմել, և որի համար պատասխանատվությունը ես թողնում եմ գլխավոր պատմողի վրա: Մնջախաղն ու շարժումները, որոնք հարմարելու էին ձայնի հաճախակի փոփոխության հետ, որոնցով Բիսիուն իր բեմ հանած խոսակիցների նկարագիրն էր տալիս, պետք է կատարյալ եղած լինեին, որովհետև նրա երեքունկնդիրները ժամանակ առ ժամանակ հավանություն արտահայտող բացականչություններ և հիացական ճիչեր էին արձակում:

— Եվ Ռաստինյակը քեզ մերժե՞ց,— ասաց Բլոնդեն Ֆինոյին:

— Կտրո՛ւկ:

— Իսկ դու նրան չսպառնացի՞ր թերթերով,— հարցրեց Բիսիուն:

— Նա սկսեց ծիծաղել,— պատասխանեց Ֆինոն:

— Ռաստինյակը հանգուցյալ Մարսելի անմիջական ժառանգորդն է. ինչպես աշխարհիկ հասարակության մեջ է նա իրեն ճանապարհի հարթել, այդպես էլ հարթելու է քաղաքական ասպարեզում,— ասաց Բլոնդեն:

— Բայց ինչպե՞ս է ձեռք բերել իր հարստությունը,— հարցրեց Կուսյուրը:— 1819 թվականին նշանավոր Բիանշոնի հետ, նա եղել է լատինական թաղամասի մի խղճուկ պանսիոնում: Որպեսզի կարողանային նրան ամսական հարյուր ֆրանկ ուղարկել, նրա ծնողները ուտում էին խորոված բզեզներ և խմում՝ թթու գինի, նրա հոր կալվածքը հազար էկյու իսկ չարժեր. նրա հոգատարությանն էին թողնված երկու քույր և մի եղբայր, իսկ այժմ...

— Այժմ նա տարեկան քառասուն հազար լիվրի եկամուտ ունի,— հարեց Ֆինոն:— Նրա քույրերից յուրաքանչյուրին տրվեցին մեծամեծ օժիտներ, և երկուսն էլ փառահեղ ամուսնություններ կնքեցին. Ռաստինյակը կալվածքի ամբողջ հասույթը թողեց իր մորը...

— 1830 թվականին ես նրան տեսա գրեթե առանց գրոշի,— ասաց Բլոնդեն:

— Այդ 1830 թվականին էր,— պատասխանեց Բիսիուն:

— Մինչդեռ այժմ,— հարեց Ֆինոն,— նա արդեն կարող է դառնալ մինիստր, Ֆրանսիայի պեր, և ի՛նչ որ ուզենա: Վեց տարի է, ինչ նա բարեհաջող կերպով իր կապերը խզել է Դելֆինի հետ, նա կամուսնանա միայն այն ժամանակ, երբ նրան ներկայանա մի շահավետ առիթ, և, իհարկե, նրա նման մի մարդու կհաջողվի ձեռք բերել ազնվական միադջիկ: Բայց նա խելացիություն ունեցավ կապվելու հարուստ մի կնոջ հետ:

— Բարեկամնե՛ր, նկատի ունեցե՞ք նաև նրա մեղմացուցիչ հանգամանքները,— ասաց Բլոնդեն,— թշվառության ճիրաններից դուրս գալով, նա ընկավ մի ճարպիկ մարդու ձեռք:

— Դու լավ ես ճանաչում Նյուսինգենին,— ասաց Բիսիուն:— Սկզբում Դելֆինն ու Ռաստինյակը նրան **բարի** մարդ էին համարում: Նրա համար կինարմատը, ասես, տանը դրած ինչ-որ զուգս ու զարդ լիներ: Ահա թե ինչն է, ըստ իս, մարդուն անխոցելի դարձնում ոտքից մինչև գլուխ. որովհետև Նյուսինգենը չի քաշվում ասելու, որ իր կինը իր հարստության ցուցանիշն է, **անհրաժեշտ մի իր**, որը սակայն խոշոր ֆինանսիստների և քաղաքական մարդկանց լարված կյանքում երկրորդական է դառնում: Անձամբ ինձ նա ասել է, որ Բոնապարտը Ժոզեֆինի հետ իր ունեցած առաջին

հարաբերությունների ընթացքում եղել է հիմար, ինչպես հասարակ քաղքենի և թե Ժողեֆինին որպես սանդուղքի աստիճան օգտագործելու քաջությունն ունենալուց հետո, նա ծիծաղելի էր եղել, երբ ուզեցել է նրան դարձնել իր կյանքի ընկերը:

— Գերազանց մտքի տեր ամեն մարդ կնոջ մասին պետք է ունենա այն կարծիքը, որ ունեն սղամարդիկ Արևելքում,— ասաց Բլոնդեն:

— Բարոնը Արևելքի և Արևմուտքի դոկտրինաները փարիզյան մի սքանչելի դոկտրինայի մեջ է միացրել: Նա բնավ չէր հանդուրժում Մարսելին, որին հնարավոր չէր օգտագործել, բայց Ռաստինյակը նրան շատ դուր եկավ, և նա առանց ամենափոքր կասկած ներշնչելու՝ շահագործեց նրան: Բարոնը իր տան բոլոր հոգսերը վստահեց Ռաստինյակին, որը Դելֆինի քմայքների ամբողջ բեռը վերցրեց իր վրա. նա էր Դելֆինին տանում Բուլոնյան անտառ, ուղեկցում թատրոն: Այսօրվա քաղաքական մեր այս մեծ մարդուկը երկար ժամանակ իր կյանքն անց է կացրել սիրային նամակներ փոխանակելով: Սկզբի օրերին Ռաստինյակին հանդիմանում էին չնչին բաների համար. նա ուրախանում էր Դելֆինի հետ, երբ վերջինս զվարթ էր, իսկ երբ Դելֆինը տխուր էր, ինքն էլ էր տխրում. նա անսրտունջ տանում էր Դելֆինի հաճախակի գլխացավերի, նրա անձնական գաղտնիքներին վերաբերող պատմությունների տաղտկալի բեռը. նա իր ամբողջ ժամանակը, յուրաքանչյուր րոպեն, իր թանկագին երիտասարդությունը Դելֆինին էր նվիրում, լցնելու համար այս սիրուն փարիզուհու անգրադ կյանքի դատարկությունը. Դելֆինը և Ռաստինյակը կարծիքների լուրջ փոխանակում էին ունենում, թե ո՞ր զարդը ավելի սագական է. խեղճ Ռաստինյակն իր վրա էր կրում նրա զայրույթի կրակը և հանդուրժում նրա հանկարծական բռնկումներից առաջացած նախատիքները, մինչդեռ որպես հատուցում՝ Դելֆինը բարոնին հրապուրիչ երևալու հայտնի ջանքեր էր գործադրում: Բարոնը ծիծաղում էր քթի տակից և, երբ նկատում էր Ռաստինյակին տան հոգսերի բեռան տակ կբաժ՝ ինչ-որ **բանից կասկածողի տեսք** էր ընդունում և ամուսնու նկատմամբ սիրահարների ընդհանուր վախը նրանց ավելի էր կապում միմյանց:

— Ես պատկերացնում եմ, որ մի հարուստ կին կարող է Ռաստինյակին ապրեցնել և պատվով ապրեցնել, բայց Ռաստինյակը որտեղի՞ց է ձեռք բերել իր հարստությունը,— հարցրեց Կուսյուրը:— Այն հսկայական հարստությունը, որ այսօր Ռաստինյակն ունի, անպայման մի տեղից տրված է եղել, և չկա մարդ, որ ասի, թե նա ինչ-որ հաջող գործարքներ հնարելու հետևանքով է տիրացել այդ հարստությանը:

— Նա այն ժառանգել է,— ասաց Ֆինոն:

— Ո՞ւմից,— հարցրեց Բլոնդեն:

— Իր հանդիպած հիմար մարդկանցից,— վրա բերեց Կուսյուրը:

— Նա դեռ բոլորը չի վերցրել, անուշիկներս,— ասաց Բիսիուն:

... Հանգիստ եղեք, հարկավոր չէ տագնապել.

Մենք ապրում ենք կեղծիքներով լի դարում:

Այժմ ես ձեզ կպատմեմ, թե որտեղից է նրա հարստությունը: Նախ, չմոռանանք մեր հարգանքը մատուցել տաղանդին: Մեր բարեկամը երեխա չէ, ինչպես Ֆինոն փորձեց որակել նրան, այլ մի ջենտլմեն, որը լավ է տիրապետում խաղի օրենքներին, խաղաքարտերից գլուխ է հանում և վայելում է շրջապատի հարգանքը: Հարկ եղած պահին Ռաստինյակը դրսևորում է բոլոր

հնարամտությունները, նման այն զինվորականին, որն անտեղի չի վատնում իր արիությունը, այլ այն կտա փոխարինաբար, երեք ամիս ժամանակով, երեք ստորագրություն և երաշխավորներ ապահովելուց հետո: Առաջին հայացքից նա կարող է թվալ բիրտ, ափեղցփեղ, անհետևողական իր համոզումներում, անհարատև իր ծրագիրներում, անկայուն իր կարծիքների մեջ, բայց երբ պատահի լուրջ գործ, մի պատեհ առիթ, որին հարկավոր է հետևել, նա երբեք չի շփոթվում, ինչպես ձեր առաջ նստած Բլոնդեն, որը նման դեպքում վիճում է հարևանի օգտին: Ռաստինյակը, ընդհակառակը, կենտրոնանում է, ինքնամոտիփվում, ուսումնասիրում է այն թիրախը, որին անհրաժեշտ է ուղղել հարվածը և ողջ եռանդով գործի է լծվում: Նա Սյուրատի խիզախությամբ մխրճվում է թշնամի գնդերի մեջ, խորտակում է բաժնետերերին, ձեռնարկատերերին, քանդում նրանց բոլոր կրպակները: Եվ երբ հարձակումը կատարել է իր ավերը, նա իսկույն վերադառնում է իր մեղկ ու անհոգ կյանքին, դառնում հարավի մարդ, զգայասեր, դատարկախոս, անզբաղ Ռաստինյակը, որն սկսում է զարթնել կեսօրին, որովհետև անքուն է մնացել բուռն կռվի պահին:

— Այդ բոլորը լավ,— ասաց Ֆինոն,— բայց դուք մեզ պատմեք նրա հարստության մասին:

— Բիսիուն մեզ նկարելու է մի ծաղրանկար միայն,— հարեց Բլոնդեն:— Ռաստինյակի հարստությունը Դելֆին դը Նյուսինգենն է, հռչակավոր այն կինը, որը ինչքան հանդուգն է, նույնքան և հեռատես:

— Մի՞թե այդ կինը քեզ փող է փոխ տվել,— հարցրեց Բիսիուն:

Խոսակիցների մեջ առաջացավ ընդհանուր ծիծաղ:

— Նրա մասին դուք սխալ կարծիքի եք,— ասաց Կուսյուրը Բլոնդեին. — նրա ձիրքն այն է, որ կարողանում է առավել կամ նվազ սուր խոսքեր ասել, տաղտկացուցիչ հավատարմությամբ սիրել Ռաստինյակին և հնազանդվել նրան կուրորեն. նա կատարելապես իտալական տիպի մի կին է:

— Եթե գործը չի վերաբերում փողին,— ասաց Անդոշ Ֆինոն կծու շեշտով:

— Ի՛նչ եք ասում,— հարեց Բիսիուն փաղաքուշ տոնով,— մի՞թե այն բոլորից հետո, ինչ մենք ասացինք այստեղ, համարձակվում եք դեռևս մեղադրել խեղճ Ռաստինյակին, այն բանի համար, որ Նյուսինգենի բանկային տան հաշվին է ապրել, որ նրա համար բնակարան են կահավորել ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես մեր բարեկամ Լյուպոն է արել Նինետի համար: Այդպիսով դուք ընկնում եք Սեն-Դենի փողոցին հատուկ գոեհկության մեջ: Նախ, ինքնին վերցրած, ինչպես Ռոայե Կուլարն է ասում, այդ հարցը կարող է **մաքուր բանականության քննադատությանը** դիմանալ, ինչ վերաբերում է անմաքուր բանականության...

— Լա՛վ ես փչում,— ասաց Ֆինոն՝ Բլոնդեին:

— Այնուամենայնիվ, նա իրավունք ունի,— բացականչեց Բլոնդեն:— Այդ հարցը շատ հին է. դա եղել է դրդապատճառը լա Շատենրեի և Ժառնակի միջև տեղի ունեցած տխրահռչակ սուսերամարտի: Ժառնակը ամբաստանվում էր մտերիմ հարաբերություններ ունենալու մեջ իր գոքանչի հետ, որը իր շատ սիրելի փեսային պահում էր շքեղության մեջ: Երբ փաստն այդքան իրական է, չպետք է դրա մասին խոսել: Ի նշան հավատարմության Հանրի II թագավորին, որ իրեն թույլ էր տվել չարախոսել, լա Շատենրեն բամբասանքը իր վրա առավ, դրանից էլ առաջացավ այն սուսերամարտը, որը հարստացրեց ֆրանսիական լեզուն **Ժառնակի հարվածը** արտահայտությամբ:

— Ա՛հ, այդ արտահայտությունը այդքան հնո՞ւց է գալիս, ուրեմն ազնիվ է,— ասաց Ֆինոն:

— Որպես նախկին ժուռնալիստ, դու կարող էիր անգիտանալ այդ,— ասաց Բլոնդեն:

— Կան կանայք,— շարունակեց Բիսիուն լուրջ տոնով,— կան նաև տղամարդիկ, որոնք կարող են բաժանել իրենց գոյությունը և տալ նրա մի մասը միայն (նկատի առեք, որ իմ կարծիքները փիլիսոփայական ձևակերպումներով եմ արտահայտում): Այդ մարդկանց համար, բոլոր նյութական շահագրգռությունները դուրս են մնում զգացումների ոլորտից, նրանք մի կնոջ համար պատրաստ են տրամադրելու իրենց կյանքը, իրենց ժամանակը, իրենց պատիվը և գտնում են, որ պատշաճ բան չէ իրենց միջև՝ վատնել թղթադրամը, որի վրա գրված է՝ «Օրենքը կեղծարարներին պատժում է մահվամբ»: Փոխադարձաբար նրանք ոչինչ չեն ընդունում կանանցից: Այո, ամեն ինչ դառնում է անպատվաբեր, երբ հոգիների միաձուլման հետ լինում է նաև նյութական շահերի ընդհանրություն: Այդ վարդապետությունը քարոզվում է, սակայն քիչ անգամ է կիրառվում:

— Հե՛, — ասաց Բլոնդեն, — ի՞նչ անմտություն. մարշալ Ռիշելյոն, որ սիրային խնդիրներից հասկանում էր, լա Պոպլիերին հազար լուի թոշակ հատկացրեց բուխարու թիթեղի դեպքից հետո: Ազնեւ Սորելը պարզ սրտով իր հարստությունը Կարլ VII թագավորին տվեց և թագավորն այն ընդունեց: Ժակ Կյոռը² իր հոգաձության տակ առավ ֆրանսիական գահը, որը հոժարեց դրան, սակայն ապերախտ եղավ կնոջ նման:

— Պարոննե՛ր, — ասաց Բիսիուն, — եթե սերը զոդված չէ անքակտելի բարեկամությամբ, ինձ թվում է վաղանցուկ ցոփություն: Ի՞նչ է այն ամբողջական նվիրումը, որում մարդիկ իրենց համար պահում են ինչ-որ բան: Մեկը մյուսի նկատմամբ այնքան հակադիր և այնքան խորապես անբարոյական այս երկու վարդապետությունների միջև ոչ մի հաշտարարական եզր հնարավոր չէ: Ըստ իս, այն մարդիկ, որոնք վախենում են միանգամայն կատարյալ կապակցությունից, անկասկած հավատում են, որ այն կարող է վերջ գտնել. մնա՛ք բարով պատրանքներ.— այն կիրքը, որ իր հավիտենականության չի հավատում, զզվելի ու քստմնելի է: (Այս միտքը պարզապես Ֆենելոնից է:) Ահա թե ինչո՛ւ նրանք, որ ծանոթ են աշխարհիկ կյանքին, սառը դիտողները, կարգին մարդ համարված անձինք, որոնք լավ ձեռնոցներ ու փողկապ են կրում և երբեք ամոթ չեն զգում հանուն հարստության, մի կնոջ հետ ամուսնանալուց, քարոզում են, որ շահերի ու զգացումների միջև լիակատար խզումն անհրաժեշտ է: Իսկ նրանք, ովքեր սիրում են և կարծում, որ աշխարհում միայն իրենք գոյություն ունեն իրենց սիրելիանների հետ, հիմարներ են: Սրանց համար միլիոնները ցեխ են: Իրենց պաշտած կուռքի ձեռնոցը, կամելիան, սրանց համար միլիոններից թանկ արժեն: Եթե երբևէ նրանց մոտ չգտնեք անարգ մետաղից, որը վատնել են, դուք կարող եք գտնել չորացած ծաղիկներ՝ գաղտորեն պահված եղևնափայտյա սիրուն տուփերի մեջ: Նրանք մեկը մյուսից — սիրողը՝ սիրածից չեն տարբերվում: **Ես**ը նրանց համար գոյություն չունի: **Դու**, ահա նրանց մարմնացյալ աստվածությունը: Ի՞նչ կարող ես անել: Մի՞թե կարող ես բուժել սրտի այդ գաղտնի հիվանդությունը: Կան անմիտներ, որոնք սիրում են առանց որևէ հաշիվ տալու: Կան նաև իմաստուններ, որոնք հաշիվ են մտցնում սիրո մեջ:

— Բիսիուն աննման ու վսեմ մարդ է,— բացականչեց Բլոնդեն: — Իսկ դու ի՞նչ կասես, Ֆինո:

— Ուրիշ որևէ առիթով ես կպատասխանեի ջենտլմենի նման,— հանդիսավորությամբ պատասխանեց Ֆինոն,— սակայն այս դեպքում ես մտածում եմ...

— Ինչպես անարգ ու ստոր են այն անձինք, որոնց հետ պատիվ ունեք գործ ունենալու,— վրա բերեց Բիսիուն:

— Իսկապես որ,— ասաց Ֆինոն:

— Իսկ դուք ի՞նչ կասեիք,— հարցրեց Բիսիուն Կուսյուրին:

— Անմտություն՝ ւն,— բացականչեց Կուսյուրը:— Այն կինը, որն իր մարմինը աստիճան չի ծառայեցնում, որպեսզի դրա օգնությամբ կարենա ավելի շուտ հաջողության հասնի իր սիրած մարդուն, այդպիսի կինը սիրում է միայն իրեն:

— Իսկ դո՞ւ, Բլոնդե:

— Ես այն կիրառում եմ կյանքում:

— Դե՛, այժմ լսեք,— վերսկսեց Բիսիուն, իր ձայնին տալով ամենակծու տոն,— Ռաստինյակը ձեր կարծիքին չէր: Վերցնել անվերադարձ՝ սոսկալի է և մինչև անգամ փոքր-ինչ թեթևամտություն է. սակայն վերցնել աստծուն նմանվելու դիտումով, հարյուրապատիկ վերադարձնելով, դա արդեն ասպետական արարք է: Այդպես էլ մտածում էր Ռաստինյակը: Նա խորապես նվաստացած էր զգում իրեն Դելֆին դը Նյուսինգենի հետ իր ունեցած շահասիրական կապի համար. ես կարող եմ վկայել իր կրած վշտի մասին. ես նրան տեսել եմ արցունքն աչքերին, իր վիճակի վրա ողբալիս: Այո՛, դրա համար նա իրոք լաց էր լինում... Ճիշտ է, ճաշից հետո: Իսկ ձեր կարծիքով, դուրս է գալիս...

— Ուրեմն, դու ձեռ ես առնում մեզ,— ասաց Ֆինոն:

— Բնավ երբեք, խոսքը վերաբերում է Ռաստինյակին: Ձեր կարծիքով դուրս է գալիս, որ նրա վիշտը ապացուցում է նրա այլասերվածությունը, որովհետև այդ դեպքում նա Դելֆինին սիրում էր շատ քիչ: Այսուամենայնիվ, ի՞նչ կարող ես անել: Փուշը խրվում էր խեղճ տղի սրտի մեջ: Նա կատարելապես ապականված մի ազնվական է, տեսնում եք. իսկ մենք առաքինի արվեստագետներ ենք: Այդպիսով, Ռաստինյակն ուզում էր հարստացնել Դելֆինին. ինքը աղքատ, Դելֆինը հարուստ: Եվ կհավատա՞ք, այդ նրան հաջողվեց: Ռաստինյակը, որ կարող էր մենամարտել Ժառնակի նման, դրանից հետո ընդունեց Հանրի II-ի տեսակետը, հետևելով այն ասույթին, որն ասում է՝ «Չկա բացարձակ առաքինություն, ամեն ինչ կախված է հանգամանքներից»: Դա մեծ դեր է խաղում նրա հարստության պատմության մեջ:

— Դու ավելի լավ կանես քո պատմությունը կարճ կապես, քան թե մեզ մղես ինքնազրպարտման,— ասաց Բլոնդեն քաղցր բարեմտությամբ:

— Հա, հա, իմ անուշիկ տղաս,— ասաց Բիսիուն, թեթևակի խփելով նրա ծոծրակին,— դու մեզ հյուրասիրում ես շամպայնով:

— Է՛, բավ է, ակցիոների սուրբ անունը վկա, վերջապես պատմիր քո պատմությունը,— ասաց Կուսյուրը:

— Ես ուզում էի ըստ կարգի պատմել, բայց դու քո անեծքով ստիպում ես ինձ հասնել խնդրի լուծմանը:

— Ուրեմն պատմության մեջ ակցիոներնե՞ր գործ ունեն,— հարցրեց Ֆինոն:

— Ամենահարուստներից, քո մարդկանց նման,— պատասխանեց Բիսիուն:

— Ինձ թվում է,— ասաց Ֆինոն, ծանրակշիռ տոնով,— դու պետք էր, որ մեծ հարգանք ցուցաբերեիր այդպիսիքարի ու լավ տղայի, որից կարիքի դեպքում հինգ հարյուր ֆրանկ ես վերցնում:

— Սպասայ՛կ,— բղավեց Բիսիուն:

— Ի՞նչ ես ուզում պատվիրել,— հարցրեց Բլոնդեն:

— Հինգ հարյուր ֆրանկ՝ որպեսզի վերադարձնեմ Ֆինոյին, և ձերբազատվեմ նրա հանդեպ իմ զգացած երախտագիտական զգացումներից:

— Շարունակի՛ր քո պատմությունը,— հարեց Ֆինոն, կեղծ ծիծաղով:

— Դուք վկա եք,— ասաց Բիսիուն,— որ ես չեմ ծախվել այդ ժպիտի մարդուն, որը իմ լռությունը գնահատում է միայն հինգ հարյուր ֆրանկով: Դու երբեք մինիստր չես կարող լինել, մինչև չիմանաս գնահատել խիղճը: Դե, բավական է, անուշիկ Ֆինոս,— ասաց նա մեղմ ձայնով,— ես կպատմեմ այդ պատմությունը, առանց անձնականությունների, և մենք կլինենք քվիտ:

— Այժմ, նա մեզ կապացուցի,— ժպտալով ասաց Կուսյուրը,— որ դր Նյուսինգենն է պատճառ եղել Ռաստինյակի հարստության:

— Մի՛ կարծիր, որ ճշմարտությունից շատ ես հեռու,— ասաց Բիսիուն:— Դուք չեք կարող պատկերացնել, թե ո՛վ է դր Նյուսինգենը, իհարկե, որպես ֆինանսիստ:

— Դու որևէ բան գիտե՞ս նրա կարիերայի սկզբնական քայլերի մասին,— հարցրեց Բլոնդեն:

— Ես նրա հետ ծանոթացել եմ իր տանը,— պատասխանեց Բիսիուն,— բայց կարող է պատահել, որ մենք իրար հանդիպել ենք մեծ ճանապարհին:

— Նյուսինգեն բանկային տան բարգավաճումը մեր էպոխայի ամենից արտասովոր երևույթներից մեկն է,— վերսկսեց Բլոնդեն:— 1804 թվականին դր Նյուսինգենն այնքան էլ հայտնի չէր: Այն ժամանակվա բանկիրները դողում էին, իմանալով, որ շրջանառության մեջ է նրա հոծարագրած հարյուր հազար էկյու արժողությամբ մուրհակները: Այդ մեծ ֆինանսիստը զգում է իր նվաստությունը: Ի՞նչ անել հանրածանոթ դառնալու համար: Նա դադարեցնում է իր վճարումները: Հիանալի մտահղացում. նրա անունը, որ լսվում էր միայն Ստրասբուրգում և Պուասոնիեր թաղամասում, սկսում է թնդալ բոլոր բորսաներում: Արժեզրկված ակցիաներով նա փակում է հաշիվը իր հաճախորդների հետ և ապա սկսում իր վճարումները. նրա մուրհակները սկսում են փնտրել ամբողջ Ֆրանսիայում: Անսպասելի պատահմունքով նրա ակցիաները բարձրանում են, ընդունելություն գտնում և շահույթ բերում: Դր Նյուսինգենի արժեթղթերը ամենուր փնտրվում են: 1815 թվականն է, մեր տղան հավաքում է իր կապիտալը, գնում է պետական արժեթղթեր Վատեռլոյի պատերազմի նախօրյակին, դադարեցնում է իր վճարումները կրիզիսի ժամանակամիջոցում, և փակում է հաշիվը Ուորշինի հանքերի ակցիաներով, որ ինքն էր ձեռք բերել արժեքից քսան տոկոս ցածր գնով և անձամբ ինքն էր շրջանառության մեջ դրել: Այո՛, այո՛, պարոններ, ապահովության նկատառումով նա հարյուր հիսուն հազար շիշ շամպայն է վերցնում Գրանդեից, նախատեսելով ներկայիս կոմս դ'Օբրիոնի առաքինի հոր սնանկությունը, նույնքան շիշ էլ Բորդոյի գինի՝ Դյուբերգից: Իր վերցրած գինու այս երեք հարյուր հազար շշերը, որոնց յուրաքանչյուրի համար նա վճարել էր մեկուկես ֆրանկ, դր Նյուսինգենը 1817—19 թվականներին Պալե-Ռոյալում դաշնակիցներին է խմացնում, յուրաքանչյուր շշի դիմաց ստանալով 6 ֆրանկ: Նյուսինգեն բանկային տան ակցիաները և անունը դառնում են ամբողջ Եվրոպայում հանրածանոթ: Նա վեր է ելնում այն խորխորատից, որում ուրիշ մարդ կարող էր ամբողջապես խորտակվել: Նրա հայտարարած սնանկությունը երկու անգամ հսկայական օգուտ տվեց իր պարտատերերին: Նա ուզում էր խաբել, սակայն անկարելի էր: Նրան համարում էին աշխարհի ամենապատվավոր անձը: Երբորդ սնանկության դեպքում նրա մուրհակները մուտք կգործեն Ասիա, Մեքսիկա, Ավստրալիա,

մինչև վայրենիների մոտ: Ուվրարը միակ մարդն է, որ հանուն հարստության իր ազգությունը ուրացող այս հրեայի մասին ճիշտ է դատել. «Երբ դը Նյուսինգենը ձեռքից բաց է թողնում ոսկին,— ասել է նա,— իմացեք, որ դրա դիմաց աղամանդներ է ձեռք բերում»:

— Նրա գործակիցը, դյու Տիյեն նրանից պակասը չէ,— ասաց Ֆինոն:— Արդ, երևակայեցեք, որ դյու Տիյեն այնպիսի մի մարդ, որ ծնած օրից իր գոյությունը հազիվ պահելու միջոցներ է ունեցել միայն, մի մարդ է, որը դեռևս 1814 թ. մի լիար անգամ չունեի, դարձել է այն, ինչ դուք տեսնում եք այժմ. մեզնից (իհարկե խոսքը ձեր մասին չէ, Կուտյո՛ւր) ոչ մեկը նրա արածը չկարողացավ անել. նա բարեկամներ շահեց, փոխանակ թշնամիներ ունենալու: Նա այնքան ճարտարությամբ թաքցրեց իր անցյալը, որ հարկ եղավ շատ կեղտոտություններ բացել, որպեսզի դեռևս 1814 թվականին նրան տեսնենք որպես գործակատար Սենտ-Օնորե փողոցի անուշահոտությունների մի վաճառատան:

— Անհեթեթություն՝ ինչ,— հարեց Բիսիուն,— Նյուսինգենին երբեք չի կարելի համեմատել դյու Տիյեի նման խաբեբայի հետ, որը մի շնագայլ է և հաջողություն է գտել իր հոտառությամբ, որով երևան է հանում անհայտ դիակները, և առաջինը ինքն է վրա պրծնում, լավագույն ոսկորին տիրանալու համար: Բացի այդ, դիտեցեք այս երկու մարդկանց. մեկն ունի կատվի կերպարանք, նիհար է և սլացիկ. մյուսը հաստ է ու գեր, ծանր, ինչպես մի ճամփորդի պայուսակ, անշարժ ինչպես մի դիպլոմատ: Դը Նյուսինգենն ունի լայն ձեռքեր և լուսանի սառը հայացք: Նրա մտքերը երբեք չեն կարող կռահել, նա անթափանցելի է, նա հանկարծակիի է բերում, այնինչ դյու Տիյեի խորամանկությունը ինչպես Նապոլեոնն է ասել ինչ-որ մեկի մասին, նման է շատ նուրբ մանված բամբակի, որ հեշտությամբ կտրվում է:

— Դը Նյուսինգենի առավելությունը դյու Տիյեի համեմատությամբ այն է, որ նա ունի առողջ դատողություն՝ կռահելու, որ ֆինանսիստը պետք է միայն բարոն դառնա, մինչդեռ դյու Տիյեն ցանկանում է կոմս կոչվել Իտալիայում,— ասաց Բլոնդեն:

— Բլոնդե՛... որդիս, թույլ տուր մի խոսք,— հարեց Կուտյուրը.— նախ և առաջ դը Նյուսինգենն համարձակվել է ասել, որ պատվավոր մարդը միայն արտաքնապես գոյություն ունի: Եվ թե, եթե ուզում ես նրան ավելի լավ ճանաչել, հարկավոր է նրան տեսնել գործի մեջ: Դը Նյուսինգենի համար բանկը փոքր մի մինիստրություն է,— այդտեղ կանկառավարական մատակարարումները՝ գինին, բուրդը, ինդիգոն. մի խոսքով, այն ամենը, ինչից կարելի է շահ ձեռք բերել: Նրա հանճարը ընդգրկում է ամեն ինչ: Ֆինանսի այս հսկան կարող է դեպուտատներին վաճառել մինիստրությանը և հույներին՝ թուրքերին: Նրա համար վաճառականությունը, կասեր Կուդենը, «Զանազանության ամբողջությունն է, և տարատեսակությունների միասնությունը»: Այս տեսակետից բանկը ամբողջ մի քաղաքականություն է, նա պահանջում է մի լավ գլուխ, ամուր կոփված մի մարդ՝ ընդունակ ուղղամտության օրենքից անդին անցնելու, որտեղ նա իրեն նեղված է զգում:

— Իրավունք ունես, տղա՛ս,— ասաց Բլոնդեն:— Սակայն միայն մենք ենք հասկանում, որ այդ դեպքում պատերազմը փոխադրվում է փողի աշխարհը: Բանկիրը մի նվաճող է, որ հազարավոր մարդկանց է գոհում, թաքուն արդյունքների հասնելու համար. մասնավոր մարդկանց շահերը իր զինվորներն են: Նա ունի իր ռազմավարությունը, գիտե դարաններ սարքել, առաջ մղել իր կողմնակիցներին և ճանաչում է այն քաղաքները, որ գրավելու է: Այս մարդիկ մեծ մասամբ այնքան մոտ են քաղաքականության, որ ի վերջո խառնվում են նրան և այնտեղ էլ կորցնում իրենց հարստությունը: Նեկկերի բանկը այդ ձևով կորստյան մատնվեց³. նշանավոր Մամուել Բեռնարը քաղաքականության խառնվելու հետևանքով համարյա կործանվեց: Յուրաքանչյուր դարաշրջանում կարելի է գտնել հսկա հարստության տեր մի բանկիր, որ իրենից հետո ոչ հարստություն է թողնում և ոչ էլ հաջորդ: Պարիս եղբայրները, որոնք Լոյի տապալման գործում մեծ

դեր կատարեցին և Լոն ինքը, որի հետ համեմատած բոլոր նրանք, որոնք շահաբաժիններով ընկերություն են հիմնում, թզուկներ են, Բուրեն, Բոժոնը, բոլորն էլ անհետացան, առանց տոհմական հետնորդներ թողնելու: Բանկը Կրոնոսի նման խժռում է իր երեխաներին⁴: Հարատև կանգուն մնալու համար բանկիրը ազնվական պետք է դառնա, հիմնի իր դինաստիան, ինչպես Կարլոս V-ի փոխատուները՝ Ֆուդերները, որոնք հանդիսացան Բաբենհաուզեն իշխաններ և որոնք մինչև հիմա էլ գոյություն ունեն... Գոթայիալմանախում: Բանկը հենց միայն ինքնապահպանության բնագոյով մղվում է դեպի ազնվականությունը, թերևս անգիտակցաբար: Ժակ Կյորը ստեղծեց մի մեծ ազնվական տոհմ՝ Նուարմուտիենների տոհմը, որն անհետացավ Լուդովիկոս XIII-ի օրոք: Զարմանալի եռանդի տեր մարդ էր նա և իր ողջ ուժը վատնեց օրինավոր մի թագավորի՝ իշխանության գլուխ բերելու համար. երբ նա մահացավ, արդեն արշիպելագի կղզիներից մեկի իշխանն էր. նա այնտեղ կառուցեց աստվածամոր հիանալի մի տաճար:

— Ահա՛, եթե դու սկսես պատմության դասընթաց անցկացնել, մենք կհեռանանք մեր ժամանակներից, որտեղ թագավորը զրկվել է ազնվականության տիտղոս շնորհելու իրավունքից, որտեղ բարոններ և կոմսեր դոնփակ նիստերում են կարգվում: Ի՛նչ արգահատելի վիճակ,— ասաց Ֆինոն:

— Դու ափսոսում ես անցած ժամանակները, երբ անտոհմ մարդիկ փողի ուժով ազնվականության էին հասնում,— ասաց Բիսիուն,— իրավունք ունես: Այժմ վերադառնանք մեր պատմության: Ճանաչու՞մ եք Բողընորին: Իհարկե, ոչ: Լավ ուրեմն: Տեսնո՞ւմ եք ինչպես անցողական է ամեն ինչ: Խեղճ տղան տասը տարի առաջ դենտիզմի ծաղիկն էր հանդիսանում: Բայց նա այնպես մոռացվեց, որ դուք նրան չեք ճանաչում, ինչպես քիչ առաջ Ֆինոն չիմացավ **Ժառնակի հարվածը** արտահայտության ծագումը (գեղեցիկ արտահայտվելու համար է, որ ասում եմ այդ, և ոչ թե քեզ ձեռ առնելու դիտումով, Ֆինոն): Նա իրավամար կապված էր Սեն-Ժերմեն արվարձանի հասարակության հետ: Բողընորն առաջին միամիտ մարդն է, որ ես ներկայացնելու եմ ձեզ: Նախ և առաջ նա կոչվում էր Գողֆրուա **դը** Բողընոր: Ո՛չ Ֆինոն, ո՛չ Բլոնդեն, ո՛չ Կուսյուրը և ոչ էլ ես չենք ուրանա նման առավելությունը: Այս տղայի ինքնասիրությունը երբեք չէր վիրավորվում, երբ պարահանդեսից հետո սպասավորը իր կառքն էր կանչում երեսուն գեղեցիկ կանանց ներկայությամբ, որոնք գլխարկները հագած, շրջապատված իրենց ամուսիններով ու սիրեկաններով, սպասում էին իրենց կառքերին: Հետո նա վայելում էր աստծո կողմից մարդուն տրված մարմնական բոլոր շնորհները՝ առողջ և կատարյալմարմին, ո՛չ հատիկ աչքի վրա, ո՛չ կեղծ մազափունջ ճակատին, ոչ էլ կեղծ սրնքաձուկ, նրա սրունքները ոչ դեպի ներս էին թեքվում, ոչ էլ դեպի դուրս. նա ուներ օրինավոր ծնկներ, ուղիղ ողնաշար, սլացիկ հասակ, գեղեցիկ և սպիտակ ձեռքեր և սև մազեր. նրա մաշկի գույնը ոչ այնքան վարդագույն էր, ինչպես նպարավաճառի գործակատարի մաշկի գույնն է լինում, ոչ էլ կալաբրիացու նման շատ թուխ: Վերջապես, էականն այն է, որ Բողընորն այնքան սիրուն չէր, ինչպես մեր այն բարեկամները, որոնք ուրիշ բան չունենալով, իրենց գեղեցկությունը ուզում են կռվան դարձնել: Բայց, ինչպես ասացինք, մինչև այդտեղ չգնանք, դա գծուծ բան է: Բողընորը քաջ գիտեր ատրճանակ գործածել և շնորհալի ձևով ձի նստել: Ինչ-որ չնչին բանի համար մենամարտել էր և իր հակառակորդին չէր սպանել: Գիտե՞ք արդյոք, թե ի՞նչն է կազմում ամբողջական, մաքուր ու անխառն երջանկությունը XIX դարում, Փարիզում, և երջանկությունը 26 տարեկան մի երիտասարդի. իմանալու համար այդ՝ անհրաժեշտ է կյանքի անսահման փոքր մանրուքների մեջ մտնել: Կոշկակարը նրա ոտքի ձևը կռահելով, շատ հարմար կոշիկ էր կարում նրա համար, իսկ դերձակը սիրում էր նրան հագուստ կարել: Գողֆրուան **ռ** տառը **դ** չէր արտասանում, նա ո՛չ գասկոնցու, ոչ էլ նորմանդացու նման էր խոսում, այլ խոսում էր մաքուր և շիտակ լեզվով, և Ֆինոյի նման շատ շնորհալի էր կապում իր փողկապը: Լինելով իր խնամակալ մարկիզ դեզլըմոնի կնոջ զարմիկը (նա հորից ու մորից որբ էր մնացել, որը նրա համար մի այլ բարեբախտություն էր), նա

կարող էր բանկիրների մոտ գնալ և գնում էր ու դրա համար Սեն-ժերմեն արվարձանը նրան չէր հանդիմանում, որովհետև երիտասարդ մարդը բարեբախտաբար իրավունք ունի հաճույքը դարձնել իր միակ օրենքը, լինել այնտեղ, որտեղ զվարճանում են և խույս տալ այն մոայլ խորշերից, որտեղ վշտերն են ծաղկում: Վերջապես, նա սրսկվել էր հիվանդություններից զերծ մնալու համար (դու ինձ պետք է որ հասկանաս, Բլոնդեն): Հակառակ այս բոլոր առավելություններին, նա կարող էր իրեն դժբախտ զգալ: Հե՛, հե՛, երջանկությունը, դժբախտաբար, բացարձակ մի բանի նշանակությունունենալու երևույթ ունի, և դրդում է պարզամիտ շատ մարդկանց հարց տալու, թե.— «Ի՞նչ է երջանկությունը»: Շատ խելացի ու սրամիտ մի կին ասել է.— «Երջանկությունն այնտեղ է, որտեղ այն ենթադրում ենք»:

— Նա շատ տխուր մի ճշմարտություն է հայտնել,— ասաց Բլոնդեն:

— Եվ խրատական ճշմարտություն,— ավելացրեց Ֆինոն:

— Գերխրատական: Երջանկությունը, ինչպես և առաքինությունն ու չարիքը արտահայտում են ինչ-որ հարաբերական բան,— պատասխանեց Բլոնդեն:— Լաֆոնտենն այն կարծիքի էր, որ դժոխքի դատապարտվածները կվարժվեն իրենց վիճակին և ի վերջո այնտեղ իրենց պիտի զգան այնպես, ինչպես ձկները ջրում:

— Նպարավաճառներն անգամ գիտեն Լաֆոնտենի բոլոր առածները,— վրա բերեց Բիսիուն:

— Փարիզում ապրող 26 տարեկան մարդու երջանկությունը նման չէ Բլուայում ապրող 26 տարեկան մարդու երջանկությանը,— ասաց Բլոնդեն, Բիսիուի ռեպլիկային ուշք չդարձնելով:— Ովքեր, մեկնելով այդ տեսանկյունից, աղմկում են գաղափարների անկայունության դեմ, խաբեբաներ են կամ տգետներ: Բժշկությունը, որի մեծագույն ծառայությունն այն է, որ նա 1799—1837 թթ. ընթացքում կարողացավ ենթադրությունների բնագավառից, ֆրանսիական վերլուծական դպրոցի ազդեցությամբ, անցնել պոզիտիվ գիտությանը, բժշկությունը ապացուցել է, որ որոշ ժամանակաշրջանում, մարդ արարածի օրգանիզմը լիակատար կերպով վերանորոգվում է:

— Ժաննոյի դանակի նման⁵,— ասաց Բիսիուն,— իսկ դուք կարծում եք, որ այն միշտ նույնն է: Արդ, բազմաթիվ կարկատաններով կտորներ ունի առլեկինյան այն զգեստը, որին երջանկություն անունն ենք տալիս. սակայն իմ Գոդֆրուայի զգեստի վրա ո՛չ ծակ կար, ոչ էլ բիծ: Քսանվեց տարեկան մի երիտասարդ, որ սիրո մեջ երջանիկ է, այսինքն՝ սիրված է, ո՛չ իր ծաղկուն երիտասարդության համար, ո՛չ իր սրամտության համար, ո՛չ էլ իր շարժումների համար, այլ սիրված է անդիմադրելի կրքից մղված, ոչ իսկ ինքն իրեն հանդեպ տածած սիրո պատճառով, եթե նույնիսկ այդ սերը, Ռոայե Կոլարի արտահայտության համաձայն, լինի վերացական, այդ երիտասարդը կարող է շատ հեշտությամբ ոչ մի գրոշ չունենալ իր քսակում, որ իր սիրածն է ասեղնագործել, նա կարող է նույնիսկ պարտք մնալ իր տանտիրոջ՝ բնակարանի վարձի համար, վերև հիշված կոշկակարին՝ իր կոշիկների համար, և զգեստի համար իր դերձակին՝ որը կարող է ի վերջո սատչել նրանից, մի խոսքով նա կարող է աղքատ լինել: Թշվառությունը փչացնում է երջանկությունը այն երիտասարդի, որը չունի մեր վեհագույն գաղափարները շահերի միասնության մասին: Ես չգիտեմ ոչինչ ավելի ձանձրացուցիչ, քան այն, երբ մարդ բարոյապես շատ երջանիկ է, իսկ նյութապես շատ դժբախտ: Ճիշտ այնպես, ինչպես իմ սրունքները, որոնցից մեկն ընկել է դռան արանքից եկող հոսանքի մեջ ու սառչում է, իսկ մյուսը խանձվում է շեկ կրակով: Հուսով եմ, որ իմ ասածները լավ եմ հասկացնում. արդյոք դրանք արձագանք չե՞ն գտնում ձեր բաժկոնակի տակ, Բլոնդեն: Խոսքը մեր մեջ, թողնենք սիրտը, նա փչացնում է հոգին: Շարունակենք: Գոդֆրուա դը Բոդենորը վայելում էր իր մատակարարների հարգանքը, որովհետև նրանք կանոնավորապես ստանում էին նրա փողերը:

Այն սրամիտ կինը, որի մասին արդեն հիշատակել ենք և որի անունը չի կարելի տալ այստեղ, որովհետև հակառակ իր խստասրտության, նա դեռ ապրում է...

— Ո՞վ է այդ:

— Մարկիզուհի դ՛եսպարը: Նա ասում էր, որ երիտասարդ տղամարդը պետք է ապրի միջնահարկում, տնտեսության հետ առնչող ոչ մի բան չպիտի ունենա, ո՛չ խոհարարուհի, ո՛չ խոհանոց, նա պետք է սպասարկվի մի ծեր սպասավորի կողմից և չպիտի ունենա կայուն կյանքի ոչ մի ձգտում: Նրա ասելով, բոլոր այլ վիճակները վատ ճաշակ ունենալու արդյունք են: Գողֆրուա դը Բոդենորը, հավատարիմ այս ծրագրին, բնակվում էր հենց այդպիսի խցիկում, Մալակե քարափի վրա: Այնուամենայնիվ, նա հարկադրված էր փոքր-ինչ նմանվել ամուսնացած մարդկանց, տեղավորելով իր սենյակում մի նեղ անկողին, որպեսզի քիչ տեղ գրավի: Եթե պատահմամբ մի անգլուհի իր մոտ անցներ, այնտեղ նա «անպատշաճ» ոչինչ չէր գտնի: Ֆինո՛, դու կգտնես մեկին, որը քեզ կբացատրի «անպատշաճության» մեծ օրենքը, որով Անգլիան է կառավարվում: Բայց քանի որ մենք իրար հետ կապվել ենք հազար ֆրանկանոցով, ես այդ մասին քեզ որոշ գաղափար կտամ, որովհետև ես ինքս եղել եմ Անգլիայում (ցածր ձայնով Բլոնդեի ականջին, — ես նրան երկու հազար ֆրանկից ավելի արժեցող մտքեր եմ տալիս): Անգլիայում գիշեր ժամանակ, պարահանդեսում, կամ այլուր, շատ մտերմորեն կապվում ես մի կնոջ հետ. հաջորդ օրը նրան հանդիպում ես ճանապարհին և ցույց ես տալիս, որ ճանաչում ես. — «անպատշաճ է»: Ճաշի ժամանակ, քո ձախ կողմում, հանդիպում ես ֆրակ հագած մի մարդու և գտնում ես, որ հիանալի մարդ է, նրբամիտ, ինքնահավանության ոչ մի հետք, կատարյալ պարզություն. անգլիացու հատուկ ոչինչ չունի. և, ըստ ֆրանսիական հին հասարակության բարեկրթության օրենքների, չափազանց սիրալիր սկսում ես խոսել հետը. — «անպատշաճ է»: Պարահանդեսում մոտենում ես մի կնոջ, նրա հետ պարելու դիտումով. — «անպատշաճ է»: Տաքանում ես, վիճում ես, ծիծաղում ես, սիրտդ, հոգիդ, էությունդ բաց ես անում խոսակցությանդ ընթացքում. արտահայտում ես զգացումներդ: Խաղի ընթացքում խաղում ես, վեճի մեջ՝ վիճում, ուտելու պահին՝ ուտում. — «անպատշաճ է, անպատշաճ է, անպատշաճ է»: Մեր ժամանակաշրջանի ամենից սրամիտ և ամենից խոր մարդկանցից մեկը, Ստենդալը, շատ լավ է բնութագրել անգլիական «անպատշաճությունը», պատմելով բրիտանական ինչ-որ մի լորդի մասին, որը միայնակ նստած իր կրակարանի առաջ չի համարձակվում ոտքը ոտքի վրա դնել, վախենալով, որ «անպատշաճ» կհամարվի: Անգլիացի կինը, լինի դա նույնիսկ ամենակատաղի աղանդավոր կեղծ սուրբերից (ֆանատիկ բողոքականներ, որոնք իրենց ամբողջ ընտանիքը սովահար կանեին, եթե այդ ընտանիքը անպատշաճ արարքի մեջ գտնվեր) «անպատշաճ» չէր համարի դիվային կատաղությունը իր ննջասենյակում և իրեն կհամարեր լրիվ խայտառակված ու կորստյան մատնված, եթե երբևէ ընդուներ մի որևէ բարեկամի նույն այդ սենյակում: «Անպատշաճության» շնորհիվ մարդիկ մի գեղեցիկ օր, Լոնդոնն ու իր բնակիչներին քարացած պիտի գտնեն:

— Երբ մտածում ես, որ Ֆրանսիայում կան այնպիսի չնչին մարդիկ, որոնք ցանկանում են մեզ մոտ ներմուծել այն հանդիսավոր տիմարությունները, որ անգլիացիներն են կատարում իրենց մոտ, իրենց նշանավոր սառնասրտությամբ, որ քեզ քաջ հայտնի է, — ասաց Բլոնդեն, — այդ մասին միտքն անգամ կարող է սարսուռ ազդել բոլոր նրանց, ովքեր եղել են Անգլիայում և հիշում են ֆրանսիական բարքերի հիասքանչ անմիջականությունը: Վերջին ժամանակներս, Վալտեր Սկոտը, որը «անպատշաճ» լինելու ահից չի համարձակվել նկարագրել կանանց այնպես, ինչպես որ կան, խորապես զղջում էր, որ «Էդինբուրգի բանտում» կերտել է Էֆիի կերպարը:

— Ուզո՞ւմ ես «անպատշաճ» չլինել Անգլիայում, — հարցրեց Բիսիուն Ֆինոյին:

— Այո՛, ուզում եմ,— պատասխանեց Ֆինոն:

— Գնա՛ Տյուիլերի և այնտեղ կտեսնես մարմարից կերտված, հրշեջի նման ինչ-որ արձան, որը հեղինակի կողմից հորջորջվել է Թեմեստոկլես, և աշխատիք քայլել կոմանդորի արձանի նման, այդ դեպքում դու երբեք «անպատշաճ» չես լինի: Հենց «անպատշաճության» մեծ օրենքի խիստ կիրառումով էր, որ Գոդֆրուայի երջանկությունը դարձավ կատարյալ: Ահա թե ինչպես: Նա մի «վագր» ուներ և ոչ թե մի groom՝, ինչպես կասեին այն մարդիկ, որոնք ոչինչ չեն հասկանում աշխարհիկ կյանքից: Նրա «վագրը» իռլանդացի փոքր մի տղա էր, որը ըստ ցանկության կոչվում էր Պեդդի, Ջոբի, Տոբի. նրա հասակը երեք ոտնաչափ էր, լայնքը՝ քսան մատնաչափ, աքիսի էր նման, օղիով թրծված պողպատի ներվեր ուներ և ճկուն էր՝ ինչպես մի սկյուռ. կառքը վարում էր այնպիսի ճարպկությամբ, որ ոչ մի թերացում թույլ չէր տվել, ո՛չ Լոնդոնում, ոչ էլ Փարիզում. մոդեսի աչքեր ուներ, սուր ինչպես իմ աչքերը. ձի էր նստում, ինչպես ծեր Ֆրանկոնին. նրա մազերը Ռուբենսի նկարած կույսերի մազերի նման շեկ էին, այտերը՝ վարդագույն. ծածկամիտ էր ինչպես մի իշխան, զարգացած՝ ինչպես գործից քաշված մի փաստաբան. ընդամենը տասը տարեկան էր, բայց ամբողջապես ապականված էր, խաղամուլ էր և հայիոյոդ, սիրում էր ուտել անուշեղեն ու խմել պունչ և ֆելիետոնային լուտանքներ թափել. հանդուգն էր ու գող՝ ինչպես Փարիզի փողոցների մի ստահակ: Նա եղել էր հպարտությունն ու շահի աղբյուրը ինչ-որ նշանավոր անգլիացի լորդի, որի համար ձիարշավում շահել էր յոթ հարյուր հազար ֆրանկ: Լորդը այդ տղային շատ էր սիրում. նրա «վագրը» չափազանց հետաքրքիր էր. Լոնդոնում ոչ ոք նրա նման վագր չուներ. ձիարշավի ձիու վրա Ջոբին նման էր մի բազեի: Լորդը ազատեց Տոբիին, ո՛չ շատակերության համար, ո՛չ էլ գողության, ո՛չ մարդասպանության, ո՛չ վնասակար խոսակցության, ո՛չ անվայել վարմունքի, ո՛չ միլեդիի հանդեպ ցույց տված անպատկառության, ո՛չ միլեդիի առաջին սենակապանուհու գրպանները խուզարկելու, ո՛չ ձիարշավի ժամանակ միլորդի հակառակորդների կողմից կաշառված լինելու, ո՛չ էլ կիրակի օրերը անվայել զվարճություններ կատարած լինելու համար, վերջապես ո՛չ մի հանդիմանելի արարքի համար: Եթե Տոբին այդ բոլոր բաներում մեղանչեր, եթե նա նույնիսկ առաջինը խոսեր միլորդի հետ, այդպիսի հանցանքն էլ միլորդը կներեր: Նա այնքան էր սիրում Տոբիին, որ հանդուրժում էր նրա վատ արարքները: Նրա վագրը վարում էր երկանիվ մի կառք, լծված երկու ձիով, մեկը մյուսի հետևից: Նա երկրորդ թամբված ձիուն էր նստում այնպես, որ սրունքները կառքի քեղից ցած չէին ընկնում, նմանվելով այն հրեշտակների գլուխներից մեկին, որ իտալացի նկարիչներն են նկարում Հայր-աստուծո պատկերի շուրջը: Անգլիացի մի ժուռնալիստ տվեց հիանալի նկարագրությունը այս փոքր հրեշտակի և գտավ, որ նա շատ գեղեցիկ է, որպես վագրը և գրագ եկավ, որ Պեդդին ընտելացրած մի էգ վագր է: Այդ նկարագրությունը, թունոտ բնույթ էր կրում և համարվեց չափազանց «անպատշաճ»: Իսկ «անպատշաճությունը» հասցրած գերադրական աստիճանի, մահ է նշանակում: Միլեդին շատ գովեց միլորդին, շրջահայեցողության համար: Տոբին ոչ մի տեղ չկարողացավ աշխատանք ճարել այն բանից հետո, երբ նրա ինքնությունը կասկածի ենթարկվեց անգլիական գոռլոգիայում: Այդ ժամանակաշրջանում Գոդֆրուան բարգավաճում էր ֆրանսիական դեսպանատան մեջ՝ Լոնդոնում, որտեղ նա իմացավ Տոբիի, Ժոբիի, Պեդդիի արկածախնդրության մասին: Գոդֆրուան վերցրեց «վագրին», որին գտավ արցունքների մեջ՝ անուշեղենի մի փոքրիկ տուփի մոտ նստած, որովհետև երեխան արդեն վատնել էր այն դրամները, որոնցով միլորդը ոսկեգոծել էր նրա դժբախտությունը: Վերադարձին, Գոդֆրուա դը Բոդենորը իր հետ Ֆրանսիա բերեց Անգլիո ամենագեղեցիկ «վագրը». նա անուն հանեց իր «վագրով», ինչպես Կուսյուրը իր բաճկոնակներով: Դրա համար էլ հեշտությամբ ընդունվեց անդամ այն ակումբի, որն այժմ Գրոմմոն անունով է հայտնի: Դիպլոմատիկական ասպարեզից հրաժարվելուց հետո, Գոդֆրուան ոչ մի փառասիրության չէր ձգտում. նա բարեհոգի մարդ էր և

* Գրում — հեծյալ սպասավոր (անգլ.):

բոլորի կողմից լավ էր ընդունվում: Մենք մեր ինքնասիրությունը վիրավորված ենք համարում, երբ մեր շուրջը տեսնում ենք միայն ժպտացող դեմքեր, և ընդհակառակը հրճվում ենք, երբ տեսնում ենք նախանձոտ մարդկանց դառնացած դիմագծերը: Գողֆրուան արհամարհանքը չէր տանում: Ամեն մարդ իր ճաշակն ունի: Վերադառնանք իրականության, նյութական կյանքին: Նրա հարկաբաժինը, որտեղ ես զանազան առիթներով նախաճաշել եմ, աչքի էր ընկնում հարդարանքի խորհրդավոր մի առանձնասենյակով, որը լավ զարդարված էր, ուներ հանգստավետ հարմարություններ, բուխարի, լողարան, սանդուղքի վրա բացվող և անաղմուկ ծխնիներ ունեցող դուռ, կիսաթափանց ապակիներով և անթափանց վարագույրներով լուսամուտներ: Եթե Բողենորի սենյակը ներկայացնում էր գեղանկարչական այնպիսի անկարգ դրություն, որ կարող էր ցանկանալ ամենից պահանջկոտ ջրանկարիչը, եթե այնտեղ ամեն ինչ էլեգանտ երիտասարդի վարած բոհեմական կյանքի տեսքն ուներ, հարդարանքի սենյակը սրբավայրի էր նման — սպիտակ, մաքուր, ամեն ինչ կարգին, տաք, օդի ոչ մի անցք, տախտակամածը գորգով ծածկված, ասես նախատեսված էր, որ շապիկ հագած գեղեցկուհին մերկ ոտքերով կարողանա ցատկոտել: Դրանով կարելի է ճանաչել կյանքը հասկացող իսկական պճնամուլի հատկանիշը: Որովհետև այնտեղ նա մի քանի բուլետում կարող է հանդես բերել հիմարություն կամ մեծահոգություն կյանքի այն մանրուքներում, որոնցով մարդու բնավորությունն է հայտնաբերվում: Այն կոմսուհին, որի մասին հիշատակեցինք, ինչ-որ մեկի հարդարանքի սենյակից դուրս է եկել զայրացած և այնտեղ երբեք չի վերադարձել, չնայած նա այնտեղ «անպատշաճ» ոչինչ չի գտել: Գողֆրուան այնտեղ ուներ մի փոքր պահարան լեցուն...

— Կանացի բաճկոնակներով,— ասաց Ֆինոն:

— Ա՛յ դու հաստիկ Տյուրկարե: Ես քեզ երբեք չպիտի կարողանամ տաշել: Ոչ թե բաճկոնակներ, այլ կարկանդակներ, պտուղներ, Մալագա, լյունել գինու փոքր շշեր, մի խոսքով Լուդովիկոս XIV-ի ոգով մի հյուրասիրություն. այն ամենը, ինչ կարող է գոհացնել նուրբ ստամոքսները ազնվական տոհմից սերած ժառանգների: Ծեր ու խորամանկ մի ծառա, որը լավ վետերինար էր, խնամում էր ձիերին և հոգ տանում Գողֆրուային: Նա ծառայել էր հանգուցյալ պարոն Բողենորին և Գողֆրուայի վերաբերմամբ տածում էր հնամենի համակրանք, սրտի մի հիվանդություն, որից խնայողական դրամարկղները, ի վերջո, կարողացել են բուժել սպասավորներին: Նյութական բոլոր երջանկությունները թվերի վրա են հիմնված: Դուք, որ Փարիզի կյանքը գիտեք իր ուղն ու ծուծովը, դուք պիտի իմանաք, որ Գողֆրուային հարկավոր էր մոտ տասնյոթ հազար ֆրանկ եկամուտ, որովհետև նա ծախսում էր տասնյոթ ֆրանկ հարկերի համար և հազար էկյու էլ քմայքների համար: Այդպես ուրեմն, իմ սիրելի զավակներ, այն օրը, երբ Գողֆրուան իրեն համարեց չափահաս մարդ, մարկիզ դ'Էզլմոնը նրան ներկայացրեց խնամակալության այնպիսի մի հաշիվ, որպիսին մենք երբեք ընդունակ չենք տալու մեր թոռներին և նրան հանձնեց տասնյոթ հազար ֆրանկ արժողությամբ եկամուտի մի հաշվեցուցակ, որը հորենական հարստությունից մնացածն էր, հարստություն, պոկոտված ռեսպուբլիկայի գեղջերից և Կայսրության օրերի հապավված պարտքերից: Այդ առաքինի խնամակալը նրան հանձնեց նաև երեսուն հազար ֆրանկի մի գումար, որ ավանդ էր դրված Նյուսինգենի դրամատանը: Այս առթիվ ազնվականին վայել բարեհամբույր տոնով ու Կայսրության շրջանի զինվորին հատուկ անբռնազբոսիկությամբ նա հայտարարել էր, որ այդ գումարը նա նախատեսել է նրա երիտասարդական գծությունների համար. «Եթե ինձ լսես, Գողֆրուա,— ասել էր նա,— փոխանակ այդ գումարը անմիտ կերպով մսխելու, ինչպես շատերն են անում, օգտակար զեխություններ արա, Տուրինում դեսպանության կցորդի պաշտոն ստանձնիր, այնուհետև Տուրինից անցիր Նեապոլ, ապա Նեապոլից վերադարձիր Լոնդոն, այդպես ծախսելով փողը, դու թե՛ վայելք ստացած կլինես և թե՛ բան կտվորես: Հետագայում, եթե դու ցանկանաս մի կարիերա ձեռք բերել, դու ո՛չ քո ժամանակը և ոչ էլ քո փողը կորցրած կլինես»: Հանգուցյալ դ'Էզլմոնը իր համբավից ավելի լավ մարդ էր, նույնը մենք չենք կարող ասել մեր մասին:

— Այն երիտասարդը, որը քսան և մեկ տարեկան հասակում կյանք է մտնում տասնութ հազար ֆրանկ եկամուտով, կորած մարդ է համարվում,— ասաց Կուտյուրը:

— Եթե միայն ժլատ կամ շատ բարձրերից թռչող չէ,— ասաց Բլոնդեն:

— Գողֆրուան եղավ Իտալիայի չորս մեծ քաղաքներում,— վերսկսեց Բիսիուն:— Նա տեսավ Անգլիան ու Գերմանիան, կարճ ժամանակով եղավ Սանկտ-Պետերբուրգում, ճանապարհորդեց Հոլանդիայով, բայց նա վատնեց հիշյալ երեսուն հազար ֆրանկը, ապրելով այնպես, ասես երեսուն հազար ֆրանկի եկամուտ ունենար: Ամենուր նա ճաշակեց թռչունների մսից պատրաստված ընտիր խորտիկներ, ձկնեղեն և ֆրանսիական գինիներ, լսեց շատերի ֆրանսերեն խոսելը, ասես նա Փարիզից դուրս չէր եկել: Նա շատ էր ուզում ապականել իր սիրտը, այն գրահավորել, ձերբագատվել իր պատրանքներից, սովորել բոլոր մարդկանց լսել, առանց կարմրելու, խոսել, առանց մի բան ասելու, թափանցել պետությունների գաղտնիքներին... ո՛ր էր, թե կարողանար: Նա շատ դժվարությամբ կարողացավ յուրացնել չորս լեզու, այսինքն՝ յուրաքանչյուր հասկացողության համար չորս բառ ունենալ: Գողֆրուան վերադարձավ այրիացած՝ բազմաթիվ այրի ու տարեց, ձանձրացուցիչ կանանցից, մի բան, որ **բախտավորություն** անունն են տալիս արտասահմանում. վերադարձավ որպես երկչոտ, տհաս, բարի ու վստահելի մի մարդ, անկարող վատ բան ասելու այն մարդկանց մասին, որոնք պատիվ էին արել նրան իրենց մոտ ընդունելով, դիպլոմատ լինելու համար չափից դուրս բարեսիրտ, մի խոսքով, ինչպես ասում են, որպես հավատարիմ ու անկեղծ տղամարդ:

— Կարճ ասած, որպես մի անփորձ պատանի, որ պատրաստ էր իր տասնութ հազար ֆրանկ եկամուտը ամեն մի պատահական ակցիոների տրամադրության տակ դնելու,— ասաց Կուտյուրը:

— Այս սատանա Կուտյուրը այնքան է սովորել ավանսով ծախսելու իր շահաբաժինը, որ ուզում է ժամանակից առաջ բացել իմ պատմության հանգույցը: Որտե՞ղ էի հասել ես: Բողենորի վերադարձին: Երբ նա հաստատվեց Մալակե քարափում, պարզվեց, որ նրա կենսական պահանջներից դուրս իրեն հատկացված հազար ֆրանկը չէին բավարարում Իտալական թատրոնի և օպերայի օթյակների վարձը վճարելու: Երբ նա գրագ գալով կորցնում էր քսանհինգ կամ երեսուն ոսկեդրամ, բնականաբար վճարում էր. իսկ կրելու դեպքում, ծախսում էր շահածը. մի բան, որ կարող է պատահել մեզ հետ էլ, եթե այնքան հիմար լինենք, որ մեզ թույլ տանք գրագ գալու: Բողենորը, տեսնելով որ իր տասնութ հազար ֆրանկ եկամուտը չի բավարարում, պահանջ զգաց ստեղծելու այն, ինչ մեր օրերում անվանում ենք **շրջանառու կապիտալ**: Նա շատ էր զգուշանում, որ ինքը հանկարծ չխրվի պարտքի տակ: Նա գնաց իր խնամակալի մոտ խորհուրդ հարցնելու...— «Միրելի գավակս,— ասաց դեզլմոնը,— ռենտան այժմ անվանական սակագին ունի, վաճառիր քո ռենտան, ես վաճառել եմ իմ և կնոջս ռենտան: Նյուսինգենի մոտն է այժմ իմ ամբողջ կապիտալը, նա ինձ վճարում է վեց տոկոսը, դու էլ ինձ նման արա, և կստանաս մի տոկոս էլ ավելի, և այդ մեկ տոկոսը թույլ կտա քեզ ապրել ամենայն հանգստությամբ»: Երեք օր հետո, մեր Գողֆրուան արդեն հանգիստ կյանք էր վարում: Նրա եկամուտը կատարյալ հավասարակշռության մեջ լինելով ավելորդ ծախսերի հետ, նրա նյութական երջանկությունը դարձավ կատարյալ: Եթե հնարավոր լիներ միանգամից հարց տալ Փարիզի բոլոր երիտասարդ մարդկանց (մի բան, որ կարծես թե լինելու է վերջին դատաստանի ժամանակ միլիարդներով այն սերունդների համար, որոնք երկրագնդի վրայով տիղմերի մեջ քայլել են, թե՛ որպես պահակագոր, թե՛ որպես վայրենի), հարց տալ նրանց բոլորին, թե քսանվեց տարեկան մի երիտասարդի երջանկությունը արդյոք չի՞ կայանում նրանում, որ կարող է դուրս գալ ձիով, տիլբուրիով կամ կաբրիոլետով, հետը բռնացքի մեծության մի «վագր», թարմ ու վարդագույն, ինչպես Տոբին, Ժոբին — Պեդդին, երեկոյան ունենալ տասներկու ֆրանկով վարձու մի կուպե, շատ պատշաճ ու հանգստավետ, ներկայանալ միշտ

շնորհալի ու վայելուչ կերպով հագնված՝ ըստ նորաձևության օրենքների, որ ընդունված է օրվա հատուկ պահերի՝ առավոտյան ժամը ութի, կեսօրվա ժամը չորսի և, երեկոյան համար, բոլոր դեսպանատներում լավ ընդունելություն գտնել և պոկել տարբեր ազգերի ներկայացուցիչների մակերեսային բարեկամության վաղանցուկ ծաղիկները, լինել տանելի գեղեցկությամբ և լավ պահել իր անունը, իր հագուստը և իր գլուխը. ապրել մի սիրուն միջնահարկում, որը կարգի բերված լինի ինչպես իմ նկարագրած միջնահարկն էր Մալակեի քարափում. հնարավորություն ունենալ բարեկամներին հրավիրելու **«Ռոշե դը Կանկալ»**, առանց նախապես ստուգելու, թե ի՞նչ ունի գրպանում և երբեք իրեն չկորցնի, երբ կանգնի հարցականի առաջ՝ իսկ փո՞ղը. կարենալ փոխել իր երեք գտարյուն ձիերի գլուխը զարդարող վարդագույն փնջերը և միշտ նոր աստառ ունենալ իր գլխարկին:

Մենք բոլորս էլ, ականավոր մարդիկ, բոլորս էլ պիտի ասենք, որ այդ երջանկությունը կատարյալ չէ, որ դա առանց խորանի մի Մադելեն եկեղեցի է, պիտի ասենք, որ պետք է սիրել և սիրվել, կամ սիրել, առանց սիրվելու, կամ սիրվել, առանց սիրելու, և կամ կարենալ սիրել ո՞ւմ և ինչպե՞ս ուզում ես: Այժմ խոսենք հոգեկան երջանկության մասին: 1823 թվականի հունվար ամսին, երբ Գոդֆրուան արդեն կարգի էր բերել իր գործերը, երբ Փարիզի տարբեր հասարակությունների մեջ տեղ ու լեզու էր գտել և հաճախում էր, որտեղ նրան դուր էր գալիս, նա պահանջ զգաց պատսպարվելու կանացի հովանոցի տակ, սկսեց գանգատվել աշխարհիկ կնոջ սառնասրտությունից, գանգատվեց, որ չի կարող ծամել տիկին Պրեվոյից տասը սուռվ գնած վարդի կոթունը, այն երիտասարդների նման, որոնք կոթկոթում են օպերայի միջանցքներում, վանդակում պահվող հավերի նման: Վերջապես, նա վճռեց հաղորդել իր զգացումները, իր գաղափարները, իր համակրությունը մի կնոջ, **մի կնոջ**, ա՛հ, կին: Սկզբում նա միտք հղացավ անպատեհ մի սիրո, որոշ ժամանակ սկսեց պտտվել իր սքանչելի զարմուռու, տիկին դ'Էգլմոնի շուրջը, առանց անդրադառնալու, որ ինչ-որ դիպլոմատ արդեն պարել էր նրա հետ «Ֆաուստի» վալսը: 1825 թվականը նա անցկացրեց փորձեր, որոնումներ և ապարդյուն կոկետություն անելով: Նրա սիրո պահանջած առարկան չգտնվեց: Կրքերը չափազանց հազվագյուտ են: Այդ ժամանակներում ինչքան պատնեշներ կային փողոցներում, նույնքան էլ կային բարքերում: Իսկապես, եղբայրնե՛ր, հավատացե՛ք ինձ, «անպատշաճ»-ը մեզ մոտ էլ է հասել: Քանի որ մեզ մեղադրում են նրանում, որ մենք նկարիչ-պորտրետիստների, աուկցիոնիստների և մոդիստների հետքերով ենք ընթանում, ես ուզում եմ ձեզ ազատել այն անձի նկարագրությունից, որի մեջ Գոդֆրուան ճանաչեց իր ապագա սիրածին: Տարիքը՝ տասնինը, հասակը՝ մեկ մետր հիսուն սանտիմետր, մազերը՝ խարսոյաշ, ունքերը՝ *idem*^{*}, աչքերը՝ կապույտ, ճակատը՝ միջակ, քիթը՝ կորնթարդ, բերանը՝ փոքր, կզակը՝ կարճ և կոր, դեմքը՝ ձվաձև. մասնավոր նշաններ՝ չիք: Այս է անձնագիրը սիրված էակի: Մի՛ լինեք ավելի խստապահանջ, քան ոստիկանությունը, քան մերերը Ֆրանսիայի բոլոր քաղաքների և համայնքների, քան ժանդարմները և այլ բարձրագույն իշխանությունները: Բացի այդ, երդվում եմ, որ նա իսկնիսկ Մեդիչիի Վեներայի արձանն էր: Երբ առաջին անգամ Գոդֆրուան գնաց տիկին դը Նյուսինգենի մոտ, որը նրան հրավիրել էր մասնակցելու այն պարահանդեսներից մեկին, որոնց միջոցով տիկին Նյուսինգենը հեշտությամբ ձեռք բերեց որոշ հոշակ, Գոդֆրուան կադրիլի պարի ընթացքում այնտեղ նշմարեց իր սիրույն արժանի անձը և հրապուրվեց նրա մեկ մետր հիսուն սանտիմետր հասակով: Նրա խարսոյաշ վարսերը փրփրացող ջրվեժի նման թափվում էին պարզունակ, փոքրիկ թարմ դեմքի վրա, նման հավերժահարսի, որ ակնադբյուրի բյուրեղյա լուսամուտին հենած դիտում է զարնան ծաղիկները: (Մա մեր նոր ոճն է. նախադասություններ, որոնք երկարում են, ճիշտ այնպես, ինչպես մեր նոր կերած մակարոնները:) Հոնքերի խարսոյաշ գույնը, ոստիկանական պրեֆեկտուրը թող մեզ ների, վեց բանաստեղծություն գրելու առիթ կտար քնքուշ պոետ Պառնիին⁶, այս վառվռուն

* Նույնպես (լատ. .):

բանաստեղծը նրա հոնքերը մեծ հաճույքով պիտի համեմատեր Կյուպիդոնի աղեղի հետ, նշելով, նաև, որ նետը թաքնված էր դրանց ներքև, թեև այդ նետը սուր ծայրեր չուներ, ներքևում էր, որովհետև այսօր էլ դեռ հարգի է ոչխարային այն հեզ գեղեցկությունը, որ բուխարիների առաջամասի քարե նկարների մեջ է արտահայտվում և որը վերագրվում է տիկին դը լա Վալիերին, երբ նա քնքշությամբ խաչակնքում է աստծո առաջ, քնքշություն, որ նա չէր կարողացել վավերացնել նոտարի առաջ:

Դուք գիտեք այն ազդեցությունը, որ գործում են խարտյաշ վարսերն ու կապույտ աչքերը, միախառնված մեղմ, հեշտալի ու վայելուչ պարի հետ: Երիտասարդ խարտիշահեր կինը պարելիս հանդուգն կերպով սիրտը չի գրավում թուխ կանանց նման, որոնք իրենց հայացքով կարծես ուզում են ասել իսպանական մուրացիկների նման. «Քսա՛կդ, կամ կյա՛նքդ. հինգ ֆրանկ ողորմություն, կամ թե չէ ես քեզ կարհամարհեմ»: Այս անպատկառ (և փոքր-ինչ վտանգավոր) գեղեցկությունը կարող է դուր գալ շատ տղամարդկանց, բայց ըստ իս, խարտյաշ կինը, որը չափազանց մեղմ ու սիրալիր երևալու բարեբախտությունն ունի, առանց կորցնելու հանդիմանելու, բարկացնելու, շատախոսելու, ստից խանդելու իր իրավունքը և անելու այն ամենը, ինչ կին արարածին դարձնում է պաշտելի — այդպիսին միշտ կլինի ավելի ապահով ամուսնական հարցում, քան կրակոտ թուխը: Ճակատին եղջյուր ունենալը թանկ է նստում:

Իզոբրը, սպիտակ ինչպես ալգասցիներն են (նա լույս աշխարհ եկավ Ստրասբուրգում և շատ դուրալի խոսում էր գերմաներեն՝ փոքր-ինչ ֆրանսիական ակցենտով), պարում էր հիանալի: Նրա ոտքերը, որոնք նշված չէին ոստիկանական պաշտոնյայի կողմից, և որոնք սակայն հեշտությամբ կարող էին տեղ գտնել **բնորոշ հասկանիչներ**ի ռուբրիկայում, նշանավոր էին իրենց փոքրությամբ և պարելու ժամանակ կատարած այն շարժումներով, որ պարի հին ուսուցիչները անվանել են **ֆլիկ-ֆլակ**. այդ ոտքերը կարելի էր համեմատել օրիորդ Մարսի հրապուրիչ խոսելու եղանակի հետ, որովհետև բոլոր մուսանները քույրեր են, և թե՛ պարողի, թե՛ բանաստեղծի ոտքերը հավասարապես երկրի վրա են: Իզոբրի ոտքերը խոսում էին սրտի հետ կապված գործի մասին հիանալի հստակությամբ, ճշգրտությամբ, թեթևությամբ ու արագությամբ: «Նա **ֆլիկ-ֆլակ** ունի». այս խոսքը Մարսելի ամենաբարձր գովասանական արտահայտությունն էր, այն Մարսելի, որը պարի միակ ուսուցիչն էր հանդիսանում և արժանացել էր «մեծն» տիտղոսին: Նրան հիշելիս, ասում էին մեծն Մարսելը, ինչպես մեծն Ֆրիդրիխ՝ Ֆրիդրիխի ժամանակաշրջանում:

— Նա հեղինակե՞լ է բալետներ,— հարցրեց Ֆինոն:

— Այո՛, ինչ-որ «Չորս տարրերը» և «Գալանտ Եվրոպան» կոմպոզիցիաների նման:

— Այդ ի՛նչ ժամանակներ էին, երբ ավատապետներն իրենք էին բալետի պարուհիներին հագցնում,— բացականչեց Ֆինոն:

— «Անպատշաճ» է,— հարեց Բիսիուն:— Իզոբրը իր ոտքերի ծայրերի վրա չէր բարձրանում, նա գետնից չէր կտրվում, օրորվում էր, առանց ցնցումների և նրա օրորումներում այնքան հեշտանք կար՝ ինչքան լինում է երիտասարդ մի աղջկա մոտ: Մարսելը խոր փիլիսոփայելով ասում էր, որ յուրաքանչյուր հասարակական դրություն ունի իր յուրահատուկ պարը — ամուսնացած կինը՝ չպետք է պարի երիտասարդ աղջկա նման, ոչ էլ դատավորը՝ ֆինանսիստի նման և զինվորականը՝ մանկլավիկի նման. նա նույնիսկ այնքան հեռուներն էր գնում, որ պնդում էր, թե հետևակ զինվորի պարելը ձիավորի պարելուն չի նմանում. և հենց այս տեսանկյունից դատելով, նա փորձում էր վերլուծել ամբողջ հասարակությունը: Այս բոլոր երանգներից մենք շատ հեռու ենք մնացել:

— Ա՛հ,— ասաց Բլոնդեն,— դու մատդ ճիշտ վերքի վրա ես դնում: Եթե Մարսելին հասկանային, ֆրանսիական ռնոյուցիան տեղի չէր ունենա:

— Գողֆրուան,— շարունակեց Բիսիուն,— Եվրոպայում ճանապարհորդելով, օգուտ չէր ունենա, եթե խորապես չուսումնասիրեր օտար երկրների պարերը. նա այդ դեռատի պարուհուն թերևս չսիրեր, եթե խոր իմացություն չունենար խորեոգրաֆիայի մասին, որը անօգուտ բան է համարվում: Սակայն Սեն-Լագար փողոցի շքեղ դահլիճներն շտապող երեք հարյուր հրավիրյալների մեջ նա միակն էր, որ կարողացավ հասկանալ չհրապարակված այն սերը, որ բացահայտվում էր այնքան պերճախոս պարով: Բոլորի ուշադրությունն էր գրավել Իգոր դ'Ալդրիգերի պարելու եղանակը. բայց ներկա դարաշրջանում, երբ ամեն ոք գոչում է — «սահենք, չհենվենք», հրավիրյալներից մեկն ասում է.— «Ահա ձեզ մի դեռատի աղջիկ, որն անչափ գեղեցիկ է պարում» (դա մի նոտարի գրագիր էր), մեկ ուրիշը հայտարարում է.— «Ահա խատուտիկ մի էակ, որը հրապուրելու աստիճան լավ է պարում» (այդ ասողը Կայսրության ժամանակի գլխազարդով մի կին էր). երրորդը, երեսնամյա մի կին,— «Ահա, մանկահասակ մի աղջիկ, որը վատ չի պարում»: Վերադառնանք, այժմ մեծն Մարսելին և ծաղրելով կրկենք նրա ամենահեռակավոր խոսքը. «Այդ որքա՛ն իմաստ կա կադրիլի մի ֆիգուրի մեջ»:

— Մի քիչ արագ շարժվենք,— ասաց Բլոնդեն,— մանրամասնությունների մեջ շատ ես մտնում:

— Իգորը,— շարունակեց Բիսիուն, աչքի տակով նայելով Բլոնդեին,— հազին ուներ սպիտակ մետաքսից հասարակ մի շրջագետտ, զարդարված կանաչ ժապավեններով, մի կամելիա վարսերի մեջ, մի կամելիա իր գոտու վրա, մի կամելիա էլ...

— Օ՛հ, դա նման է Սանչոյի երեք հարյուր այծերին:

— Դա, ամբողջ մի գրականություն է, սիրելիս. «Կլարիս» մի գլուխգործոց է, բաղկացած տասնչորս հատորներից. իսկ օպերետաներ հորինող մի թանձրամիտ հեղինակ կարող է այն պատմել մի գործողության մեջ: Կարևորն այն է, որ ես զվարճացնում եմ, էլ ինչու ես զանգատվում: Իգորի տուալետը հիանալի էր. մի՞թե դու չես սիրում կամելիա: Դահլիճներ ե՞ս ուզում: Ո՛չ: Լավ ուրեմն, ահա քեզ մի շագանակ,— ասաց Բիսիուն և անտարակույս Բլոնդեին շաքտեց մի շագանակ, որովհետև մենք լսեցինք ափսեի վրա դրա ընկնելու ձայնը:

— Շարունակի՛ր,— ասաց Բլոնդեն հաշտվող մարդու արտահայտությամբ:

— Շարունակում եմ,— ասաց Բիսիուն:

«Ա՛յ թե ո՛ւմ հետ կարելի է ամուսնանալ»,— ասում է Ռասստինյակը Բողենորին, ցույց տալով դեռատի պարուհուն, որի անբիծ սպիտակ կամելիայի քնքուշ թերթիկները չէին պոկվել: Ռասստինյակը Գողֆրուայի մտերիմ ընկերներից էր.— «Ես հենց դրա մասին էի մտածում,— Ռասստինյակի ականջին թեքվելով ասում է Գողֆրուան:— Ես ինձ հարց էի տալիս, թե փոխանակ յուրաքանչյուր բոլոր անձնական երջանկության մեջ սարսռալու, փոխանակ մեծ դժվարությամբ մեկի անուշադիր ականջին մի քանի բառ շնչալու, փոխանակ Իտալական թատրոնում նայելու, թե վարսերի մեջ կարմիր կամ սպիտակ ծաղիկներ կա՞ն, կամ Բուլոնյան անտառում ո՞ր կառքի դռնակի վրա է երևում ձեռնոցով ձեռք, ինչպես այդ պատահում է Միլան քաղաքում, Կորսույի վրա, փոխանակ դռների հետևում գաղտնորեն կարկանդակներ կուլ տալու, այն սպասավորին, որ դատարկում է գինու շիշը, փոխանակ զարդարելու իր խելքն ու միտքը նամակներ առնել ու տալ, ինչպես մի փոստատար, փոխանակ անհուն քնքշանք արտահայտող երկու տող ընդունելու, փոխանակ մի օր հինգ միաձալ հատոր կարդալու և հաջորդ օրը երկու էջով պատասխանն

ուղարկելու, մի բան, որ ձանձրալի է, փոխանակ կառքի անվահետքերի և մացառների միջով քաշ գալու, ավելի լավ չէ՞ Ժ. Ժ. Ռուսոյի սիրած կրքով տարվել, պարզապես սիրել Իզոբել նման մի դեռատի աղջկա, նպատակ ունենալով նրան դարձնել քո կինը, եթե զգացումների փոխանցման ընթացքում սրտերը համընկնեն. մի խոսքով, դառնալ երջանիկ Վերթեր»:

«Դա սովորական դարձած ծիծաղելի բաներից է,— ասաց Ռասսոինյակը, առանց ծիծաղելու:— Քո տեղը թերևս ես ինձ զցեի այդ ասկետիզմի անհուն հեշտանքի մեջ, դա նոր տեսակի ասկետիզմ է, ինքնատիպ է և էժան: Քո **Մոննա Լիզան** չքնաղ է, բայց զգուշացնում եմ քեզ, նա անմիտ է, ինչպես բալետի երաժշտությունը»: Այս վերջին խոսքի արտահայտության տոնից Բոդենորը ենթադրեց, որ իր բարեկամը շահագրգռված է իրեն հիասթափեցնելով և որպես նախկին դիպլոմատ, նա Ռասսոինյակի մեջ տեսավ իր հակառակորդին: Անհաջողությունը իր կնիքն է դնում մարդու ողջ կյանքի վրա: Գոդֆրուան օրիորդ Իզոբել դ'Ալդրիգերին այնքան սաստիկ սիրահարվեց, որ Ռասսոինյակը հարկ համարեց մոտենալու թղթախաղի դահլիճում գրույցով բռնված բարձրահասակ մի աղջկա և նրա ականջին ասաց.— «Մալվինա, քո քույրը հենց նոր իր ուղևորի մեջ մի ձուկ է զցել, որը տասնութ հազար լիվր եկամուտի ծանրություն ունի. հասարակության մեջ նա ունի անուն, տեղ և դիրք: Հսկի՛ր նրանց վրա: Եթե նրանց սիրո գործը լավ ընթացք ստանա, այնպես արա, որ լինես Իզոբել մտերիմ խորհրդակիցը և թույլ չտաս, որ նա որևէ անմտածված խոսք ասի»: Գիշերվա ժամը երկուսի մոտ, սենեկապանը մոտեցավ **«Ռոն Ժուան»** օպերայի Յեռլինայի չափ կոկետ, փոքրակազմ, քառասուն տարեկան ալպյան մի հովվուհու, որի մոտ Իզոբել էր կանգնել և ասաց.— «Բարոնուհու կառքը պատրաստ է»: Այնժամ Գոդֆրուան տեսավ գերմանական բալլադների իր գեղեցկուհուն, որը իր ֆանտաստիկական մորը քաշեց տարավ նախասրահ, որտեղ այս երկու կանանց հետևեց Մալվինան: Գոդֆրուան ձևացնելով, որ գնում է իմանալու, թե ո՞ր անուշեղենի բանկայի մեջ է կույ լեկել Ժորին (ի՛նչ միամտություն) բախտ ունեցավ տեսնելու Իզոբելին և Մալվինային, որոնք իրենց կայտառ մորը փաթաթում էին մուշտակով, և օգնում էին նրան այն հորդորանքներով, որ անհրաժեշտ են Փարիզում, գիշերային ճանապարհորդություն կատարելիս: Երկու քույրերը իրենց աչքի տակով գնում էին Գոդֆրուային այն վարժ կատուների նման, որոնք մկան են նայում, իբր առանց ուշադրություն դարձնելու: Գոդֆրուան որոշ բավականություն զգաց, տեսնելով սպասավորական համագգեստով, լավ ձեռնոցներով բարձրահասակ ալգասցու կեցվածքը, շարժումներն ու տոնը, երբ իր երեք տիրուհիների մուշտակավոր մեծ կոշիկներն էր բերում: Երբեք երկու քույրեր իրարից այնքան չեն տարբերվել, ինչքան Իզոբել ու Մալվինան: Մեծ քույրը բարձրահասակ էր և թուխ, Իզոբել փոքրակազմ և նուրբ, մեկի դիմագիծը քնքուշ էր ու գողտրիկ, մյուսինը՝ ուժեղ և ցայտուն. Իզոբել այն կանանցից էր, որոնք իշխում են իրենց թուլությամբ և այդ այն աստիճան, որ լիցեականը իրեն պարտք է համարում իր պաշտպանության տակ առնելու. Մալվինան նմանվում էր «Տեսե՛լ էք Բարսելոնը» պոեմի հերոսուհուն: Քրոջ կողքին Իզոբել ասես յուղաներկ մի պորտրետի մանրանկարը լիներ: Պարասրահը վերադառնալիս Գոդֆրուան ասաց Ռասսոինյակին. «Նա հարո՞ւստ է:— Ո՞վ:— Այս երիտասարդ աղջիկը:— Ա՛հ, Իզոբել դ'Ալդրիգե՞րը: Դե, իհարկե: Նրա մայրը այրի կին է, իսկ հայրը Նյուսիսգենին ընդունել էր իր մոտ աշխատանքի Մտրասբուրգում: Ուզո՞ւմ ես Իզոբելին նորից տեսնել. տիկին Ռեստոյին մի երկու կոմպլիմենտ արա և նա քեզ կհրավիրի այն պարահանդեսին, որ երկու օր հետո կազմակերպելու է, այնտեղ կլինեն նաև բարոնուհի դ'Ալդրիգերը և իր երկու դուստրերը»: Հաջորդող երեք օրերի ընթացքում, Գոդֆրուան իր ուղեղի մթին խցերում տեսնում էր իր Իզոբելին, նրա դեմքի արտահայտությունները և սպիտակ կամելիաները, ճիշտ այնպես, ինչպես երկար ժամանակ լուսավորված մի առարկա տեսնելուց հետո, փակ աչքերով այն նորից ենք տեսնում փոքրացած ձևով, և որ մթի մեջ շողշողում է լուսաճաճանչ ու գունագեղ:

— Բիսիու, դու ֆենոմենալ մարդ ես, մեզ էլի՛ ուրիշ այդպիսի նկարներ տուր,— ասաց Կուստյուրը:

— Ահավասիկ,— հարեց Բիսիուն, կաֆեի սպասյակի դիրք ընդունելով,— ահավասիկ, պարոնայք, ձեր պահանջած նկարը: Ուշադրություն, Ֆինո, պետք է սանձահարել քո բերանը, ինչպես սանձահարում է հանրակառքի կառապանը իր անպետք ձիուն: Տիկին Թեոդորա — Մարգարիտա — Վիլհելմինա Ադոլֆուսը (Ադոլֆուս և ընկերություն Բանկից, ի Մանհեյմ), պարոն դ'Ալբրիգերի այրին պարզամիտ ու հաստ, ամրակուռ և խոհական, սպիտակ մագերով մի գերմանուհի չէր, գարեջրի փրփուրի նման դեղնավուն դեմքով, օժտված նահապետական այն բոլոր առաքինություններով, որով Գերմանիան, վիպական ոճով ասած, հռչակվում է: Նրա դիմագիծը դեռևս թարմ էր, Նյուրենբուրգում պատրաստված տիկնիկների նման վառ այտերով, քունքերի վրա գանգուր խոպոպներով, աչքերը հրապուրիչ էին, ոչ մի սպիտակ մագ չունեի, իրանը բարակ էր և կրծկալ ունեցող շրջագգեստի շնորհիվ դրսևորվել էին նրա հավակնությունները: Ճակատի և քունքերի վրա նա ուներ մի քանի վաղահաս կնճիռներ, որ նա շատ կցանկանար Նինոն դը Լանկլոյի նման տեղափոխել իր կրունկների վրա, սակայն նրանք — այդ զիգագները — համառում էին մնալ նրա դեմքի ամենաակնառու մասերում: Նրա քթի շուրջը թառամել էր և ծայրը կարմրել, մի հանգամանք, որ ավելի մտահոգիչ էր, որովհետև ներդաշնակություն էր ստեղծում այտերի գույնի հետ: Լինելով միակ ժառանգորդուհին, շփացած իր ծնողների, իր ամուսնու, Ստրասբուրգի բնակիչների և իր երկու դուստրերի կողմից, որոնք պաշտում էին նրան, բարոնուհին իրեն թույլ էր տալիս հագնվել վարդագույն շորեր, կարճ շրջագգեստ, գոտին կապել կրծկալի մոտ, որը ցայտուն էր դարձնում նրա սլացիկ իրանը: Երբ մի փարիզեցի տեսնում էր այս բարոնուհուն բուլվարով անցնելիս, ժպտում էր ու դատապարտում նրան, առանց հաշվի առնելու մեղմացուցիչ հանգամանքները, ի տարբերություն ժամանակակից դատարանների, որոնք դրանք հաշվի են առնում նույնիսկ եղբայրասպանության ոճրի կապակցությամբ վճիռ կայացնելիս: Ծաղրող մարդը միշտ էլ մակերեսային էակ է և հետևաբար՝ անգութ. այդ սնամիտը երբեք հաշվի չի առնում, որ հասարակությունը իր բաժինն ունի ծիծաղելի այն երևույթի մեջ, որի վրա ծիծաղում է ինքը, որովհետև բնությունն ստեղծում է լոկ անբան էակներ, իսկ հիմարները հասարակական կարգի արդյունք են:

— Այն, ինչ ես գտնում եմ գնահատելի Բիսիուի մոտ,— ասաց Բլոնդեն,— դա նրա ինքնավստահությունն է: Երբ նա ուրիշներին չի ծաղրում, ծաղրում է ինքն իրեն:

— Բլոնդե, ես քեզ կհատուցեմ դրա համար,— սպառնական տոնով պատասխանեց Բիսիուն:— Եթե փոքրիկ բարոնուհին եղել է թեթևամիտ, անփույթ, էգոիստ, հաշիվ չիմացող, այդ թերությունների պատճառը պետք է փնտրել Մանհեյմի Ադոլֆուս և ընկերություն Բանկի մոտ և պարոն դ'Ալբրիգերի կույր սիրտ մեջ: Բարոնուհին հեզ ու հլու էր գառնուկի նման. նա քնքուշ, գթոտ սիրտ ուներ, որ շատ էր հուզվում, սակայն դժբախտաբար այդ հուզումը կարճատև էր և կրկնվում էր հաճախակի: Երբ բարոնը մահացավ, քիչ մնաց, որ հուվովուհին էլ նրա հետևից գնար, այնքան ուժգին, այնքան անկեղծ էր նրա վիշտը, բայց հաջորդ օրը, նախաճաշին, նրան մատուցեցին ոլոռնով պատրաստված ճաշ, որը շատ էր սիրում, և այդ համով փոքրիկ ոլոռները մեղմացրին բարոնուհու տագնապը: Նա այնքան կուրորեն սիրված էր իր երկու դուստրերի, իր սպասավորների կողմից, որ տնեցիները ուրախացան, երբ հաջողեցին բարոնուհուն հեռու պահել հուղարկավորության ողբալի տեսարաններից: Նրա դուստրերը — Բոդորը և Մավլինան — նրանից թաքցնում էին իրենց արցունքները և **ռեքվիեմ** երգելու ժամանակ նրա ուշադրությունը ցրում էին սգի հագուստների ձևի ընտրությամբ և պատվերով: Երբ մի դագաղ է դրվում մեծ, սպիտակ մի դիակառքում, որի վրա մոմեր են կաթել և որը երեք հազար կարգին մարդկանց դիակների է սպասարկել, ըստ այն փիլիսոփա դագաղակրի հաշիվների, որի հետ երկու բաժակ սպիտակ գինի խմելիս զրույց եմ ունեցել, երբ ցածր դասի դպիրները առանց զգացմունքի ծոր են տալիս *Dies irae**-ն,

* Կաթոլիկական աղոթք՝ մահվան արարողության ժամանակ:

երբ քահանան ոչ պակաս անտարբերությամբ կատարում է ժամասացությունը, գիտե՞ք թե ինչ են ասում հանգուցյալի սգազգեստ բարեկամները եկեղեցում՝ նստած կամ ոտքի վրա (ահավասիկ պահանջված նկարը): Ահա, տեսնո՞ւմ եք դուք նրանց:

— Ձեր կարծիքով ինչքա՞ն հարստություն թողած կլինի հայր դ'Ալդրիգերը,— ասում էր Դերոշը Տայֆերին, որն իր մահից առաջ մեզ համար հոյակապ օրգիա սարքեց...

— Մի՞թե Դերոշը դատապաշտպան է եղել այդ ժամանակ:

— Նա իր գրասենյակը ձեռք բերեց 1822 թվականին,— ասաց Կուսյուրը:— Դա հանդուգն քայլ էր մի մարդու համար, որը տարեկան հազիվ հազար ութ հարյուր ֆրանկ շահող մի մանր աստիճանավորի և դրոշմաթղթեր վաճառող մի կնոջ որդի էր: Սակայն նա 1818—1822 թվականներին աշխատեց ինչպես մի թիապարտ: Չէ՞ որ Դերվիլի մոտ նա ընդունվեց, որպես չորրորդ կարգի գրագիր, իսկ 1819 թ. դարձավ երկրորդ կարգի:

— Դերո՞շը:

— Այո,— ասաց Բիսիուն.— Դերոշը, մեզ նման, թավալ տվեց Հոբի աղբակույտի վրա: Չափազանց կարճ թեզանիքներով, շատ նեղ հագուստներ կրելուց ձանձրացած, նա հուսահատությունից, անգիր անելու աստիճան սովորեց իրավաբանություն և հավատարմատարի կոչում ձեռք բերեց: Նա դատապաշտպան էր դարձել, առանց գրոշի, առանց հաճախորդի, մեզնից բացի ուրիշ բարեկամ չունենալով և՛ պարտավորվել էր վճարել գրասենյակի պարտքը և գրավ մուծել:

— Այն ժամանակ նա ինձ վրա թողնում էր կենդանաբանական այգուց դուրս պրծած մի վագրի տպավորություն,— ասաց Կուսյուրը:— Նիհար, շեկ մազերով, իսպանական ծխախոտի գույնի աչքերով, թթված, սառն ու ֆլեգմատիկ, սակայն իր վերաբերմունքով դաժան՝ այրի կնոջ հետ, դժնի՝ որբի նկատմամբ, ահա քեզ Դերոշը. նա աշխատասեր էր և սարսափ էր ներշնչում իր գրագիրներին, որոնք պարտավոր էին անդադրում աշխատել. նա, իրազեկ մարդ էր, հնարագետ, երկերեսանի, քաղցր ու մեղցր զրուցող, երբեք չէր զայրանում և քինախնդիր էր, ինչպես դատամուլ մի պաշտոնյա:

— Սակայն պետք է ասել, որ նա լավ կողմեր էլ ունի,— բացականչեց Ֆինոն:— Նա հավատարիմ է իր բարեկամների նկատմամբ և նա դա ցույց տվեց նրանով, որ իր մոտ, որպես ավագ գրագիր աշխատանքի ընդունեց Գոդեշալին, Մարիետի եղբորը:

— Փարիզում,— ասաց Բլոնդեն,— դատական գործերով զբաղվող մարդիկ երկու տեսակ են. կա մի տեսակ, որը մնում է օրենքի սահմաններում, առաջ է մղում դատը, հաճախորդի հետևից չի ընկնում, ոչինչ չի անտեսում, ուղղամտությամբ խորհուրդ է տալիս իր հաճախորդներին, և վիճելի հարցերում հաշտության եզրեր է փնտրում, մեկ խոսքով, այդպիսին իսկական մի Դերվիլ է. սակայն կա և սովալլուկ տիպը, որի համար ամեն ինչ լավ է համարվում, պայմանով, որ դատական ծախսերը ապահովված լինեն: Այդպիսին փուլ կտար ոչ թե լեռներ (նա դրանք վաճառում է), այլ մոլորակներ. նա հանձն կառնեք ապահովել մի ստահակի հաղթանակը պատվավոր մարդու դեմ, երբ պատահաբար այս վերջինը ձևական մի սխալ է գործել: Երբ այսպիսի պաշտպաններից մեկն ու մեկը դիմի ակնհայտ խաբեության, դատարանը նրան կզրկի իր պրոֆեսիան կիրառելուց: Դերոշը, մեր բարեկամ Դերոշը, յուրացրեց և պատվով կատարեց այդ արհեստը, որով զբաղվում էին խեղճ ու կրակ մարդիկ: Նա փողով դատեր էր գնում այն մարդկանցից, որոնք դրանք կորցնելու երկյուղից դողում էին, ապա նա դիմում էր զարտուղի ճանապարհներին, չքավորությունից ազատվել ցանկացող մարդու վճռականությամբ: Նա գործեց խելամոռրեն, նա հովանավորներ գտավ քաղաքական այն մարդկանց շրջանում, որոնց իր ճարպիկ մանևրներով ազատել էր խճճված

դատական գործերից, ինչպես այդ պատահեց մեր սիրելի Լուսյոյի հետ, որին ազատեց վտանգավոր դրությունից: Այս բոլորն անհրաժեշտ էր, որովհետև դատարանում սկսել էին վատ աչքով նայել Դերոշին, որը ջանադիր ուղղում էր իր հաճախորդների սխալները: Դե, բավական է, Բիսիու, շարունակի՛ր... Դերոշը ինչո՞ւ էր եկել եկեղեցի:

— ԴԱլդրիգերը թողել է յոթից ութ հարյուր հազար ֆրանկ,— պատասխանեց Տայֆերը Դերոշին:— Ի՞նչ եք ասում. միայն մի մարդ կա, որը գիտե նրանց հարստության մասին,— ասում է Վերբրուստը՝ հանգուցյալի բարեկամներից մեկը:— Ո՞վ է այդ մարդը: Խարդախ դը Նուսինդենը. նա կգնա մինչև գերեզմանատուն. դ՛Ալդրիգերը նրա պատրոնն է եղել և երախտիքը չմոռանալու համար նա շրջանառության մեջ էր դնում այդ մարդու կապիտալը:

— Այժմ ուրեմն այրիի կյանքում մեծ փոփոխություն է լինելու:

— Դրանով դուք ի՞նչ եք ուզում ասել:

— ԴԱլդրիգերը շատ էր սիրում իր կնոջը: Մի՛ ծիծաղեք, մեզ են նայում: Ահա և դյու Տիյեն. նա շատ է ուշացել, հենց պատարագի ընթերցվածներն սկսելու րոպեին է հասնում:— Նա՛, անկասկած կամուսնանա մեծ աղջկա հետ:— Հնարավո՞ր բան է դա,— ասում է Դերոշը,— նա ամբողջապես կապված է տիկին Ռոզենի հետ:— Դյու Տիյեն, կապվա՞ծ... Դու նրան չես ճանաչում:— Դուք գիտե՞ք Նյուսինգենի և դյու Տիյեի դերը այդ հարցում,— հարցնում է Դերոշը:— Ահա թե ինչպես,— ասում է Տայֆերը,— «Նյուսինգենը այն մարդն է, որը կուլ է տալու իր նախկին տիրոջ կապիտալը և վերադարձնելու է...»: Հի՛ր՛, ըհի՛ր՛,— հագում է Վերբրուստը,— ինչքան խոնավ են այս եկեղեցիները, ըհի՛ր՛, ըհի՛ր՛, այսինքն՝ ինչպե՞ս հասկանալ վերադարձնել խոսքը:— Այսպես, ուրեմն, Նյուսինգենը գիտե, որ դյու Տիյեն մեծ հարստություն ունի, դրա համար էլ նա ուզում է դյու Տիյեին ամուսնացնել Մալվինայի հետ. դյու Տիյեն վստահություն չունի Նյուսինգենի վրա: Ով խաղից հասկանում է, նրա համար զվարճալի կլինի դիտել այդ բոլորը:— Ինչպե՞ս թե,— ասաց Վերբրուստը,— Մալվինան արդեն ամուսնության հասակո՞ւմն է. ինչքա՛ն շուտ ենք ծերանում:— Մալվինա դ՛Ալդրիգերը քսան տարեկան է, սիրելիս: Հայր դ՛Ալդրիգերը ամուսնացել է 1800 թվականին: Նա մեզ համար այնքա՛ն խնջույքներ է սարքել ամուսնության և Մալվինայի ծննդյան առիթներով, Ստրասբուրգում: Մալվինան ծնվեց 1801 թվականին, Ամիենի խաղաղության դաշինքի օրերին, և այժմ մենք 1821 թվականում ենք, հայր Վերբրուստ: Այդ ժամանակներում սովորություն էր դարձել ամեն ինչ օրինականացնել, դրա համար էլ դ՛Ալդրիգերը իր աղջկան անվանեց Մալվինա: Վեց տարի հետո, Կայսրության օրերում, որոշ ժամանակ մոլեգին սեր առաջացավ ասպետական գործերի նկատմամբ: Օրվա գրույցի նյութը «Գնանք դեպի Միրիա» էր, և նման անմտությունները: Նա իր երկրորդ աղջկան անվանեց Իզոր, այժմ նա տասնյոթ տարեկան է: Արդեն երկու աղջիկ՝ ամուսնացնելու:— Տասը տարի հետո այս կանայք մեկ գրոշ անգամ չեն ունենալու,— ասում է Վերբրուստը Դերոշին:— ԴԱլդրիգերի սենեկապանը կա,— պատասխանեց Տայֆերը,— դա այն ծերուկն է, որը ողբում է եկեղեցու խորքում, նա է մեծացրել այդ երկու օրիորդներին և նա ամեն ինչ կանի այդ օրիորդներին ապրուստի միջոցներ ապահովելու համար: (Եկեղեցական երգիչները — Dies irac) (երգչախմբի երեխաները — Dies illa:) Տայֆերը — մնաք բարով, Վերբրուստ, երբ ես լսում եմ Dies irae-ն, շատ եմ մտածում իմ խեղճ որդու մասին:— Ես էլ եմ գնում, այստեղ չափից դուրս խոնավ է,— ասում է Վերբրուստը: (In favilla: Աղքատ մարդիկ եկեղեցու դռանը.— մի քանի գրոշ, սիրելի պարոններ: Եկեղեցու դռնապանը, դին-դանգ, նվիրեցեք եկեղեցու կարիքների համար: Եկեղեցական երգիչները.— Ամեն: Մի բարեկամ.— ինչի՞ց է մահացել: Մի հետաքրքիր խեղկատակ.— Կրունկի մեջ պայթած արյունատար անոթից: Մի անցորդ.— Չե՞ք իմանում, ով է մահացողը,— Պրեզիդենտ Մոնտեսքիոն: Լուսարարը աղքատներին,— հեռացեք, մեզ տվեցին, ձեզ բաժանելու համար:)

— Սքանչելի՛ է,— ասաց Կուստյուրը:

(Իրոք մեզ այնպես էր թվում, որ լսում էինք եկեղեցում կատարվող յուրաքանչյուր շարժումը: Բիսիուն տախտակամածի վրա իր ոտներով դանդաղ շարժումներ անելով ստեղծում էր նմանություն դագաղին հետևող մարդկանց ոտների աղմուկի:)

— Կան բանաստեղծներ, վիպասաններ, գրողներ, որոնք շատ լավ բաներ են ասում փարիզյան բարձրերի, սովորությունների մասին,— հարեց Բիսիուն,— բայց ահա սա է իրական թաղումը: Մի խեղճ մեռնողի հանդեպ վերջին պարտքը կատարող հարյուր մարդու միջից իննսունինը հուղարկավորության ընթացքում խոսում են լոկ իրենց առօրյա գործերի և զվարճությունների մասին. հազվագյուտ հանգամանքներ են անհրաժեշտ, որ պատահեն իրոք անկեղծ վշտեր: Բացի այդ, մի՞թե կա վիշտ, առանց եսասիրության:

— Ավա՛դ,— ասաց Բլոնդեն,— հարգանքից ամենից գուրկ բանը մահն է, և թերևս դա նրա համար, որ հարգանքի քիչ է արժանի:

— Այո, դա շատ սովորական երևույթ է,— վրա բերեց Բիսիուն:

Երբ արարողությունը վերջանում է, Նյուսինգենն ու դյու Տիյեն հետևում են հանգուցյալին՝ մինչև գերեզմանատուն: Ծեր սենեկապանը գնում է ոտով: Կառապանը քշում է Նյուսինգենի և դյու Տիյեի կառքը, եկեղեցականների կառքի հետևից:

— **Ուռեմն, սիռելի բառեգամ,**— ասում է Նյուսինգենը դյու Տիյեին, երբ կառքը բուլվարի շրջանցն է անում,— **չիսդ առիթն է Մալֆինայի հետ ամուշնանալու. դուք կլինեք բաշտբանը այս խեղճ և սգաֆոր ընդանիկին և գունենաք ցեր ընդանիկը, մի ընդանեգան օջախ: Դուզ գունենակ լռիֆ գահավորված տուն և Մալֆինան, իհարգե, մի իսգական կանց է:**

— Իրականում Նյուսինգենը դա ծեր Ռոբեր Մակերն⁷ է, կարծես թե ես նրան եմ լսում,— ասաց Ֆինոն:

— «Շատ հրապուրիչ գեղանի աղջիկ է,— ասում է Ֆերդինանդ դյու Տիյեն կրակոտ տոնով, բայց առանց տաքանալու»,— շարունակեց Բիսիուն:

— Ամբողջապես դյու Տիյեն՝ ասված երկու բառով,— բացականչեց Կուստյուրը:

— Նա կարող է տգետ թվալ այն մարդկանց, որոնք նրան չեն ճանաչում, բայց, պետք է խոստովանվել, որ հոգի ունեցող աղջիկ է,— ասում է դյու Տիյեն:

— Եվ սի՛նտ ունեցող ախչիկ է, սիռելիս, նա գլինի նվիրված և խելացի կին: Մեռ շան առհեստում մառդ չի իմանում, թե ո՛ւմը ֆստահի. մեծ եռչանկություն է, եոբ մարդ կարոխանում է ֆստահել իր կնոջ: Ես սիրով կփոխանագեի իմ Տելֆինին, որը, քեզ հայտնի է, մեզ միլիոնից ավելի օժիդ է բեռել ինց, Մալֆինայի հետ, որը նրա չապ մեց օժիդ չունի:

— Իսկ ինչքա՞ն ունի:— **Չիշդն ասած, չեմ իմանում,**— ասում է բարոն դը Նյուսինգենը,— **պայց մի պան ունի:**

— Նա ունի մի մայր, որը շատ է սիրում վարդագույնը,— ասում է դյու Տիյեն:

Այս վերջին խոսքը վերջ է դնում Նյուսինգենի փորձերին: Ճաշից հետո բարոնը հայտնում է Վիլիելմինա Ադոլֆուսին, որ իր բանկում մնացել է հազիվ չորս հարյուր հազար ֆրանկ: Ադոլֆուս

դը Մանհեյմի դուստրը, որի եկամուտը կազմում էր քսանչորս հազար ֆրանկ, գլուխը կորցնում է բարդ հաշիվների մեջ, որոնք շփոթ են առաջացնում նրա գլխում:

«—Ինչպե՞ս թե,— ասում է նա Մալվինային,— ինչպե՞ս թե,— ես միշտ էլ իմ տրամադրության տակ տարին վեց հազար ֆրանկ եմ ունեցել դերձակուհու պատվերներ տալու համար, իսկ հայրդ որտեղի՞ց էր վերցնում այդ փողերը: Այդ քսանչորս հազարը մեզ չի հերիքի, դա արդեն թշվառություն է: Ա՛հ, եթե հանգուցյալ հայրս կենդանի լիներ, նա կմեռներ վշտից, տեսնելով թե ինչ օրի հասա ես: Խե՛ղճ Վիլհելմինա»: Եվ սկսում է լաց լինել: Մալվինան, չիմանալով, թե ինչպես մխիթարի իր մորը, ասում է, որ նա դեռևս երիտասարդ է, որ վարդագույնը սագում է նրան, որ օպերա և բուֆոն է գնալու և նստելու է տիկին Նյուսինգենի օթյակում: Այսպիսով նա քնացնում է իր մորը, տոնախմբությունների, պարահանդեսների, երաժշտության, շքեղ արդուզարդի և հաջողություններ ունենալու երազով, որն սկսում է մետաքսյա կապույտ անկողնու վարագույրների տակը, վայելչագեղ մի սենյակում, կից այն սենյակին, որտեղ երկու օր առաջ վախճանվել էր Ժան Բատիստ պարոն դ'Ալդրիգերը, որի պատմությունը, ահա ձեզ մի քանի խոսքով: Իր կենդանության օրով այս պատվավոր ալգասցին, որը մի բանկիր էր Ստրասբուրգում, մոտ երեք միլիոնի հարստություն ուներ: 1800 թվականին, երեսունվեց տարեկան հասակում, Ռևոլյուցիայի ժամանակ դիգած իր հարստության գագաթնակետին մոտենալիս, փառասիրությունից և սիրուց մղված՝ ամուսնանում է Ադոլֆուս դը Մանհեյմի ժառանգուհու հետ, պաշտելի միակ աղջիկը ծնողների, որոնց ողջ հարստությանը տիրանում է տասը տարվա ընթացքում: Այնուհետև դ'Ալդրիգերը բարոնի տիտղոս է ստանում, նորին վեհափառություն կայսեր և թագավորի կողմից, որովհետև նրա հարստությունը կրկնապատկվել էր, բայց նա մեծ կրքով էր տարվել այն մարդու վերաբերմամբ, որը իրեն տիտղոս էր շնորհել: Այդ եղավ պատճառը, որ 1814 և 1815 թվականների ժամանակաշրջանում, նա սնանկացավ, Աուստերլիցի արևին լրջորեն հավատացած լինելու համար: Պատվախնդիր ալգասցին չի դադարեցնում իր վճարումները. նա չի մերժում իր պարտքատերերին վնասների հատուցում կատարել այն արժեթղթերի համար, որ ինքը համարում էր արժեքագուրկ — նա բոլորին վճարում է առանց գեղչի, լիկվիդացնում է բանկը և արժանանում իր նախկին գլխավոր ծառայողի՝ Նյուսինգենի տված գնահատությանը՝ **«Պատֆախնդիր մարդ, բայց դիմար»:**

Բոլոր հաշիվները փակելուց հետո, դ'Ալդրիգերին մնում է հինգ հարյուր հազար ֆրանկ և արդեն գոյություն չունեցող կայսրության պարտադրոթեր:

— **Ահաֆասիկ տե ի՛նչ է նշանագում անչաք ֆստահություն ունենալ Նապոլիոնի վրա,** — ասում է նա տեսնելով նրա գործերի լիկվիդացման արդյունքը: Երբ մարդ մի քաղաքի երևելիներից է եղել, ինչպե՞ս նա այնտեղ կարող է մնալ երկրորդական դերերում: Ալգասցի բանկիրը վարվում է այնպես, ինչպես անում են պրովինցիայի բոլոր սնանկացած մարդիկ: Նա Փարիզ է գալիս, քաջաբար կրելով եռագույն ձգոցներ, որոնց վրա կայսերական արծիվներ էին դրոշմված և կապվում է բռնապարտյան շրջանակների հետ: Նա իր արժեթղթերը հանձնում է բարոն Նյուսինգենին, որը նրան տալիս է ութ տոկոսը, և ընդունում նաև կայսրության պարտադրոթերը, դրանց վրա դ'Ալդրիգերը կորցնում է միայն վաթսուս տոկոս: Դա եղավ պատճառը, որ դ'Ալդրիգերը Նյուսինգենի ձեռքը սեղմի՝ նրան ասելով.

— **«Ես կաչ համոզֆաց էի, որ քո մեչ էլգասցու սիռդ կա»:**

Իսկ մեր բարեկամ դե Լյուպոյի օգնությամբ այդ թղթերի դիմաց Նյուսինգենը լրիվ ստացավ: Չնայած ալգասցուն լավ պլուկել էին, այնուհանդերձ նրան մնացել էր տարեկան քառասունչորս հազար ֆրանկ եկամուտ: Նրա վիշտը բարդացավ **սպլինտով**, որին ենթարկվում են նրանք, ովքեր

ձախողվելուց հետո ազարտի են դիմում: Բանկիրը (ազնիվ հոգու տեր) որոշեց իրեն զոհաբերել իր կնոջը, որի հարստությունը կուլ էր գնացել. հարստություն, որ հեշտությամբ տվել էր դրամական գործերից ոչինչ չհասկացող դեռատի աղջկա նման: Այսպես ուրեմն, բարոնուհի դ'Ալդրիգերը նորից գտնում է վայելքներով լեցուն այն կյանքը, որին սովոր էր և այն դատարկությունը, որ նա կարող էր զգալ Ստրասբուրգի հասարակությունից կտրվելու հետևանքով, այժմ լցվում է Փարիզի հաճույքներով: Նյուսինգենի բանկը, այն ժամանակ, ինչպես այժմ ֆինանսական հասարակության մեջ բարձր դիրք էր զբաղում, և ճարպիկ բարոնը իր պարտքներ համարում լավ վերաբերմունք ցույց տալ պատվավոր բարոնին: Դ'Ալդրիգերի առաքինությունը Նյուսինգենի հյուրասրահի զարդն էր կազմում: Յուրաքանչյուր տարվա վերջում դ'Ալդրիգերի կապիտալը պակասում էր. սակայն նա չէր համարձակվում նույնիսկ ամենամեղմ հանդիմանություն անել Ադոլֆուս ընտանիքի մարգարտին. բարոնուհու հանդեպ նրա ունեցած խանդաղատանքը, այնքան խելառ էր և անհաշվանկատ, որպիսին երբեք չի եղել այս աշխարհում: Բարեհամբույր մարդ, բայց տխմար: Մեռնելիս նա իրեն հարց էր տալիս.— «Արդյոք ի՞նչ է վիճակվելու կնոջս ու աղջիկներիս իմ մահվանից հետո»: Ապա, երբ մի պահ մնաց մենակ՝ իր ծերունի սենեկապան Վիրթի հետ, պարզամիտ ու բարի ծերունին երկու շնչահեղձությունների արանքում նրան վստահեց իր կնոջն ու երկու դուստրերին, ասես ալգասցի այդ Կալեբը⁸ իր տան միակ ողջամիտ անձը լիներ: Երեք տարի հետո, 1826 թվականին, Իգորը քսան տարեկան էր, իսկ Մալվինան դեռ չէր ամուսնացել: Աշխարհիկ կյանքի մեջ մտնելով, Մալվինան ի վերջո հասկացավ, թե մարդկանց հարաբերությունները ինչքան մակերեսային են, թե ինչպես ամեն ինչ այնտեղ հաշված ու կշռադատված է: Այսպես ասած **լավ կրթված** շատ աղջիկների նման, Մալվինան էլ չէր հասկանում կյանքի մեքենայությունները, հարստության կարևորությունը, թե որքան դժվար էր նույնիսկ ամենաչնչին գումարը վաստակելը, մի խոսքով՝ իրերի և երևույթների գնահատումը: Այդ պատճառով էլ այդ վեց տարիների ընթացքում, կյանքի ամեն մի իմացություն, մի նոր վերք էր հասցնում նրան: Այն չորս հարյուր հազար ֆրանկը, որ հանգուցյալ դ'Ալդրիգերը թողել էր Նյուսինգենի բանկում, ձևակերպվել էր բարոնուհու անվան, որովհետև իր ամուսնու մահվան դեպքում նա իրավունք ուներ ժառանգելու մեկ միլիոն երկու հարյուր հազար ֆրանկ, և փողի նեղության թուլեին ալպյան հովվուհին վերցնում էր այնտեղից, ինչպես անսպառ մի դրամարկղից: Այն պահին, երբ մեր աղավնին մոտենում էր իր աղունակին, Նյուսինգենը, իմանալով իր նախկին պատրոնի կնոջ բնավորությունը, անհրաժեշտ համարեց Մալվինային պարզել այրու ֆինանսական դրությունը, հայտնելով, որ իր մոտ մնացել էր միայն երեք հարյուր հազար ֆրանկ, այնպես որ տարեկան քսանչորս հազար ֆրանկ եկամուտը վերածվել էր տասնութ հազար ֆրանկի: Ամբողջ երեք տարի Վիրթը դրությունը մի կերպ քաշ տվեց: Բանկիրի տված տեղեկությունից հետո Մալվինան առանց իր մոր գիտության, ձիերն արձակեց, կառքը վաճառեց և կառապանին էլ ազատեց: Տան կահ-կարասիները, որոնք տասը տարի շարունակ օգտագործվում էին, չէին նորոգվում և բոլորը միանգամից խունացել էին: Ուլքեր ներդաշնակության սիրահար են, նրանց համար դա կես չարիք էր: Բարոնուհին՝ այնքան խնամքով պահված այդ ծաղիկը ստացել էր պաղ և խորշոմած այն վարդի տեսքը, որ մենակ է մնում մացառուտի մեջ, նոյեմբեր ամսվա կեսին: Ես անձամբ տեսել եմ այդ փարթամ կնոջ գունաթափումը երանգ առ երանգ: Զարհուրելի է, ազնիվ խոսք: Դա եղավ իմ վերջին վիշտը: Այնուհետև ես մտածեցի.— «Ի՞նչ մեծ տխմարություն է ուրիշի գործի մասին այդպես սրտանց մտածել»: Երբ ես ծառայում էի մինիստրությունում, հիմարաբար հետաքրքրվում էի այն տներով, որտեղ ճաշում էի, բամբասանքի դեպքում պաշտպանում էի և ինքս չէի զրպարտում ընտանիքներին. ես... Օ՛հ, ես իսկական մի երեխա էի այն ժամանակ: Երբ աղջիկը, բարոնուհուն պարզեց իրենց տնտեսական դրությունը, նախկին մարգարիտը բացականչեց.— «Իմ խեղճ երեխաներ, այժմ ո՞վ է կարելու իմ շորերը: Ուրեմն այլևս չե՞մ ունենալու նոր գլխարկներ և չափ՝ տի կարողանամ հյուրեր ընդունել, ոչ էլ մարդկանց մեջ մտնե՞լ:— Ի՞նչ նշաններից եք ճանաչում սիրահարված տղամարդուն,— ասաց Բիսիուն ինքն իրեն ընդհատելով,— բանն այն է, թե Բողենորը իրո՞ք սիրահարվել էր այդ խարտիշահեր փոքրիկ աղջկան:

— Սիրահարված մարդը անփույթ է իր գործերի վերաբերմամբ,— պատասխանեց Կուտյուրը:

— Նա օրը երեք վերնաշապիկ է փոխում,— ասաց Ֆինոն:

— Նախ մի հարց տամ,— ասաց Բլոնդեն,— ականավոր անձնավորությունը կարո՞ղ է և պե՞տք է արդյոք սիրահարվի:

— Բարեկամնե՛ր,— հարեց Բիսիուն սանտիմենտալ տոնով,— ինչպես թունավոր կենդանուց են զգուշանում, այնպես էլ զգուշացիր այն տղամարդուց, որը մի կնոջ սիրահարված լինելով, միաժամանակ մատնեցով պլթացնում է, կամ նետում է սիգարետը՝ ասելով,— «Աշխարհում ի՞նչ կա շատ, կանանցից ավելի»: Սակայն պետությունը կարող է ծառայության ընդունել այդ քաղաքացուն արտաքին գործոց մինիստրությունում: Բլոնդե՛, նկատի առ, որ Գոդֆրուան թողել էր դիվանագիտական ծառայությունը:

— Նա մինչև մազերը ներծծված է եղել սիրով. սերը այն միակ բախտավորությունն է, որը տրվել է հիմարներին՝ աճելու համար,— պատասխանեց Բլոնդեն:

— Բլոնդե՛, Բլոնդե՛, ինչո՞ւ արդյոք այդքան աղքատ ենք մենք,— բացականչեց Բիսիուն:

— Եվ ինչո՞ւ է Ֆինոն հարուստ,— հարեց Բլոնդեն,— ես կբացատրեմ քեզ այդ, տղա՛ս, և մենք իրար կհասկանանք: Տե՛ս, Ֆինոն ինձ համար այնքան գինի է լցնում, կարծես նրա համար խրձով փայտ եմ տարել: Բայց ճաշի վերջում գինին պետք է կամաց-կամաց խմել: Շարունակի՛ր պատմությունը:

— Ահա այդպես, մինչև մազերը սիրահարված Գոդֆրուան մտերիմ ծանոթություն հաստատեց հաղթանդամ Մալվինայի, թեթևամիտ բարոնուհու և փոքրիկ պարուհու հետ: Նա ընկավ ամենանրբին և ամենանվաստացուցիչ ծառայամոլության մեջ: Անհետացած փարթամության այդ մնացորդները նրան չվախեցրին: Ա՛հ, ո՛չ, նա աստիճանաբար վարժվեց այդ հնոտիներին: Կանաչագույն չինական մետաքսը, սպիտակ վարդերով, որով ծածկված էր հյուրասենյակի կահ-կարասիքը, երբեք այդ տղայի աչքին չերևացին ո՛չ խունացած, ո՛չ հին, ո՛չ կեղտոտ, ոչ էլ փոխվելու կարոտ: Վարագույրները, թեյի սեղանը, բուխարու վրա դրված չինական մանր արձանները, ռոկոկո ոճով ջահը, քիշմիրական ձևի գորգը, դաշնամուրը, թեյի ծաղկավոր սպասները, ծոպավոր և իսպանական ձևով գործված անձեռոցները, պարսկական ձևով կահավորված հյուրասենյակը, որը նախորդում էր բարոնուհու կապույտ ննջասենյակին, իր բոլոր հարմարություններով, այս բոլորը նրան թվում էին սուրբ ճեղքակալան. միայն հիմար կանայք, որոնց մոտ գեղեցկությունն այնպիսի ձևով է փայլում, որ ստվերի մեջ է թողնում խելամոլությունը, սիրտը, հոգին, կարող են նման ինքնամոռացություն ներշնչել, որովհետև խելացի կինը երբեք իր առավելությունները չարաչար չի օգտագործի. մանրամիտ և հիմար պետք է լինել մի տղամարդու գրավելու համար: Բողենորը սիրում էր ծեր ու մեծաշուք Վիրթին, ինքն է ինձ ասել այդ: Այս տարօրինակ մարդն իր ապագա տիրոջ նկատմամբ տածում էր այնպիսի հարգանք, որը կարող էր տածել կաթոլիկ մի հավատացյալ սուրբ հաղորդության հանդեպ: Այդ ազնիվ Վիրթը իսկական մի գերմանացի Գասպար էր, գարեջուր խմող այն մարդկանցից, որոնք թաքցնում են իրենց բարեմիտ մարդու խորամանկությունները, ինչպես միջնադարյան կարդինալը թաքցնում է իր դաշույնը թեզանիքի մեջ: Վիրթը, որոնելով հարմար ամուսին Իզոբի համար, Գոդֆրուային իր ալգասյան բարեմտության մանվածապատ շրջասացությունների ցանցի մեջ էր առնում, դառնալով ամենամաժուցիկ սոսիսձը բոլոր կաշուն նյութերի: Տիկին դ՛Ալդրիգերը լրիվ «անպատշաճության» մեջ էր ընկել. նա սերը ամենաբնական բանն էր համարում: Երբ Իզոբը և Մալվինան դուրս էին գալիս և գնում Տյուիլերի կամ Շան-գե՛լիգե, որտեղ նրանք հանդիպելու էին իրենց շրջապատի երիտասարդների հետ, բարոնուհին նրանց ասում էր.— «Ազատ զվարճացե՛ք ձեզ համար, սիրելի դուստրերս»: Իսկ նրանց բարեկամները,

նրա՛նք, որ միայն կարող էին չարախոսել երկու քույրերին, պաշտպանում էին նրանց, որովհետև այն ծայրահեղ ազատությունը, որ վայելում էին նրանք դ՛Ալդրիգերների հյուրասրահում, Փարիզի հազվագյուտ վայր էր դառնում նրանց համար: Մարդիկ միլիոններ ծախսելով դժվար թե կարողանային նման երեկոյթներ կազմակերպել, որտեղ ամեն ինչի մասին խոսում էին սրամտություններով, որտեղ հյուրասենյակի խնամված հարդարումն ու դրվածքը փայլում էր, որտեղ մարդ այն աստիճան իրեն պարզ էր զգում, որ կարող էր ընթրիք պատվիրել: Երկու քույրերը նամակներ էին գրում նրանց, ովքեր իրենց դուր էին գալիս, և ընդունում նամակներ ամենայն հանդարտությամբ, իրենց մոր ներկայությամբ, իսկ բարոնուհու մտքովն անգամ չէր անցնում հարցնել, թե ի՞նչ են գրում: Այդ պաշտելի մայրը իր աղջիկներին շնորհում էր իր եսասիրության բարեմասնությունները՝ ամենից սիրված կիրքը աշխարհում, այն իմաստով, որ եսասերը, չսիրելով ճնշվել, չի ճնշում ոչ ոքի, երբեք չի խռովում իրեն շրջապատող մարդկանց կյանքը իր խրատների տատասկներով, իր դիտողությունների փշերով և ոչ էլ պիծակի կծոցներով, որպիսիք թույլ է տալիս ծայրահեղ այն մտերմությունը, որ ցանկանում է իմանալ ամեն ինչ, ստուգել ամեն բան...

— Դու հուզում ես իմ սիրտը,— ասաց Բլոնդեն,— բայց, սիրելի՛ս, դու չես պատմում, այլ հանաք ես անում...

— Բլոնդե՛, եթե գինով չլինեիր, դու ինձ պիտի վշտացնեիր: Մեր չորսից Բլոնդեն միակ անձն է, որ գրական լուրջ պատրաստություն ունի: Նրա պատճառով ես ձեզ պատիվ եմ անում, որպես ճաշակ ունեցողի և գտում-թորում եմ իմ պատմությունը, իսկ նա ինձ քննադատում է: Բարեկամնե՛ր, հոգեկան ամլության ամենամեծ նշանը եղելությունների կուտակումն է: «Մարդատյաց» վսեմ կոմեդիան, ապացուցում է, որ արվեստը ասեղի ծայրին մի պալատ կառուցելու մեջ է կայանում: Իմ մտքերի ուժը կախարդական գավազանումն է, որը կարող է մի տասը վայրկյանում (ինչքան հարկավոր է մի բաժակ դատարկելու համար) ավագուտ տափաստաններից ստեղծել մի **Ինտելլակեն**: Ուզում եք, որ իմ պատմությունն ընթանա, ինչպես թնդանոթի ռումբ կամ նման գլխավոր շտաբի հաղորդագրությանը: Մենք գրուցում ենք, ծիծաղում, իսկ այս ժուռնալիստը, այս անհագ գրքատյացը, ցանկանում է, երբ գինով է, որ ես իմ կենդանի խոսքին գրքի անհեթեթ ձև տամ (Բիսիուն ձևացնում է, իբր լաց է լինում): Վա՛յ ֆրանսիական երևակայության, մարդիկ ուզում են ծայրատել նրա սուր կատակը: Dies irae: Ուրեմն ողբանք «Կանդիտին»։ Կեցցե՛ **մաքուր բանականության քննադատությունը**, սիմվոլիկան և տեսությունները՝ հինգ մեծածավալ հատորներով տպագրված գերմանացիների կողմից, որոնք չեն իմանում, որ դեռ 1750 թվականից սկսած այդ տեսությունները Փարիզում արտահայտված են մի քանիսրամիտ բառերով, բառեր, որ մեր ազգային իմացականության աղամանդներն են կազմում:

Բլոնդեն ինքնասպան է, որ գնում է իր սեփական հուղարկավորության առջևից. այդ նա՛ է, որ իր թերթի համար հորինել է այն մեծ մարդկանց մտքերը, որոնք վախճանվելիս ոչինչ չեն ասել:

— Դե, շարունակիր,— ասաց Ֆինոն:

— Ես ուզեցի ձեզ բացատրել, թե ինչումն է կայանում այն մարդու երջանկությունը, որը բաժնետեր չէ (ռներանս Կուսյուրին): Ահա, այդպես, միթե ձեզ պարզ չէ այժմ, թե ի՞նչ գնով Գոդֆրուան հասավ ամենակատարյալ այն երջանկության, որ երբևէ կարող է երազել երիտասարդ մարդը... Նա ուսումնասիրում էր Բգորին, որպեսզի վստահ լինի, թե նա իրեն կհասկանա... իրար հասկանալը հավասար է իրար նման լինելուն: Արդ, միայն անէությունն ու անհունությունն են իրար նման. անէությունը՝ դա հիմարություն է, իսկ հանճարը՝ անհունություն: Երկու սիրահարները աշխարհի ամենահիմար նամակներն էին գրում իրար, անուշահոտ թղթերի վրա, մողայական բառեր

ուղարկելով միմյանց.— **հրեշտա՛կ, էռլյան տավի՛ղ, քեզանով ես կատարյա՛լ կլինեմ, տղամարդու իմ կրծքի տակ մի սի՛րտ կա, տկար ու թու՛յլ կին, դժբա՛խտ անձ իմ.**

Ժամանակակից հոգու ողջ հնոտիքը: Գողթրուան տասը բուպե չէր կարողանում մնալ մի հյուրասրահում, նա կանանց հետ գրուցում էր առանց որևէ հավակնության, այժմ կանայք նրան համարում էին շատ սրամիտ: Նա այն տղամարդկանցից էր, որոնք ուրիշ միտք չունեն, քան այն, որ իրենց փոխ է տրվում: Մի խոսքով, դատեցեք նրան իր իսկ սիրահարության աստիճանից: Ժոբին, ձիերը, կառքերը նրա համար երկրորդական նշանակություն ստացան: Նա երջանիկ էր միայն այն ժամանակ, երբ մխրճված էր լինում փափուկ թիկնաթոռի մեջ, բարոնուհու դիմաց, կանաչ մարմարից անտիկ այն բուխարու մոտ, Իգորին դիտելով, երբ թեյ էր խմում, վիճելով մի խումբ բարեկամների հետ, որոնք գալիս էին ամեն երեկո ժամը տասնմեկի և կեսգիշերվա միջև, Ժուբեր փողոցը, որտեղ միշտ կարելի էր բուլիոտ խաղալ առանց վախի: Ես միշտ էլ այնտեղ շահող էի հանդիսանում: Երբ Իգորը երկարում էր սև ատլասե կոշիկով իր սիրուն փոքր ոտքը, որի վրա Գողթրուան երկար ժամանակ իր հայացքն էր հառել, վերջինս սպասում էր, որ բոլոր հյուրերը մեկնեն և ասում էր Իգորին.— «Ինձ տուր քո կոշիկը. ...»: Իգորը բարձրացնում էր ոտքը, դնում աթոռի վրա, տանում կոշիկը ու նրան էր տալիս, գցելով մի հայացք, մեկը այն հայացքներից... մի խոսքով, հասկանո՞ւմ եք: Վերջապես Գողթրուան բացեց նաև Մալվինայի մեծ գաղտնիքը: Երբ դու Տիյեն դուռը թակում էր, Մալվինայի այտերը գունավորող կարմրությունը գուշակում էր՝ «Ֆերդինանդն է»: Տեսնելով այս երկոտանի վագրին, խեղճ աղջկա աչքերը վառվում էին այն հնոցի նման, որի վրայով օդի ուժեղ հոսանք է անցնում. Մալվինան անհուն հրճվանքի զգացումով էր համակվում ամեն անգամ, երբ Ֆերդինանդը նրան տանում էր լուսամուտի մոտ կամ պատշգամբ, մեկուսի տեսակցություն ունենալու համար: Ինչքա՛ն հազվադեպ է ու գեղեցիկ, երբ այդպես ուժգին սիրահարված կինը դառնում է միամիտ և թույլ է տալիս, որ կարդան իր սիրտը: Աստվա՛ծ իմ, Փարիզում դա այնքան է հազվադեպ, ինչպես երգող ծաղիկն է Հնդկաստանում: Հակառակ այս բարեկամության, որն սկսվեց այն օրից, երբ դՆլորիզերները հայտնվեցին Նյուսինգենների մոտ, Ֆերդինանդը չէր ամուսնանում Մալվինայի հետ: Մեր անագործայն բարեկամ դու Տիյեն չէր խանդում այն համառ սիրաբանության համար, որ Դերոշն էր անում Մալվինայի հետ, որովհետև դատական այդ աղվեսը սերը կեղծում էր հանուն նրա, որպեսզի կարողանա լրիվ վճարել իր ձեռք բերած գրասենյակի արժեքը մի օժիտով, որը, ըստ իր հաշիվների, հիսուն հազար էլյուից պակաս չէր: Մալվինան թեև խորապես նվաստացած էր դու Տիյեի ցուցաբերած անտարբերության համար, այնուամենայնիվ նա այնքան էր սիրում Ֆերդինանդին, որ չէր կարող նրան չընդունել: Ամբողջապես հոգով, զգացումներով, սրտի գեղումներով ապրող այս աղջկա մոտ երբեմն հպարտությունը տեղի էր տալիս սիրո առաջ, երբեմն էլ վիրավորված սերն էր հաղթանակում: Մեր բարեկամ Ֆերդինանդը հանդարտությամբ և սառնությամբ ընդունում էր այդ գուրգուրանքը, նա այդ սիրուց ստանում էր անխռով հեշտանքը այն վագրի, որը արյունով կարմրած իր դունչն է լիզում, նա գալիս էր այդ սիրո ապացույցները տեսնելու և օրը մեջ Ժուբեր փողոցում էր լինում: Այդ խաբեքա մարդը այն ժամանակ մոտ մեկ միլիոն ութ հարյուր հազար ֆրանկ ուներ, հետևաբար փողը նրա աչքին չէր երևում, և նա միայն ընդդիմացավ Մալվինային, այլ դիմադրեց պարոն դը Նյուսինգենին և Ռասսինյակին, որոնք, երկուսով ամեն օր նրան ման էին ածում իրենց խորամանկությունների լաբիրինթոսում:

Գողթրուան չկարողացավ իրեն զսպել և իր ապագա քենուն պատմեց, թե ինչքան ծիծաղելի է նրա դրությունը, գտնվելով մի բանկիրի և մի դատական ծառայողի միջև: «Դուք ուզում եք քարո՞ղ կարդալ իմ գլխին Ֆերդինանդի կապակցությամբ և իմանալ այն գաղտնիքը, որ գոյություն ունի մեր միջև,— ասաց Մալվինան անկեղծությամբ:— Միրելի Գողթրուա, էլ երբեք չխոսեք ինձ հետ այդ հարցի մասին: Ֆերդինանդի ծագումը, նրա անցյալը, նրա հարստությունը այստեղ ոչ մի դեր չեն

կատարում, այլ կա ինչ-որ արտակարգ մի բան»։ Սակայն մի քանի օր հետո, Մալվինան Բողենորին մի կողմ է տանում և ասում է.— «Ես չեմ կարծում, որ պարոն Դերոշը պատվավոր մարդ լինի (ահա թե ի՛նչ է նշանակում սիրո բնագոյը), նա ցանկանում է ինձ հետ ամուսնանալ և նույն ժամանակ սիրաբանում է ինչ-որ նպարավաճառի աղջկա հետ։ Ինձ հետաքրքիր է իմանալ, թե արդյոք ես նրա համար պետք եմ ծայրահեղ դեպքի համա՞ր, թե արդյոք ամուսնությունը նրա համար հանդիսանում է ինչ-որ փողային մի հաշիվ»։

Հակառակ իր սրաթափանց մտքին, Դերոշը չկարողացավ գուշակել դյու Տիյեն և վախեցավ, որ նա կամուսնանա Մալվինայի հետ։ Ուստի փախուստի ելք ապահովեց իրեն համար, որովհետև նրա դրությունը անտանելի էր. բոլոր ծախսերը դուրս գալուց հետո, նրա վաստակածը հազիվ էր բավարարում իր պարտքի տոկոսը վճարելուն։ Կանայք այդ բաներից ոչինչ չեն հասկանում։ Նրանց համար սիրտը միշտ էլ միլիոնատեր է։

— Քանի որ ոչ Դերոշը, ոչ էլ դյու Տիյեն չամուսնացան Մալվինայի հետ, ուրեմն բացատրի՛ր մեզ Ֆերդինանդի գաղտնիքը,— ասաց Ֆինոն։

— Ահա գաղտնիքը,— ասաց Բիսիուն։— Ընդհանուր օրենք՝ դեռատի այն աղջիկը, որը թեկուզ մի անգամ նվիրել է իր կոշիկը, որը, թեպետ, տասը տարի մերժել է այն, երբեք չի ամուսնանա նրա հետ, ով...

— Հիմարություն՝ն,— ասաց Բլոնդեն, ընդհատելով նրան։— Սիրում են նաև նրա համար, որ արդեն սիրել են։ Իսկ գաղտնիքը, ահա թե ինչու՞մն է կայանում.— ընդհանուր օրենք՝ մի ամուսնանա որպես սերժանտ, երբ կարող ես դառնալ Դանցիգի դուքսը և Ֆրանսիայի մարշալը։ Ուստի տեսե՛ք, թե ինչ նպաստավոր ամուսնություն կատարեց դյու Տիյեն։ Նա ամուսնացավ Գրանվիլի կոմսի դուստրերից մեկի հետ, ամենահին ընտանիքներից մեկը ֆրանսիական բարձր դատական աշխարհում։

— Դերոշի մայրը մի բարեկամուհի ուներ,— վերսկսեց Բիսիուն,— մի դեղագործի կին. դեղագործը աշխատանքից քաշվել էր մի մեծ գումար ապահովելուց հետո։ Դեղագործները տարօրինակ գաղափարի տեր են. իր աղջկան լավ կրթություն տալու նպատակով դեղագործը իր աղջկան պանսիոն է դնում... Այս Մատիֆան իր աղջկա ամուսնության հույսը կապել էր ոսկով երկու հարյուր հազար ֆրանկի հետ, որից դեղորայքի հոտ չէր գալիս։

— Ո՞ր Մատիֆան, Ֆլորինի՞,— ասաց Բլոնդեն։

— Այո, Լուստոյի, մի խոսքով մեր Մատիֆան։ Այն ժամանակ մեզ համար կորած այս Մատիֆաներն ապրում էին Շերշ-Միդի փողոցում, Լոմբարդ փողոցի հանդիպակաց թաղամասում, որտեղ նրանք հարստություն դիզեցին։ Ես նրանց լավ եմ ուսումնասիրել, այս Մատիֆաներին։ Երբ ես տաժանակիր աշխատանք էի տանում մինիստրությունում և օրական ութ ժամ անց էի կացնում լրիվ տխմարների մեջ, ես հանդիպել եմ այնպիսի արտառոց մարդկանց, որոնք ինձ համոզում էին, որ խավարում էլ լուսածերպեր կան և ամենահարթ տարածության վրա կարելի է հանդիպել բլրակների։ Այո, սիրելիս, որևէ բուրժուա մի ուրիշի համեմատությամբ նույնն է, ինչ Ռաֆայելը Նատուարի համեմատությամբ։ Այրի տիկին Դերոշը երկար ժամանակ նվիրեց նախապատրաստելու իր որդու այդ ամուսնությունը, հակառակ այն լուրջ արգելքի, որ հարուցում էր ոմն Կոշենը, Մատիֆաների կոմպանիոնի որդին, որը մի երիտասարդ ծառայող էր ֆինանսների մինիստրությունում։ Տեր և տիկին Մատիֆաների աչքին փաստաբանական պրոֆեսիան, իրենց լեզվով ասած, կնոջ երջանկության երաշխիք էր հանդիսանում։ Դերոշը իր մոր ծրագիրների դեմ չէր

առարկում, մտածելով, որ դա միակ էլքն է, ուստի լավ հարաբերություններ էր պահպանում Շերշ-Միդի փողոցի դեղագործների հետ:

Ձեզ հասկանալի դարձնելու համար մի այլ երջանկություն, հարկավոր է նկարագրել այդ ու կին այս երկու առևտրականներին, որոնք ապրում էին առաջին հարկի վայելուչ հարկաբաժնում, ունեին մի փոքրիկ պարտեզ, որտեղ զվարճանում էին, դիտելով հասկի նման բարակ ջրացայտքը, որ շարունակ բարձրանում էր սեղանաձև բոլորակ կրաքարից, գետեղված վեց ոտք տրամագծով ավազանի կենտրոնում. նրանք վաղ զարթնում էին՝ տեսնելու համար, թե արդյոք իրենց պարտեզի ծաղիկները չեն բողբոջել. անգբաղ, բայց անհանգիստ, նրանք իրենց շորերը հագնում էին, պարզապես հագած լինելու համար, ձանձրանում էին թատրոնում և շարունակ Փարիզից Լյուզարշ էին գնում, որտեղ նրանք ունեին մի գյուղական տուն, ուր ես հաճախ ճաշել եմ: Բլոնդե՛, մի օր նրանք ուզեցին, որ ես իմ շնորհը ցույց տամ, ես նրանց մի պատմություն պատմեցի, որը տևեց երեկոյան ժամը իննից մինչև կեսգիշեր, դա ավելի արկածների մի պատմություն էր. ես նոր էի սկսել իմ քսանիններորդ գործող անձի մասին պատմել (ֆելիետոնային վեպերը ինձնից գողացան), երբ հայր Մատիֆան, որը որպես տանտեր, իրեն դեռևս լավ էր պահում, սկսեց խռովացնել մյուսների նման, հինգ րոպե աչքերը քթթելուց հետո, հաջորդ օրը բոլորն էլ ինձ կոմպլիմենտներ արին իմ պատմության հետաքրքիր հանգուցալուծման առթիվ:

Այս առևտրականների ծանոթ-բարեկամներն էին տեր և տիկին Կոշենը, նրանց որդին՝ Ադոլֆ Կոշենը, տիկին Դերոշը, երիտասարդ Պոպինոն, մի դեղագործ, որը նրանց հաղորդում էր Լոմբարդ փողոցի լուրերը (քո ծանոթներից մեկը, Ֆի՛նո): Տիկին Մատիֆան, որը արվեստի սիրահար էր, փողով գնում էր վիմագրական նկարներ, գունավոր պատկերներ, այն ամենը, ինչ էժանագին է: Իսկ մեծարգո Մատիֆան զվարճանում էր, ուսումնասիրելով առևտրական նոր ձեռնարկումները և մեկ-մեկ մասնակցում էր բորսայի խաղերին, ընդարմացումից ազատվելու համար (Ֆլորինը նրան ազատագրել էր ռեգենտական ժանրից): Նրա մի խոսքը բավական է ցույց տալու համար իմ Մատիֆայի մտքի խորությունը: Այդ պարզամիտ մարդը հետևյալ բառերով էր գիշեր բարի մաղթում եղբոր աղջիկներին. — «Գնա՛՜քնիր, իմ եղբոր աղջիկներ»: Իր ասելով, նա վախենում էր, որ չլինի հանկարծ նրանց վիրավորած լինի հոգնակի դեմքով խոսելով: Նրանց դուստրը անտաշ դեռատի մի աղջիկ էր, նման էր մի լավ ընտանիքի սպասուհու, որը լավ թե վատ կարող էր նվազել մի սոնատ, գիտեր շատ գեղեցիկ ձեռագրով անգլերեն գրել, իմանում էր ֆրանսերեն և ուղղագրություն, մի խոսքով կատարելապես բուրժուական դաստիարակությամբ մի աղջիկ: Նա անհամբեր էր ամուսնանալու, որպեսզի ինչքան հնարավոր է շուտ հեռանա հայրենական տնից, որտեղ նա ձանձրանում էր, ինչպես ծովայինը գիշերային հերթապահության ժամանակ, բայց պիտի ասել, որ հերթապահությունը տևում էր օր ու գիշեր: Դերոշը կլիներ այդ ամուսինը, թե Կոշենների որդին, նոտար, թե գվարդիական, կամ ինչ-որ մի անգլիացի կեղծ լորդ, նրա համար միևնույն էր: Եվ որովհետև ակնհայտորեն նա ոչինչ չէր հասկանում կյանքից, ես խղճում էի նրան և ուզեցի նրան պարզել կյանքի մեծ խորհուրդը: Բա՛հ, ինչպե՛ս կարելի էր: Մատիֆաները իրենց դուռը փակեցին իմ առաջ: Բուրժուաները և ես, մենք իրար երբեք չենք կարող հասկանալ:

— Նա ամուսնացավ գեներալ Գուրոյի հետ, — ասաց Ֆինոն:

— Քառասունութ ժամվա ընթացքում Գոդֆրուա դը Բոդենորը, որպես նախկին դիվանագետ, ճանաչեց Մատիֆաներին և կռահեց նրանց նենգամտությունն ու խարդավանքը, — շարունակեց Բիսիուն: — Պատահմամբ Ռաստինյակը թեթևամիտբարոնուհու հետ բուխարու մոտ նստած զրույց էր անում, երբ Գոդֆրուան գեկուցում էր Մալվինային: Մի քանի բառ հասել էր նրա ականջին, որից նա հետևցրել էր, թե ինչի՛ մասին է խոսակցությունը, մանավանդ երբ նկատել էր Մալվինայի վրդովված դեմքը:

Ռաստինյակը այնտեղ մնաց մինչև գիշերվա ժամը երկուսը. և դեռ նրան չափազանց էգոիստ են համարում: Բողենորը մեկնեց, երբ բարոնուհին գնաց քնելու: «Անուշիկս,— ասաց Ռաստինյակը Մավվինային հայրական ու պարզամիտ մարդու տոնով, երբ մենակ էին մնացել,— իմացեք, որ անքնությունից աչքերը ծանրացած մի տղա անընդհատ թեյ է խմել, մինչև գիշերվա ժամը երկուսը արթուն մնալու համար, որպեսզի կարողանա հանդիսավոր կերպով ձեզ ասել.— Ամուսնացե՛ք: Դժվարահաճ մի լինեք, ձեր զգացումներով մի՛ տարվեք, մի՛ մտածեք անարգ հաշիվների մասին այն մարդկանց, որոնց մի ոտքը այստեղ է, իսկ մյուսը Մատիֆաների տանը, ոչ մի բանի մասին մի՛ մտածեք, ամուսնացե՛ք, ամուսնությունը երիտասարդ մի աղջկա համար նշանակում է ենթարկվել մի տղամարդու, որը պարտավորվում է նրան ապրեցնել առավել կամ նվազ երջանիկ վիճակում, որտեղ նյութական հարցը միշտ ապահովված է: Ես ճանաչում եմ մարդկանց. դեռատի աղջիկները, մայրերը և մեծ մայրերը, բոլորն էլ կեղծավոր են զգացմունքների մասին ճառելիս, երբ հարցը վերաբերում է ամուսնությանը: Բոլորն էլ մտածում են սոսկ լավ ամուսնություն սարքելու մասին: Երբ մայրը հաջողությամբ ամուսնացնում է իր աղջկան, հայտարարում է, որ հրաշալի գործ է կատարել»: Եվ Ռաստինյակը Մավվինային երկար բացատրեց ամուսնության իր թեորհան, ըստ որի ամուսնությունը առևտրական մի ընկերություն է, որը հիմնված է կյանքը տանելի դարձնելու համար: «Ես երբեք չեմ ուզում իմանալ ձեր գաղտնիքը,— ասաց նա վերջում Մավվինային,— ես գիտեմ այն: Տղամարդիկ ամեն ինչ ասում են իրար. ինչպես դուք կանայքդ եք ասում, երբ հեռանում եք ճաշի սեղանից: Այսպես, ուրեմն, ահա իմ վերջին խոսքը. ամուսնացե՛ք: Եթե չամուսնանաք, հիշե՛ք, որ այստեղ այս երեկո ես աղերսելով խնդրել եմ ձեզ ամուսնանալ»: Ռաստինյակը խոստում էր այնպիսի հրամայական տոնով, որը կոչ էր անում ոչ միայն ուշադիր լսել, այլև խորհրդածել: Նրա պնդումը մի տեսակ հանկարծակիի բերելու բնույթ ուներ: Մավվինան ազդվեց Ռաստինյակի ասածներից և այնքան խոր կերպով, որ հաջորդ օրը դեռևս շարունակում էր մտածել դրանց մասին, փորձելով գտնել շարժառիթը Ռաստինյակի խրատի, բայց իզուր:

— Այդ բոլոր պատմությունները, որ դու ես պատմում, բոլորն էլ անօգուտ են և մեզ չեն պարզում Ռաստինյակի հարստության աղբյուրը: Երևում է, որ դու մեզ Մատիֆաների տեղ ես դնում, այն էլ բազմապատկված վեց շիշ շամպայնի գինիով,— բացականչեց Կուտյուրը:

— Մենք արդեն մոտենում ենք նպատակակետին,— բացականչեց Բիսիուն:— Դուք հետևեցեք այն բոլոր առվակներին, որոնցով կազմվել է բոլորի համար այնքան ցանկալի քառասուն հազար ֆրանկ եկամուտը: Այդ ժամանակներում Ռաստինյակն իր մատների վրա խաղացնում էր այդ բոլոր մարդկանց:

— Դերոշին, Մատիֆաներին, Բողենորին, դ՛Ալդրիգերներին, դ՛Էզլմոնին:

— Եվ այլ հարյուրավոր մարդկանց.. — ասաց Բիսիուն:

— Ի՛նչ ես ասում: Բայց ինչպե՞ս,— բացազանչեց Ֆինոն:— Ես շատ ու շատ նորություններ լսեցի, սակայն պարզ չէ հանելուկը:

— Բլոնդեն համառոտակի ձեզ պատմեց Նյուսինգենի առաջին երկու սնանկությունների մասին, ահա և երրորդը՝ իր մանրամասնություններով,— վերսկսեց Բիսիուն:— Դեռևս 1815 թվականի խաղաղության դաշինքի ժամանակից՝ Նյուսինգենը հասկացել էր այն, ինչ այժմ մենք հազիվ հասկանում ենք՝ որ փողը ուժ է հանդիսանում միայն այն ժամանակ, երբ անհավասար քանակություններով է այն բաշխված: Նա թաքուն կերպով նախանձում էր Ռոդշիլդ եղբայրներին: Նա ուներ հինգ միլիոն և ուզում էր դարձնել տասը միլիոն: Տասը միլիոնով նա կարող էր վաստակել երեսուն միլիոն, այնինչ հինգով կշահեր տասնհինգ: Ուստի նա որոշեց կատարել մի երրորդ լուծարք: Այս մեծ ֆինանսիստը մտածում էր իր պարտատերերին վճարել ֆիկտիվ արժեթղթեր,

պահելով նրանցփողերը: Բորսայում այսպիսի գաղափարը չի պատկերացվում թվաբանական արտահայտությամբ: Նման մի լուծարք նշանակում է մի-մի ոսկու փոխարեն մի-մի կարկանդակ տալ այն մեծ երեխաներին, որոնք մի ժամանակ, երբ փոքր երեխա էին, նախընտրում էին կարկանդակ ունենալ, ոսկու փոխարեն, առանց իմանալու, որ մի ոսկով կարող են ունենալ երկու հարյուր կարկանդակ:

— Ի՛նչ ես ասում դու, Բիսիու,— բացականչեց Կուսյուրը:— Չէ՞ որ դա շատ բնական բան է, որովհետև այժմ էլ, ամեն շաբաթ, ժողովրդին կարկանդակ են հրամցնում և փոխարենը պահանջում ոսկի: Բայց մի՞թե ժողովուրդը պարտավոր է առաջարկված գնով վերցնելու: Մի՞թե նրանք իրավունք չունեն ստուգելու:

— Դուք պիտի նախընտրեիք, որ նա հարկադրված լիներ ակցիաներ գնել,— ասաց Բլոնդեն:

— Ո՛չ,— ասաց Ֆինոն,— այդ դեպքում ինչո՞ւ համար է մարդու խելքն ու տաղանդը:

— Ապրե՛ս Ֆինո,— ասաց Բիսիուն:

— Այդ միտքը ո՞վ տվեց նրան,— հարցրեց Կուսյուրը:

— Համենայն դեպս,— վերսկսեց Բիսիուն,— Նյուսինգենը երկու անգամ երջանիկ առիթ ունեցավ, առանց դիտավորության, այնպիսի կարկանդակներ տալու, որոնց արժեքը եղել է ավելի, քան իր ստացածը: Այս չարաբաստիկ երջանկությունը խայթ էր պատճառում նրան: Նման երջանկությունները կարող են սպանել մարդու: Տասը տարուց ի վեր նա սպասում էր այնպիսի առիթի, որ այլևս երբեք չխաբվեր, որ ստեղծեր այնպիսի արժեքներ, որոնք որևէ արժեք ունենալու երևույթն ունենային, բայց որոնք...

— Սակայն,— ասաց Կուսյուրը,— եթե մենք այդպես դիտենք բանկային գործերը, նշանակում է այլևս որևէ ձևի առևտուր հնարավոր չէ: Շատ պատվավոր բանկիրներ, պատիվ վայելող կառավարության հավանությամբ, համոզել են շատ ճարպիկ բորսայական գործարարին, ձեռք բերելու բաժնեթղթեր, որոնք որոշ ժամանակ հետո հայտնաբերվել են որպես անարժեք: Այդ դեռ ոչինչ: Մի՞թե կառավարությունների աջակցությամբ և հավանությամբ բաց չեն թողնվել պարտատոմսեր՝ սոսկ նրա համար, որ դրանցից ստացված գումարով վճարեն այլ պարտատոմսերի տոկոսները, այդպիսով պահպանելով նրանց կուրսը և աղմուկով դրանցից ազատվել: Այս գործառնությունները քիչ թե շատ նմանություն ունեն Նյուսինգենի սնանկության հետ:

— Երբ թվերն աննշան են,— ասաց Բլոնդեն,— գործը կարող է թվալ տարօրինակ,— բայց երբ հասնում է միլիոնների, դա արդեն համարվում է բարձրագույն կարգի ֆինանսական գործ: Կան կամայական այնպիսի արարքներ, որոնք ոճիր են համարվում, երբ անհատ մարդուն է վերաբերում, այդ նույն արարքները իրենց նշանակությունը կորցնում են, երբ տարածվում են որոշ թվով մարդկանց վրա, ինչպես մի կաթիլ կապտաթթուն դառնում է անվնաս մի տաշտ ջրի մեջ: Դու մի մարդ ես սպանում, քեզ կառափնատ են բարձրացնում: Սակայն երբ մի որևէ կառավարության հավանությամբ հինգ հարյուր մարդ ես սպանում, մարդիկ սկսում են մեծարել քաղաքական ոճիրը: Դուք գողանում եք իմ գրասեղանից հինգ հազար ֆրանկ, ձեզ ուղարկում են տաժանակիր աշխատանքի: Բայց երբ մի հազար բորսայական գործարարների ախորժակը կարողանում եք ճարպկորեն գրգռել շահելու ակնկալությամբ, դուք նրանց կստիպեք ձեռք բերել պետական ռենտան մի որևէ սնանկացած ռեսպուբլիկայի կամ միապետության, թեև նոր արժեթղթերը, ինչպես ասաց Կուսյուրը, բաց են թողնվում նրա համար, որպեսզի վճարեն այդ նույն ռենտայի տոկոսները, այդ

դեպքում ոչ ոք չի զանգատվում: Ահավասիկ իսկական սկզբունքները այն ոսկեդարի, որի մեջ մենք ապրում ենք այժմ:

— Այսքան մեծ մի մեքենա սարքի գցելու համար,— շարունակեց Բիսիուն,— հարկավոր են բավական թվով մարիոնետներ: Նախ և առաջ Նյուսինգենի բանկը գիտակցաբար ու դիտավորյալ իր հինգ միլիոն ֆրանկը օգտագործեց Ամերիկայում ինչ-որ մի գործարքում, որի հասույթը, այնպես էին դասավորել, որ ձեռք բերվի շատ ուշ: Նյուսինգենը կանխամտածված կերպով դատարկել էր իր դրամարկը: Որևէ սնանկացում պետք է հիմնավորված լինի: Բանկն ուներ, որպես կանխիկ ֆոնդ և որպես արժեթուղթ, շուրջ վեց միլիոն: Կանխիկ դրամագլխի մեջ էր մտնում բարոնուհի դ'Ալդրիգերի երեք հարյուր հազարը, Բոդենորի չորս հարյուր հազարը, դեզլմոնի մեկ միլիոնը, Մատիֆայի երեք հարյուր հազարը, օրիորդ դ'Օբրիոնի ամուսին Շառլ Գրանդեի կես միլիոնը և այլն:

Եթե Նյուսինգենը ինքը ստեղծեր արդյունաբերական մի ձեռնարկություն, որի ակցիաներով սկսեր վճարել պարտատերին, այս ու այն ճարպիկ մանևներ բանեցնելով, նա այնուամենայնիվ կասկածի տակ էր ընկնելու, բայց նա ավելի խորամանկություն արեց, այդ ձեռնարկությունը ստեղծեց ուրիշի միջոցով... ստեղծեց մի մեքենա, որին վիճակված էր խաղալու նույն այն դերը, որպիսին խաղացել է «Միսսիսիպի»-ն⁹ Լոուի սիստեմում: Նյուսինգենի առանձնահատկությունն այն է, որ նա կարողանում է Բորսայի բոլոր ճարպիկ մարդկանց օգտագործել իր ծրագիրների համար, առանց նրանց գիտության: Նյուսինգենը պատահաբար դուր Տիյենի հայտնեց փայտափրական մի ձեռնարկություն ստեղծելու հոյակապ ու հրապուրիչ միտքը, ձեռնարկություն, որը ունենալու է բավական մեծ կապիտալ, որպեսզի սկզբնական շրջանում կարողանա փայտատերերին մեծ շահաբաժիններ վճարել: Լինելով առաջին փորձը և ի դեպ մի այնպիսի ժամանակ, երբ հրապարակը լիքն էր կապիտալ ունեցող պարզամիտներով, նման գործի կազմակերպումը առաջ էր բերելու ակցիաների բարձրացում և հետևաբար շահույթ այն բանկիրներին, որոնք բաց էին թողնելու այդ ակցիաները: Երևակայեցե՛ք, որ այդ բոլորը տեղի է ունենում 1826 թվականին: Հրապուրված այնքան արդյունավետ, որքան հանձարեղ այս գաղափարով, դուր Տիյեն բնականաբար մտածեց, որ ձեռնարկված գործը ձախողվելու դեպքում, պախարակվելու է: Դրա համար էլ, նա առաջարկեց, առաջին պլանի վրա քաշել որևէ փոխնակ անձ, որպես պաշտոնական դիրեկտոր այդ առևտրական մեքենայի: Այժմ, դուք գիտեք գաղտնիքը Կլապարոն առևտրական տան, հիմնված դուր Տիյենի կողմից, դա նրա ամենալավ հնարքներից մեկն էր...

— Այո,— ասաց Բլոնդեն,— Կլապարոնը, դա ֆինանսական գործերի պատասխանատու խմբագիրն է, վարձուգործակալը, քավության նոխազը. բայց այսօր մենք ավելի խելացի ենք և բլանկների վրա գրում ենք. **Դիմել ձեռնարկության վարչությանը**, այսինչ փողոց, այսինչ համար. այնտեղ հասարակությունը գտնում է կատարածուների նման պատկառելի՝ կանաչ կասկետով ծառայողներ:

— Նյուսինգենը աջակցում էր Շառլ Կլապարոնի բանկային տան իր վարկով,— շարունակեց Բիսիուն:— Կարելի էր առանց վախենալու մի որևէ Բորսայում հրապարակ հանել Կլապարոնի ակցիաները, թեկուզ մեկ միլիոն արժողությամբ: Դրա համար էլ դուր Տիյեն առաջարկեց Կլապարոնի բանկը առաջ քաշել: Այդ առաջարկությունն ընդունվում է: 1825 թվականներին բաժնետերերը դեռևս միամիտ էին և շատ բան չէին հասկանում առևտրական մախիանացիաներից: Մարդիկ դեռևս հասկացողություն չունեին **շրջանառու կապիտալի** մասին: Հիմնադրողները գրկված չէին իրենց հիմնական ակցիաները շրջանառության մեջ դնելու իրավունքից, ոչինչ չէին մոծում բանկ և ոչինչ չէին ապահովագրում: Մարդիկ ստիպված չէին բացատրություն տալու մոծված գումարի մասին, այլ բաժնետերերին ասում էին, որ ազնվություն են ունեցել իրենցից պահանջելու միայն հազար հինգ հարյուր կամ նույնիսկ երկու հարյուր հիսուն ֆրանկ: Այն

Ժամանակ չէին հայտարարում, որ *in aere publico*^{*} գործառնությունը տևելու է ոչ ավելի քան յոթ տարի, հինգ տարի կամ նույնիսկ երեք տարի, հետևաբար և լուծումը երկար սպասեցնել չէր տա: Բանկային արվեստի մանկության շրջանն էր դա: Մարդիկ նույնիսկ չգիտեին օգտագործել այն բազմատեսակ ռեկլամները, որոնցով գրգռում են մարդկանց երևակայությունը՝ խնդրելով բոլորից և յուրաքանչյուրից...

— Դա լինում է միայն այն դեպքում, երբ ոչ ոք փող տալ չի ցանկանում,— ասաց Կուտյուրը:

— Եվ վերջապես նման ձեռնարկություններում մրցակցություն դեռևս գոյություն չունի,— շարունակեց Բիսիուն:— Պապիե-մաշե թղթի, չթի գործարանատերերը, թիթեղագործները, թատրոնները, ժուռնալները որսկան շների նման չէին հարձակվում օրհասական ակցիոների վրա: Ակցիոներական ընկերությունները, որոնք ինչպես ասում է Կուտյուրը, այժմ օգտվում են բացահայտ ռեկլամով և հիմնվում են էքսպերտների (գիտության իշխանների. ..) եզրակացությունների վրա, այն ժամանակ ամաչելով սակարկում էին բորսայի մի անկյունում, լռության և ստվերի մեջ: Գիշատիչ գայլերը ֆինանսականորեն էին կատարում «Սևիլյան սափրիչի» գրպարտության արիան: Նրանք գործում էին *piano, piano*^{*}, իրենց ձեռնարկության հուսալիության վրա լուրեր էին տարածում, որոնք անցնում էին ականջից ականջ: Նրանք նախապատրաստում էին ակցիոներին տանը, Բորսայում, և կամ հասարակության մեջ, ճկուն ու ճարտար կերպով ստեղծված այս շշուկի միջոցով, որի ձայնը աստիճանաբար դառնում էր *tutti*^{*}, երբ ակցիաների արժեզիներ հասնում էր քառանշան թվի...

— Սակայն, քանի որ մենք մենակ ենք այստեղ և կարող ենք ամեն ինչի մասին խոսել, ես իմ ասածի վրա պնդում եմ,— ասաց Կուտյուրը:

— Դուք գոհարավաճառ եք, պարոն Ժոս¹⁰,— ասաց Ֆինոն:

— Ֆինոն անուղղելի դասական է, կոնստիտուցիոնալիստ և պահպանողական,— ասաց Բլոնդեն:

— Այո, ես գոհարավաճառ եմ,— վերսկսեց Կուտյուրը,— ես մի մարդ եմ, որի համար Մերիզեն հանձնվեց քրեական գործերի ոստիկանության ձեռքը: Ես պնդում եմ, որ նոր մեթոդը անհունորեն նվազ նենգ է, ավելի օրինական, նվազ կոդոպտիչ, քան նախկինը: Ռեկլամը հնարավորություն է տալիս մտածելու և քննելու: Եթե որևէ բաժնետեր խաբվել է, դրանում ինքն է մեղավոր, իհարկե, նրա աչքերը փակ չեն եղել: Արդյունաբերությունը...

— Հիմա էլ արդյունաբերությունը,— բացականչեց Բիսիուն:

— Արդյունաբերությունը շահում է դրանից,— ասաց Կուտյուրը,— առանց ռեպլիկային ուշադրություն դարձնելու:— Երբ կառավարությունը միջամտում է առևտրին և սահմանափակում է նրա ազատությունը, վնասաբեր հիմարություն է կատարում. դրանով բանը հասնում է կա՛մ «մաքսիմումի», կա՛մ մոնոպոլիայի: Ըստ իս, ոչ մի բան այնպես չի համապատասխանում առևտրի ազատության սկզբունքներին, որքան բաժնետիրական ընկերությունը: Ոտնձգություն կատարել նրանց գործերին, նշանակում է պատասխանատվություն վերցնել, թե՛ կապիտալի և թե՛ շահույթի համար, մի բան, որ անմտություն է: Բոլոր գործերում շահույթները համեմատական են կատարված ռիսկի հետ: Պետության համար ի՞նչ փուլթ, թե փողի շրջանառությունը ի՞նչ ձևով է կատարվում, նրան հետաքրքրում է միայն այն, որ փողը լինի մշտական շարժման մեջ: Ի՞նչ փուլթ, թե ո՛վ է հարուստ և ո՛վ՝ աղքատ, եթե կան ու մնում են նույն թվով հարուստներ, որոնք հարկ են վճարում:

^{*} Վստահելի կապիտալով (լատ.):

^{*} Կամաց-կամաց (իտալ.):

Բացի այդ, ահա քսան տարի է, որ ակցիոներական ընկերությունները բազում ձևերում լայն տարածում են գտել ամենից ավելի առևտրական երկրում — Անգլիայում, որտեղ շարունակ վեճեր են լինում, որտեղ Պալատները յուրաքանչյուր սեսիայում հազար ու մի օրենքներ են հնարում և որտեղ պառլամենտի ոչ մի անդամ չի արտահայտվել ընդդեմ այն մեթոդի, որը...

— Բուժիչ դեղ է լիքը սնդուկների համար, դրամաշորթության համար,— ասաց Բիսիուն:

— Լսեցե՛ք,— ասաց Կուսյուրը բորբոքված:— Ենթադրենք, որ դուք ունեք տասը հազար ֆրանկ և վերցնում եք տասը բաժնետոմս, տասը տարբեր ձեռնարկությունից, յուրաքանչյուրին հատկացնելով հազար ֆրանկ: Տասից իննի դեպքում դուք կողոպտված եք... (Այդպես, իհարկե, չի պատահում, հասարակությունը բոլորից ավելի խելացի է, բայց մի պահ այդպես ենթադրենք), համենայն դեպս, մի դեպքում հաջողել է (պիտի ասեք, որ դա էլ պատահական կերպով),— համաձայն եմ, բայց դա դիտավորյալ չի արել: Հանաքը մի կողմ: Այսպես ուրեմն, **պոնտյորը**, որը բավականաչափ խելացի է, իր ունեցած գումարը այդ ձևով բաժանելով տարբեր ձեռնարկություններում, գտնում է այնպիսի մի հրաշալի տեղ, ինչպես գտել են նրանք, ովքեր գնել են Վորչինի հանքերի ակցիաները: Խոստովանվենք, պարոններ, որ աղմկում են միայն նրանք, որոնք հուսահատության հասած կեղծավորներ են, որովհետև գործից բան չեն հասկանում, համարձակություն չունեն և անճարակ են: Ապացույցը չի ուշանալու: Շուտով կտեսնենք ազնվականներին, արքունի անձնավորություններին, մինիստրության բարձր աստիճանավորներին, որոնք խիտ շարքերով առաջ են նետվելու սպեկուլյացիայի մեջ, մեզնից ավելի ազահությամբ և առավել խորամանկությամբ, բայց գուրկ այն գերազանցությունից, որ մենք ունենք: Ինչպիսի՜ խելք է հարկավոր հիմնելու համար մի ձեռնարկություն, այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ ակցիոների ազահությունը հավասար է գյուտարարի ընչաքաղցության: Ինչպիսի մեծ հիպոստոդ պետք է լինի մարդ, որ ստեղծի մի Կլապարոն և գտնի փող ձեռք բերելու նոր միջոցներ: Իսկ ի՞նչ է սրա իմաստը: Մեր ժամանակները մեզանից լավ չեն: Մենք ապրում ենք շահասիրության այնպիսի մի ժամանակաշրջանում, որտեղ մարդիկ երբեք չեն մտահոգվում իրերի իսկական արժեքի մասին, եթե այդ իրը հարևանին փոխանցելով՝ կարելի է շահել, և մարդիկ այն փոխանցում են հարևանին, որովհետև շահ ակնկալող ակցիոների ազահությունը հավասար է այդ շահն առաջարկող հիմնադրի ազահությանը:

— Մի՞թե Կուսյուրը սքանչելի բաներ չի ասում,— ասաց Բիսիուն Բլոնդեին,— դու տե՛ս, որ նա պիտի պահանջի իրեն համար արձան կանգնեցնել, որպես մարդկության բարերարի:

— Նրա ասածից հետևում է այն, որ հիմարների փողը աստվածային օրենքով խելամիտ մարդկանց ժառանգությունն է հանդիսանում,— ասաց Բլոնդեն:

— Պարոննե՛ր,— հարեց Կուսյուրը,— ծիծաղեցեք այժմ այն բոլոր լուրջ բաների համար, որ այլ տեղ լրջությամբ թաքցնում ենք, երբ լսում ենք հարգելի հիմարություններ, որ նվիրագործում են հապճեպ ստեղծված օրենքները:

— Նա իրավունք ունի,— ասաց Բլոնդեն:— Այս ի՛նչ այլանդակ ժամանակներ են, երբ հենց որ հայտնվի բանականության բոցը, մարդիկ անմիջապես կհանգցնեն այն, դեպքերի բերումով ստեղծված մի օրենքի կիրառումով: Օրենսգետները, որոնք բոլորն էլ դուրս են եկել խուլ անկյուններից, որտեղ նրանք թերթերի ու ժուռնալների միջոցով են ուսումնասիրել հասարակությունը, անխոհեմաբար ուժեղացնում են շոգու ճնշումը կաթսայի մեջ: Երբ կաթսան տրաքի, հետևանքը կլինի լաց և առամների կրճտոց: Մեր ժամանակներում միայն հարկային և պատժիչ օրենքներ են հնարվում: Ուզո՞ւմ եք իմանալ, թե ինչո՞ւմ է սրա գաղտնիքը, պատճառը: Որովհետև պետության մեջ կրոն այլևս գոյություն չունի:

— Կեցցե՛ս Բլոնդէ,— ասաց Բիսիուն,— դու մատդ ճիշտ Ֆրանսիայի վերքի վրա դրիր, այդ վերքը հարկային սիստեմն է, որ մեր երկրից շատ ավելի նվաճումներ է խլել, քան պատերազմի փոփոխականությունները: Այն մինիստրությունում, որտեղ ես յոթ տարի տաժանակրություն եմ տարել բուրժուաների հետ ընկերակցած, կար մի ծառայող, տաղանդավոր մի մարդ, որը որոշել էր փոխել բոլոր ֆինանսական սիստեմները... Ի՛նչ օգուտ, մենք նրան պարգապես հեռացրինք աշխատանքից: Նրա սիստեմով ղեկավարվելով, Ֆրանսիան շատ երջանիկ պիտի լիներ և Եվրոպան գրավելը, Ֆրանսիայի համար խաղ ու պար էր լինելու և մենք բոլոր ազգերին խաղաղ ու հանգիստ կյանք էինք տալու: Ռաբուրդեն էր նրա անունը: Ես նրան սպանեցի մի կարիկատուրով (տե՛ս «Պաշտոնյաները»):

— Երբ ես ասում եմ կրոն, ես չեմ ուզում ասել կեղծ բարեպաշտություն, ես այն հասկանում եմ որպես քաղաքական հասկացողություն,— վերսկսեց Բլոնդեն:

— Միտքդ պարզի՛ր,— ասաց Ֆինոն:

— Ահա,— պատասխանեց Բլոնդեն:— Մեզ մոտ շատ են խոսել Լիոնի դեպքերի, փողոցներում թնդանոթի կրակ բացող ռեսպուբլիկայի մասին¹¹, սակայն ոչ ոք չի ասել ճշմարտությունը: Ռեսպուբլիկան տարվեց ապստամբությամբ այնպես, ինչպես ապստամբը զենք է ձեռք բերում: Իրոք որ շատ տարօրինակ և խոր բաներ կատարվեցին: Լիոնի արդյունաբերությունը հոգի չունի, նա մինչև իսկ մեկ մետր մետաքս չի արտադրի, առանց նախապես պատվեր ստանալու և վճարումն ապահովելու: Երբ պատվերները դադարում են, բանվորը մահանում է քաղցից, նա աշխատելով հազիվ է ապահովում իր ապրուստը: Տաժանակիր աշխատանքի ենթարկված մարդը ավելի երջանիկ է նրանից: Հուլիսյան ռնույուցիայից հետո, թշվառությունը այն աստիճան էր սրվել, որ մետաքսի գործարանի ջուլիակներն իրենց դրոշմների վրա գրել էին — **հաց կամ մահ**, մեկը այն լոգունգներից, որ կառավարության ուսումնասիրության հարց պետք է դառնային, այդ լոգունգը արդյունք էր Լիոնում ստեղծված կյանքի թանկության: Լիոնը ուզում է կառուցել թատրոններ և դառնալ մայրաքաղաք, դրան հասնելու նպատակով ստեղծվեցին անմիտ հարկեր՝ քաղաք բերվող մթերքների վրա: Ռեսպուբլիկականներն օգտագործեցին հացի համար կատարվող այդ ըմբոստությունը և կազմակերպեցին ջուլիակներին, որոնք կռվեցին երկու լոգունգի տակ: Լիոնը պատմական երեք օրեր ապրեց, այնուհետև կարգը հաստատվեց և ջուլիակները մտան իրենց հյուղերը: Ջուլիակը, որը մինչև այդ ուղղամիտ էր և որը կշեռքով իրեն հանձնված մետաքսի կաժերը հյուսվածքի վերածելով ետ էր վերադարձնում, մի կողմ դրեց ուղղամտությունը, մտածելով, որ վաճառականները բանվորներին իրենց շահերի գոհն են դարձրել, և սկսեց իր մատները յուղի մեջ թաթախել. կշռաչափով նա ճիշտ էր հանձնում արտադրանքը, բայց նրա տված մետաքսը յուղոտ էր և ֆրանսիական մետաքսի արդյունաբերությունը ապականվեց «յուղոտ գործվածքի» մակդիրով, որը կարող էր պատճառ հանդիսանալ Լիոն քաղաքի, ինչպես և ֆրանսիական արդյունաբերության մի ճյուղի կործանման: Գործարանատերն ու կառավարությունը փոխանակ չարիքը արմատից վերացնելու, վարվեցին այնպես, ինչպես որոշ բժիշկներ, որոնք արտաքին բուժիչ միջոցներով ցավը խորն են քշում: Հարկավոր էր Լիոն ուղարկել մի ճարպիկ մարդու, այն մարդկանցից մեկին, որոնք կոչվում են անբարոյական, մի աբբա Տերե, բայց, ինչպես տեսանք, այնտեղ զենքի դիմեցին: Այսպիսով, Լիոնի խռովությունները պատճառ հանդիսացան, որ հրապարակ գան մետրը քառասուն սու արժեքող «գրո դը նապլ» գործվածքը: «Գրո դը նապլը» այժմ վաճառված է և կարելի է դրա մասին խոսել, իսկ գործարանատերերը ստեղծել են գործերի ընթացք ստուգելու ինչ-որ միջոցներ: Նախատեսությունից զուրկ արտադրության այս եղանակը կիրառվեց մի վայրում, որտեղ Ռիշար Լենուարը, մեկն այն ամենամեծ քաղաքացիներից, որ Ֆրանսիան երբևէ ունեցել է, սնանկացավ, որովհետև առանց պատվեր ունենալու աշխատեցրել և կերակրել էր վեց հազար բանվորի, որովհետև հանդիպել էր այնպիսի հիմար մինիստրների, որոնք թույլ տվեցին, որ նա

կործանվի 1814 թվականին տեղի ունեցած գների անկման ժամանակ: Ահա այն միակ դեպքը, երբ ի պատիվ վաճառականին կարելի է արձան կանգնեցնել: Բայց ի՞նչ ասես, այժմ այս մարդու օգտին հանգանակություն է բացվել, հանգանակություն առանց հանգանակողների,— մինչդեռ, մարդիկ գեներալ Ֆուայի երեխաներին տվել են մեկ միլիոն: Լիոնը հետևողական է: Նա ճանաչում է Ֆրանսիային, որը բացարձակապես գուրկ է կրոնական զգացումներից: Ռիշար Լենուարի պատմությունը այն սխալներից է, որը Ֆուշեն համարում է ավելի վատ, քան ոճրագործությունը:

— Եթե գործերի ղեկավարման այժմյան եղանակում,— վերսկսեց Կուսյուրը, վերականգնելով իր ընդհատված դատողությունը,— կա շառլատանության ինչ-որ երանգ, բառ, որ խաբանող է դարձել և դրվում է ազնիվները անազնիվներից բաժանող միջնորմի վրա, ապա ես հարց եմ տալիս ձեզ, թե շառլատանությունը որտե՞ղ է սկսում և ո՞ր է վերջանում և ի՞նչ բան է շառլատանությունը: Բարի եղեք ինձ ասել, թե ո՞վ շառլատան չէ: Մի քիչ բարեխղճություն ունեցեք: Այն առևտուրը, որը կայանում է նրանում, որ գիշեր ժամանակ գտնի այն, ինչ ցերեկը վաճառելու է, անմտություն է: Լուցկի վաճառողն անգամ մեծագնորդ վաճառականի բնագոյն ունի: Մեծաքանակ ապրանքի գնում անելը, ինչպես Սեն-Դենի փողոցի այսպես կոչված ամենաառաքինի խանութպանի ամենօրյա մտածումն է, նույնը նաև ամենալիբրե համարված սպեկուլյանտի միտքն է: Երբ պահեստները լեցուն են ապրանքներով, վաճառելու անհրաժեշտություն է ստեղծվում: Վաճառել կարողանալու համար պետք է հրապուրել գնորդին, հենց այդտեղից էլ առաջացել են միջնադարիցուցանակները և մեր օրերի հայտագրերը: Ես մազի չափ տարբերություն չեմ տեսնում երկու իրողության միջև, մի դեպքում, երբ գնելու նպատակով հաճախորդին ներս են հրավիրում, երկրորդ դեպքում, երբ նույն բանն անելը նրան հարկադրում են: Կարող է պատահել, պետք է, որ պատահի և հաճախ է պատահում, որ վաճառականները ձեռք են բերում խոտանված ապրանք, որովհետև վաճառողը միշտ էլ խաբում է գնորդին: Հարցրեք Փարիզի ամենապատվավոր, հայտնի վաճառականներին... բոլորն էլ հպարտությամբ ձեզ կպատմեն այն խորամանկության մասին, որին դիմել են սպառելու համար իրենց ստացած վատորակ ապրանքները: Հանրաժանութ Մինար վաճառատունը այդ ձևով է սկսել իր առաջին գործառնությունը: Սեն-Դենի փողոցում միայն «յուդոտած մետաքսյա» շրջագգեստ են վաճառում, ավելին չի էլ կարելի սպասել: Ամենից առաքինի առևտրականներն ամենաանկեղծ արտահայտությամբ ձեզ կասեն ամենաանսանձ խարդախության հետևյալ խոսքը.

— Մի կերպ դուրս ենք գալիս դժվարություններից:

Բլոնդեն ձեզ պարզեց Լիոնի իրադարձություններն իրենց դրդապատճառներով և հետևանքներով, իսկ ես իմ թեորիաների կիրառման եմ անցնելու մի անեկդոտով: Փառասեր և շատ սիրված կնոջ պատճառով՝ երեխաներով ծանրաբեռնված մի արհեստավոր հավատում է ռեսպուբլիկային: Այս մարդը գնում է կարմիր գույնի բուրդ և պատրաստում է կարմիր կասկետներ, որը դուք տեսած կլինեք Փարիզի փողոցներում ման եկող բոլոր տղաների գլխին, այժմ կիմանաք թե ինչո՞ւ: Ռեսպուբլիկան պարտվել է: Սեն-Մերի փողոցի դեպքից հետո¹², այլևս կասկետներ չէին վաճառվում: Երբ մի արհեստավորի տնտեսությունը կազմում են կինը, երեխաները և կարմիր գույնի բրդյա տասը հազար կասկետներ, որ մերժվում են Փարիզի բոլոր գլխարկավաճառների կողմից, նրա մոտքում նույնքան ծրագիրներ կլինեն, որքան կարող է լինել այն բանկիրի գլխում, որն իր տասը միլիոն ակցիաները ուզում է տեղավորել մի ձեռնարկությունում, որի նկատմամբ կասկածներ ունի: Գիտե՞ք, թե ի՞նչ է անում այս արհեստավորը, արվարձանում ապրող այս Լոուս, կասկետի այս Նյուսինգենը: Նա գտնում է սրճարաններումման եկող մի դենդիի, մեկն այն խեղկատակներից, որոնք հուսահատության են հասցնում քաղաքի սերժանտներին՝ դաշտային պարահանդեսների ընթացքում և համոզում է նրան խաղալ դերը ինչ-որ ամերիկացի մի կապիտանի, որը իբր թե եկել է խոտանած ապրանքներ հավաքելու և իջևանել է Մորիս պանդոկը, խնդրելով նրան, գնալ կարմիր բրդից պատրաստած տասը հազար կասկետի պատվեր տալ մի

հարուստ գլխարկավաճառի, որի խանութի դարակներից մեկում մի նմուշ դեռևս մնացել է: Գլխարկավաճառը մտածում է գործ բացել Ամերիկայի հետ, իսկույն կասկետների վրա է պրծնում և փողը կանխիկ վճարում: Հասկանո՞ւմ եք, թե ինչ է տեղի ունենում — ամերիկացի կապիտանը չկա, կան անհաշիվ կասկետներ: Հարձակվել առևտրական ազատության վրա նման անպատեհությունների պատճառով՝ նշանակում է հարձակվել արդարադատության վրա այն պատրվակով, որ գոյություն ունեն հանցավորներ, որոնք չեն պատժվում կամ դատապարտել հասարակությունը նրա համար, որ վատ է կազմակերպված, պատճառաբանելով, որ այն դժբախտություններ է ծնում: Կասկետից և Մեն-Դընի փողոցից հասեք մինչև ակցիաները և բանկը, և եզրակացրեք ինքներդ:

— Կուտյո՛ւր, պսակի ես արժանի,— ասաց Բլոնդեն, նրա գլխին դնելով իր ճմրթկած անձեռոցիկը:— Ես ավելի հեռուն եմ գնում, պարոննե՛ր: Եթե այժմյան թեորիայում արատներ կան, ո՞վ է մեղավորը, օրենքը, օրենքն իր ամբողջ սիստեմով վերցրած, օրենսդրությունը, ընտրական շրջանների մեծ անձնավորությունները, որոնց պրովինցիան է ուղարկում Փարիզ, լցրած բարոյական գաղափարներով, գաղափարներ, որոնք անհրաժեշտ են առօրյա կյանքի ընթացքի համար արդարադատության դեմ, սակայն անմիտ են դառնում այն մոմենտից, երբ նրանք արգելք են հանդիսանում մի մարդու առաջանալուն այն բարձրության, որտեղ պետք է գտնվի օրենսդիրը: Ինչքան ուզում են թող օրենքները արգելեն կրքերի այս ու այն ուղղությամբ զարգացումը (խաղը, վիճակախաղը, փողոցային Նինոններին, բոլորը ինչ կամենաք), միևնույն է, օրենքները երբեք չեն կարող արմատախիլ անել կրքերը. սպանել կրքերը՝ կնշանակի բնաջնջել հասարակությունը, որը, եթե կրքեր չի ծնում, այնուամենայնիվ զարգացնում է: Դուք կարող եք սահմանափակումներով արգելակել խաղի ցանկությունը, որ բոլորի սրտերումն է, լինի դա դեռատի աղջիկ, պրովինցիայից եկած մարդ, թե դիպլոմատ, որովհետև ամեն մարդ ցանկանում է ձրի հարստություն ձեռք բերել, բայց այդ ձևով խաղի ցանկությունը չի մեռնում, այլ փոխադրվում է մի այլ ոլորտ: Դուք անմիտ կերպով վերացնում եք վիճակախաղը, բայց խոհարարուհիները մի՞ թե նվազ են կողոպտում իրենց տերերին, նրանք իրենց կողոպուտը մոծում են դրամարկդ, ստացվում է այն, որ քառասուն սուի փոխարեն, երկու հարյուր հիսուն ֆրանկ են դնում որպես խաղազուամար. որովհետև վիճակախաղերի փոխարեն այժմ գործում են արդյունաբերական ակցիաները, առևտրական ընկերությունները, որոնք խաղը շարունակում են առանց կանաչ մահուղով սեղանի, բայց փողերը հավաքող անտեսանելի թիակով և ճարպկությամբ խաղաթղթերը փոխելու նենգությամբ: Խաղատները փակվել են, վիճակախաղը գոյություն չունի, և ահա տիսմարները բղավում են՝ այժմ Ֆրանսիան շատ ավելի բարոյական է դարձել, ասես բոլոր ազարտ խաղերն անհետացած լինեն: Այնուամենայնիվ մարդիկ շարունակում են խաղալ, միայն այն տարբերությամբ, որ շահույթ չի գնում պետությանը, որը կամովին վճարվող հարկերը փոխարինում է նեղացուցիչ հարկերով, առանց պակասեցնելու անձնասպանությունները, որովհետև խաղացողը չէ, որ մահանում է, այլ նրա զոհը: Ես դեռ չեմ խոսում արտասահման փոխադրված այն կապիտալների մասին, որոնք ընդմիջտ կորած են համարվում Ֆրանսիայի համար, ոչ էլ Ֆրանկֆուրտի վիճակախաղի մասին, որի տոմսերը տարածելու համար Կոնվենտը մահապատիժ էր սահմանել, թեև այդ գործով էին զբաղվում մինչև իսկ դատախազ սինդիկները: Ահա թե որտեղ է տանում մեր օրենսդիրների անմիտ մարդասիրությունը: Խնայդրամարկդներին զարկ տալը նույնպես լուրջ քաղաքական հիմարություն է: Ենթադրենք մի լոպե, որ գործերը կանգ են առնում և կտեսնենք, որ կառավարությունը կստեղծի **փողի հերթ**, ինչպես ռևոլյուցիայի ժամանակաշրջանում ստեղծվեց **հացի հերթը**: Ինչքա՛ն դրամարկդ, նույնքա՛ն անկարգություն: Եթե մի որևէ տեղ երեք մարդ թեկուզ մի դրոշակ բարձրացնի, արդեն ռևոլյուցիա է: Բայց այս վտանգը, ինչքան էլ որ մեծ լինի, ինձ թվում է նվազ երկյուղալի է, քան ժողովրդի բարոյալքումը: Խնայողական դրամարկդը շահասիրությունից առաջացած մոլությունների ներարկումն է մարդկանց մեջ, որոնք իրենց թաքուն, ոճրապարտ

մտահղացումներից ետ չեն մնում, ինչքան էլ ուսում ստանան կամ դատելու կարողություն ձեռք բերեն: Ահա ձեզ մարդասիրության արդյունքը... Մեծ քաղաքագետը սկզբունքով պետք է լինի մի ոճրագործ, առանց որի հասարակությունը լավ չի կառավարվի: Պատվավոր քաղաքագետը մի զգայուն շոգեմեքենա է, և կամ մի նավավար, որը սիրաբանություն է անում դեկը ձեռքին — նավն ընկղմում է: Այն պրեմիեր մինիստրը, որը հարյուր միլիոն է ստանում և Ֆրանսիան դարձնում է մեծ ու փառահեղ, մի՞թե նախնորելի չէ այն պրեմիերից, որը թաղվում է պետական ծախսով և իր երկրի կործանման պատճառ է հանդիսանում: Մի՞թե կարելի է տատանվել նախապատվություն տալու մի կողմից Ռիշելիոյին, Մազարինին, Պոտյոմկինին, որոնք ժամանակին երեք միլիոն հարստության տեր էին և մյուս կողմից առաքինի Ռոբեր Լինդեյին, որը չկարողացավ օգտվել ո՛չ դրամարկդներից, ոչ էլ պետական ինչքերից, կամ այն առաքինի հիմարներին, որոնք կորստյան մատնեցին Լուդովիկոս XVI-ին: Շարունակի՛ր Բիսիոն:

— Ես,— վերսկսեց Բիսիոն,— ձեզ չեմ բացատրելու բնույթը այն ձեռնարկության, որը ծնունդ է Նյուսինգենի ֆինանսական հանճարի. դա շատ անհարմար կլինի, քանի որ այդ հիմնարկությունը ներկայումս գոյություն ունի. նրա ակցիաները արժենշվել են Բորսայում: Նյուսինգենի հնարագիտությունները այնքան իրական էին և ձեռնարկության նպատակը այնքան կենդանի, որ բաց թողնված բաժնետոմսերի անվանական արժեքը հազար ֆրանկ սահմանվեց, հաստատվեց թագավորական դեկրետով, ապա անկում կրեցին հասնելով մինչև երեք հարյուր ֆրանկի, հետո նորից բարձրացան յոթ հարյուր ֆրանկի, և, վերջապես 1827, 1830, 1832 թվականների փոթորիկներից անցնելով, հասան նախկին անվանական արժեգին:

1827 թվականի ֆինանսական կրիզիսը նորից նրանց արժեզինը խախտեց, իսկ Հուլիսյան ռոյույուցիան լրիվ խորտակեց, բայց գործը դեռևս մեծ հնարավորություններ էր ցույց տալիս (Նյուսինգենը վատ գործ չի ձեռնարկի): Մի խոսքով, քանի որ առաջին կարգի բազմաթիվ բանկեր մասնակցել են այդ գործում, անվայել բան է մանրամասնության մեջ մտնել: Անվանական կապիտալը դարձավ տասը միլիոն, իսկ իրական կապիտալը՝ յոթ միլիոն, որի երեք միլիոնը պատկանում էր հիմնադիրներին և այն բանկիրներին, որոնք բաց էին թողնում բաժնետոմսերը: Ամեն հաշիվ նախապես նկատի առնված էր, որպեսզի կարողանան առաջին վեց ամիսների ընթացքում շահել երկու հարյուր ֆրանկ՝ յուրաքանչյուր բաժնետոմսից, կեղծ դիվիդենդներ բաժանելու շնորհիվ: Մի խոսքով, տասը միլիոնի քսան տոկոսը: Դյու Տիյեի շահաբաժինը եղավ հինգ հարյուր հազար ֆրանկ: Բանկիրների լեզվով այսպիսի պատառը կոչվում է **որկրամուլների բաժին**: Նյուսինգենը մտածում էր գործի դնել իր այն միլիոնները, որոնք վիմագրական քարի միջոցով տպվել էին մի կապ վարդագույն թղթերի վրա, դրանք սիրուն տեսքով բաժնետոմսեր էին, որ հոգածությամբ պահվում էին իր կաբինետում՝ մինչև բաժանվելը: Իսկ իսկական բաժնետոմսերը ծառայելու էին գործի հիմնադրմանը, դրանցով պետք է գնվեր մի առանձնատուն և սկսեր գործողությունը: Նյուսինգենը ակցիաներ ուներ նաև ինչ-որ արծաթախառն կապարի հանքերի, քարածուխի հանքերի և երկու ջրանցքների մեջ, դրանք շահութաբեր բաժնետոմսեր էին, որոնք ստացված էին գործի դնելու հիմնական կապիտալի դիվիդենդների շնորհիվ ակտիվությամբ աշխատող, լավ կազմակերպված այդ չորս ձեռնարկությունները: Նյուսինգենը կարող էր բաժնետոմսերի արժեգնի հետագա բարձրացման դեպքում տարբերությունը գրպանել, սակայն բարոնը նման հաշիվները անտեսում էր, նա այն թողնում էր որ մնա ջրի երեսին, որպես խայծ ձկների: Այդպիսով նա իր ձեռքում էր հավաքում արժեքները, ինչպես Նապոլեոնը հավաքում էր իր զորականներին, և որպեսզի կեղծ սնանկություն հայտարարի կրիզիսի դեպքում, որը մոտալուտ էր և 1826, 1827 թվականներին ցնցեց եվրոպական բոլորբորսաները: Եթե Նյուսինգենը իր մոտն ունենար Վազրամի իշխանին, նա կկարողանար ասել, ինչպես Նապոլեոնը Մանտոնի բարձունքից.— Լա՛վ հետևեցեք հրապարակին, այսինչ օրը, այսինչ ժամին լավ արժեթղթեր են

հրապարակ գալու: Սակայն նա ո՞ւմ վրա կարող էր վստահություն ունենալ: Դյու Տիյեն չէր կասկածում, որ ակամա սանահեր է դառնալու:

Առաջին երկու լուծարքները ցույց տվեցին մեր բարոնին, որ անհրաժեշտ է կապվել այնպիսի մարդու հետ, որը կարողանար ծառայել իրեն որպես լծակ, իր պարտատերերի վրա ազդեցություն ունենալու համար: Նյուսինգենը եղբորորդի չուներ, չէր համարձակվում վստահել պատահական մարդկանց, նրան հարկավոր էր մի անձնվեր մարդ, մի բանիմաց Կլապարոն, օժտված բարեկիրթ վարմունքով, մի իսկական դիվանագետ, արժանի մինիստր լինելու և արժանի իրեն: Նման ծանոթությունը հաստատվում է ոչ մի օրում և ոչ էլ մի տարում: Ռասսոինյակը, որը խճճված էր բարոնի սաղարանների մեջ, ինչպես Սպանիայի և՛ թագավորի, և՛ թագուհու կողմից հավասարապես սիրված իշխան Գոդոյան, կարծում էր, թե հանձին Նյուսինգենի, գտել է մի պարզամիտ, դյուրախաբ մարդու: Երկար ժամանակ ծիծաղելով մի մարդու վրա, որի կարողություններին անձանթ էր, ի վերջո Ռասսոինյակը Նյուսինգենի հանդեպ ցուցաբերեց լուրջ վերաբերմունք, նրա մեջ տեսնելով այն ուժը, որը կարծում էր, թե միայն իրեն էր վերապահված: Փարիզ հասնելու առաջին օրերից սկսած Ռասսոինյակը սկսեց արհամարհանք տածել ողջ հասարակության նկատմամբ: 1820 թվականից սկսած նա մտածում էր բարոնի նման, որ պատվավոր մարդիկ միայն արտաքինապես գոյություն ունեն և նա մարդկանց վրա նայում էր, որպես ապականությունների և խաբեությունների մի խառնակույտի: Թեև բացառություններ ընդունում էր, բայց դատապարտում էր մասսային: Նա ոչ մի առաքիության չէր հավատում, նրա կարծիքով հանգամանքների բերումով է մարդ առաքինի դառնում: Այդ իմաստությունը նա ձեռք բերեց շատ կարճ ժամանակում, այն պահին, երբ հասնում էր Պեր-Լաշեզի բարձունքին այն օրը, երբ հետևում էր մի խեղճ պատվավոր մարդու հուղարկավորությանը, իր Դելֆինի հորը, որը մեր հասարակության խաբեությունների գոհն էր, մաքուր զգացումների տեր մի մարդ, լքված իր դուստրերի և փեսաների կողմից: Նա որոշեց խաբել մարդկանց, ներկայանալ նրանց առաքիությանը՝ ուղղամտության և վայելուչ վարմունքի զգեստավորմամբ: Եսասիրությունը ոտից գլուխ զինեց այս ազնվական երիտասարդին: Երբ նա Նյուսինգենին գտավ նույն զգեստներով զրահավորված, սկսեց նրան հարգել ինչպես միջին դարերում մրցությունների ժամանակ նծույգին նստած, ոտից գլուխ արծաթ ու ոսկի զրահներ հագած ձիավորն է հարգում իր նման հագնված ձիավոր հակառակորդին: Սակայն նա մի որոշ ժամանակ մեղկանում է Կապուի¹³ հեշտանքներում: Բարեկամությունը այնպիսի մի կնոջ, ինչպիսին բարոնուհի Նյուսինգենն է, այնպիսի բնույթ ունի, որ կարող է բոլոր տեսակի եսասիրության վերջ տալ: Դելֆինը, հուսախաբ իր առաջին զգացմունքների մեջ՝ հանդիպելով Բիրմինգհամի տիկնիկին նմանող հանգուցյալ Մարսելին, բնականաբար անսահման սիրով էր կապվելու պրովինցիալ հավատալիքներով սնված մի երիտասարդի հետ: Այդ խանդավառանքը ազդեց Ռասսոինյակի վրա: Երբ Նյուսինգենը իր կնոջ բարեկամին հազցրեց լծասարքը, որ ամեն շահագործող շահագործվողին է հազցնում, և դա պատահեց ճիշտ այն մոմենտին, երբ նա խորհրդածում էր իր երրորդ լուծարքի մասին, Ռասսոինյակին նա պարզեց իր դիրքը, նրան հասկացնելով, որ իբրև փոխհատուցում՝ Էժենը պարտավոր է գործակցի դեր ստանձնել և խաղալ: Բարոնը վտանգավոր համարեց ամուսնական գործում իրեն ընկերակից համարվող Ռասսոինյակին հաղորդակից դարձնել իր պլաններին: Ռասսոինյակը կարծեց, որ դժբախտություն է պատահելու, բարոնը նրան հավատացրեց, որ նա փրկելու է գործը: Սակայն երբ կաժի թելերը շատ են լինում, անպայման հանգույցներ են գոյանում, Ռասսոինյակը դողում է Դելֆինի հարստության համար, դրա համար նա դրդեց բարոնուհուն ձեռք բերելու անկախությունը, պահանջելով ունեցվածքի բաժանում, երդվեց իր մտքում հաշիվները փակել նրա հետ, եռապատկելով բարոնուհու հարստությունը, որովհետև Էժենը իրեն համար ոչինչ չէր պահանջում, Նյուսինգենը խնդրեց նրան ընդունել, կատարյալ հաջողության դեպքում, հազար ֆրանկ արժողությամբ քսանհինգ բաժնետոմս՝ ներդրված արծաթախառն կապարի հանքերում:

Ռաստինյակը վերցրեց դրանք, նրան չվիրավորելու համար: Նյուսինգենը մշակել էր Ռաստինյակին նախընթաց օրը երեկոյան, երբ մեր բարեկամը ամուսնանալու խրատ էր տալիս Մալվինային: Տեսնելով այն ընտանիքներին, որոնք մի հարյուրյակ կլինեն և իրենց հարստության վրա վստահ հանգիստ ման են գալիս Փարիզում, տեսնելով բոլոր այդ Գոդֆրուա դը Բոդենորներին, դ'Ալդրիգերներին, դ'Էզլմոններին և ուրիշներին, Ռաստինյակը մի սարսուռ զգաց, ինչպես մի երիտասարդ գեներալ, որը նախքան ճակատամարտը առաջին անգամ դիտում է բանակը: Խեղճ փոքրիկ Իզորը և Գոդֆրուան, իրենց սիրո խաղի մեջ արդյո՞ք չէին ներկայացնում Ացիսն ու Գալաթեն այն քարաժայռի ներքև, որը միակնի և հաղթ Պոլիֆեմը պատրաստվում էր նրանց վրա գցելու:

— Այս սատանորդի Բիսիուն ուղղակի տաղանդավոր է,— ասաց Բլոնդեն:

— Ա՛հ, ես ձեզ հրապուրելու դիտում չունեմ,— ասաց Բիսիուն, մեծ հրճվանք զգալով իր հաջողությունից և նայելով իր ապշահար հանդիսականների վրա:— Երկու ամիս է ինչ,— վերսկսեց նա այդ ընդմիջումից հետո,— Գոդֆրուան անձնատուր էր լինում ամուսնացող մարդու երանություններին: Այդպիսի ժամանակ մարդ նման է այն թռչուններին, որոնք գարնանը իրենց բույնն են կառուցում, գնում են, գալիս, հարդի շյուղեր են հավաքում և դրանցով տեղ շինում իրենց ձվերի համար:

Իզորի ապագա ամուսինը Լապլանշ փողոցի վրա հագար էկյույով վարձել էր հարմարություններ ունեցող մի առանձնատուն, որը ոչ շատ մեծ էր, ոչ էլ փոքր: Ամեն առավոտ նա գնում էր այնտեղ ստուգելու վերանորոգման աշխատանքը: Նա իր նոր բնակարանում ստեղծել էր հանգստավետ պայմաններ, այն միակ լավ բանը, որ գոյություն ունի Անգլիայում: Այնտեղ նա տեղադրել էր ջեռուցման սարք, որպեսզի տանը ունենա միապաղաղ ջերմություն, ընտիր կահույք, ոչ շատ փայլուն, ոչ էլ շատ վայելուչ, թարմ և աչքի համար դուրեկան գույնով, արտաքին ու ներքին վարագույրներ՝ բոլոր լուսամուտներին, արծաթյա սպասներ և նոր կառքեր: Նա կարգի էր բերել տվել ախոռը, ձիերի սարքը, ծածկը, որտեղ Տոբի-Ժոբի-Պեդդին աշխույժ ցատկոտելու էր, ազատ արձակված արջակի նման, երջանիկ, որովհետև իմացել էր, որ տանը լինելու են կանայք և **միլեդի**: Կիրքը այն տղամարդու, որը տնտեսություն է ստեղծում, պատի ժամացույցի ընտրություն է կատարում, որն իր ապագա կնոջ մոտ է գալիս բազմաթիվ կերպասների նմուշները գրպանում պահած, նրա հետ խորհրդակցում ննջասենյակի կահավորման շուրջ, որը սիրուց տարված անվերջ գնում ու գալիս է, դա մի բան է, որ ազնիվ սիրտ ունեցողներին է ուրախացնում, մեկ էլ ապրանք վաճառողներին: Եվ քանի որ չկա ոչինչ ավելի դուրեկան բան, քան քսանյոթ տարեկան գեղեցիկ երիտասարդի ամուսնությունը քսան տարեկան հրապուրիչ, լավ պարող մի աղջկա հետ, Գոդֆրուան չիմանալով, թե ի՛նչ նվեր էր անելու հարսին, հրավիրեց Ռաստինյակին և տիկին դը Նյուսինգենին նախաճաշի, խորհրդակցելու համար այս հույժ կարևոր հարցի շուրջը: Նա հրաշալի գաղափար ունեցավ հրավիրելու նաև իր զարմիկ՝ դ'Էզլմոնին և նրա կնոջը, ինչպես նաև տիկին դը Մերիզին: Աշխարհիկ կանայք առհասարակ սիրում են մի անգամ պատահաբար զվարճանալու համար լինել տղամարդկանց տանը նախաճաշի:

— Դա նրանց համար հավասար է դպրոցի դասերից բացակայելու,— ասաց Բլոնդեն:

— Նրանք պիտի գնային տեսնելու ապագա ամուսինների փոքրիկ առանձնատունը Լա Պլանշ փողոցում,— վերսկսեց Բիսիուն:— Այդ փոքրիկ էքսկուրսիաները կանանց համար այն նշանակություն ունեն, ինչ թարմ միսը մարդակեր գազանների համար, այդ ձևով նրանք թարմացնում են իրենց ներկա կյանքը այն մանկամարդուհուն հատուկ ուրախությամբ, որը դեռևս չի թառամել վայելքներից: Մեղանը սարքվեց փոքր հյուրասենյակում, որը, ասես ամուրիի կյանքը

թաղելու համար, զարդարված էր դիակառքի ձիու նման: Պատվիրված նախաճաշը կազմված էր այն համեղկերակուրների տեսակներից, որ կանայք այնքան շատ են սիրում ուտել, կրծել ու ծծել առավոտյան ժամերին, երբ սարսափելի ախորժակ են ունենում, բայց չեն խոստովանում, որովհետև կարծես իրենց մատնած կլինեն, եթե ասեն.— «Ես սոված եմ»:— Իսկ ինչո՞ւ մենակ եք,— ասում է Գողֆրուան, Ռաստինյակին, երբ սա ներս է մտնում:— Տիկին դը Նյուսինգենը տխուր է, ես քեզ հետո կպատմեմ բոլորը,— ասում է Ռաստինյակը, դառնացած մարդու արտահայտությամբ:— Խռովե՞լ եք... ,— բացականչում է Գողֆրուան:— Ո՛չ,— ասում է Ռաստինյակը:— Ժամը չորսին կանայք թողնում են սեղանը և շտապում են Բուլոնյան անտառ, Ռաստինյակը մնում է հյուրասենյակում և սկսում է մելամաղձոտ հայացքով նայել լուսամուտից Տոբի-Ժոբի-Պեդդին, որը համարձակ կանգնել էր տիրուրիին լծած ձիու առաջ, Նապոլեոնի նման բազուկները խաչաձևած. նա կենդանուն հնազանդեցնում էր իր զիլ ձայնով և ձին վախենում էր Ժոբի-Տոբիից:— Ասա տեսնենք, ինչ է պատահել քեզ, սիրելի բարեկամ,— ասում է Գողֆրուան Ռաստինյակին,— դու մոայլ ես ու մտահոգ, քո ուրախությունը անկեղծ չէ: Անկատար երջանկություն՝ նա է տանջում քո հոգին: Իրոք, շատ տխուր բան է, երբ օրինական ձևով, եկեղեցիով կամ մերիով չես ամուսնացել այն կնոջ հետ, որին սիրում ես:— Միտելի բարեկամ, դու քաջություն ունե՞ս արդյոք լսելու այն, ինչ ես քեզ ասելու եմ և կկարողանա՞ս արդյոք հասկանալ, թե մարդ ի՞նչ աստիճան կապված պետք է լինի մեկի հետ, կատարելու մի անգաղտնապահություն, որի համար ես ինձ հանցավոր եմ դարձնելու,— ասում է Ռաստինյակը այնպիսի տոնով, ասես մտրակի հարված է տալիս:— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել,— հարցնում է Գողֆրուան, գույնը գցելով:— Քո ուրախությունն ինձ տխրություն էր պատճառում, իմ սիրտը չի կարող դիմանալ, տեսնելով այս ճոխ սեղանը, այս պատրաստությունները, այս փթթող երջանկությունը, ես ուժ չունեմ գաղտնիքը թաքցնելու քեզանից:— Դե, ասա՛ մի երկու-երեք բառով:— Երդվի՛ր ինձ, պատվո խոսք տուր, որ այս հարցում քար լուրջություն ես պահելու:— Քա՛ր լուրջություն:— Որ եթե երբևիցե քո մերձավորներից մեկն ու մեկն ուզենա իմանալ այդգաղտնիքը, չես ասելու:— Երբե՛ք:— Լավ ուրեմն, Նյուսինգենը այս երեկո մեկնեց Բրյուսել, եթե լուծարք կատարել հնարավոր չլինի, պետք է սնանկություն հայտարարվի: Դեկֆինը այս առավոտ իսկ դատարանից պահանջել է իր գույքի բաժանումը: Դու ժամանակ ունես, կարո՞ղ ես փրկել քո հարստությունը:— Ինչպե՞ս,— ասում է Գողֆրուան, իր երակներում զգալով արյան սառչելը:— Բարոն դը Նյուսինգենին պարզապես մի նամակ գրիր, թվագրված տասնհինգ օր առաջ, որտեղ դու նրան կպատվիրես քո բոլոր փողերը վերածել ակցիաների (այստեղ Ռաստինյակը տվեց Կլապարոն ակցիոներական ընկերության անունը): Դու, առնվազն տասնհինգ օր, մեկ ամիս, կարող է երեք ամիս ժամանակամիջոց ունես քո ակցիաները ծախելու ներկա արժեքից բարձր գներով. հնարավոր է դեռես, այդ ակցիաների արժեքինը բարձրանա:— Իսկ դ՛եզլմոնը, որ մեզ հետ նախաճաշում էր, դ՛եզլմոնը, որը Նյուսինգենի բանկում մեկ միլիոն ունի:— Լսի՛ր, ես չգիտեմ այդ ակցիաներից բավարար չափով կգտնվի՞ նրան բավարարելու համար, բացի այդ, ես նրա բարեկամը չեմ, ես չեմ կարող դը Նյուսինգենի գաղտնիքը մատնել, դու նրան այդ մասին ոչինչ պետք չէ խոսես: Եթե դու մի բառ անգամ ասես, հետևանքների համար ինձ պատասխանատու կլինես:

Գողֆրուան տասը բոպե բացարձակ անշարժության է մատնվում:— Համաձա՞յն ես, այդ կամ ոչ,— անգթորեն հարցնում է Ռաստինյակը:— Գողֆրուան վերցնում է մի գրիչ և թանաք և գրում ու ստորագրում այն նամակը, որը թելադրում է Ռաստինյակը:— Իմ խեղճ զարմիկ,— բացականչում է Գողֆրուան:— Ամեն մարդ իրեն համար,— ասում է Ռաստինյակը:— Մեկին գցեցինք,— ասում է Ռաստինյակը իր մտքում, մենակ թողնելով Գողֆրուային: Այն ժամանակամիջոցում, երբ Ռաստինյակը մանյովրում էր Փարիզում, ահա թե ի՞նչ էր իրադրությունը Բորսայում: Ես պրովինցիալ մի բարեկամ ունեմ, հիմարի մեկը, որը ժամի չորսի և հինգի մոտերը, Բորսայի մոտից անցնելիս ինձ հարց էր տալիս, թե ինչի՛ համար են հավաքվել այս մարդիկ, և ինչի՛ մասին են

խոսում այդ շատախոսները, որոնք գնում են, գալիս և ինչո՞ւ զբոսնել, երբ արժեթղթերի կուրսը անդառնալիորեն հաստատված է:— «Բարեկա՛մս,— ասում են նրան,— նրանք ճաշել են, այժմ մարսում են, մարսողության ժամանակ հարևանին են չարախոսում, Փարիզում առանց դրան առևտրական ապահովություն չի լինում: Այդտեղ են առաջ տանում գործերը, այնտեղ կա ուն, օրինակ, Պալման, որի հեղինակությունը հավասար է Գիտությունների արքայական ակադեմիայում Արագոյի ունեցած հեղինակությանը: Երբ նա ասի՝ եղիցի սպեկուլյացիա, սպեկուլյացիան կատարված է»:

— Պարոննե՛ր,— ասաց Բլոնդեն,— ինչ մարդ է այդ հրեան, որը եթե ոչ համալսարանական գոնե ունիվերսալ կրթություն ունի: Նրա ունիվերսալությունը գուրկ չէ խորությունից, ինչ նա իմանում է, իմանում է խորապես, բազմակողմանի, գործարքների խնդրում նրա հանճարը անհասանելի է և ինքնաբուխ. նա մեծ ռեֆերենդարն է Փարիզի Բորսայի վրա իշխող գայլերի, որոնք ոչ մի գործարքի չեն ձեռնարկում, մինչև Պալման լավ չուսումնասիրի: Նա ծանրախոհ մարդ է, լսում է, զննում է, խորհում և իր խոսակցին, որը տեսնելով նրա ուշադրությունը, կարծում է թե նրան արդեն համոզել է, ասում է,— դա իմ գործին չի գալիս: Ամենից ավելի զարմանալին այն է, որ տասը տարի լինելով Վերբրյուստի ընկերակից, երբեք գծություն չի եղել նրանց միջև:

— Դա կարող է պատահել այնպիսի մարդկանց միջև, որոնք կա՛մ չափազանց ուժեղ նկարագրի տեր են կա՛մ չափազանց տկար, իսկ միջին բնավորություն ունեցող մարդիկ վիճում են այնքան, մինչև դառնան թշնամիներ,— ասաց Կուստյուրը:

— Դուք հասկանում եք, իհարկե,— ասաց Բիսիուն,— որ Նյուսինգենը հմտաբար և վարժ ձեռքերով Բորսայի սյուների տակ գցեց մի փոքր ռումբ, որը պայթեց ժամը չորսին:— Լսե՞լ եք կարևոր լուրը,— ասում է դյու Տիյեն Վերբրյուստին, նրան մի անկյուն տանելով,— Նյուսինգենը Բրյուսելումն է, իսկ նրա կինը դատարան է դիմել, պահանջելով գույքերի բաժանում:— Դուք գործակի՞ց եք նրա սնանկության,— ասում է Վերբրյուստը ծիծաղելով: Հիմարություն մի՛ արա, Վերբրյուստ,— ասում է դյու Տիյեն,— դուք ճանաչում եք այն մարդկանց, որոնք ունեն նրա վճարելի մուրհակներից. լսի՛ր, այս առիթով կարելի է մի կոմբինացիա անել: Մեր նոր ընկերության բաժնետոմսերը շահում են քսան տոկոսով, իսկ երեք ամիս հետո քսանհինգ տոկոս, ձեզ պարզ է, թե ինչո՞ւ. հիանալի դիվիդենտ են բաշխում:— Խորամանկ,— ասում է Վերբրյուստը,— հեռացե՛ք, դուք սատանա եք և ձեր երկար ու սուր ժանիքները կարագի մեջ եք խրում:— Մակայն թույլ տվեք ինձ ասել, այլապես ժամանակ չի լինի գործելու: Լուրն իմանալով, ես անմիջապես գտա հնարքը, և անձամբ տեսա տիկին դը Նյուսինգենին՝ արցունքների մեջ, նա վախենում է իր հարստության համար:— Խե՛ղճ փոքրիկ,— ասաց Վերբրյուստը հեգնական արտահայտությամբ:— Իսկ այժմ,— վերսկսեց ալգասցի նախկին հրեան հարց տալով դյու Տիյեին, որ լռում էր,— իսկ այժմ, իմ մոտ ունեմ հազար բաժնետոմս, յուրաքանչյուրը հազար ֆրանկ արժողությամբ, որ Նյուսինգենը ինձ տրամադրել է տեղավորելու համար: Հասկանո՞ւմ եք:— Միանգամայն:— Վերցնենք տասը, քսան տոկոս զեղչով Նյուսինգենի պարտամուրհակներից մեկ միլիոն ֆրանկի. մենք այդ միլիոնից կունենանք բավական լավ օգուտ, որովհետև մենք կլինենք և՛ պարտատեր, և՛ պարտապան, այնուհետև ծայր կտա շփոթը. սակայն գործենք չափազանց զգուշությամբ, որովհետև պահողները հանկարծ կարող են կարծել, թե մենք մանևրում ենք ի նպաստ դը Նյուսինգենի: Վերբրյուստը իսկույն հասկացավ կատարվելիք խաղն ու խաբեությունը և դյու Տիյեի ձեռքը սեղմեց, նրա վրա գցելով հայացքը այն կնոջ, որը իր հարևանին խաղի է բերում:— Իմացե՞լ եք նորությունը,— ասում է նրանց Մարտեն Ֆալլեն,— Նյուսինգենի բանկը դադարեցրել է վճարումները:— Վա՛հ,— ասում է Վերբրյուստը,— բայց մի՛ տարաձայնեք լուրը, թողեք, որ նրա մուրհակներից ունեցողները կատարեն իրենց գործառնությունները:— Աղետի պատճառներին ծանոթ եք.. .,— ասում է Կլապարոնը, միջամտելով:— Դու ոչինչ չգիտես,— ասում է նրան դյու Տիյեն.— ոչ մի աղետ չի պատահել, այլ

միանվագ վճարումներ են կատարվելու: Նյուսինգենը վերսկսելու է իր գործառնությունները և ես ընդառաջելու եմ նրան այնքան գումարով, ինչքան ինքը ցանկանա: Ես իմանում եմ վճարումները դադարեցնելու պատճառը. նա իր ամբողջ կապիտալը ներդրել է հոգուտ Մեքսիկայի, որը նրան վերադարձնելու է մետաղներ, իսպանական թնդանոթներ, այնքան վատ ձուլված, որ խառն է ոսկու հետ, զանգակներ, եկեղեցական արծաթյա իրեր, մեկ խոսքով Արևմտյան Հնդկաստանում իսպանական միապետությունից մնացած հնոտին: Այս արժեքների ստացումն ուշանում է, որի համար մեր սիրելի բարոնը նեղ դրության է մատնվել, ահա բոլորը:— Ճիշտ է,— ասում է Վերբրյուստը,— ես կվերցնեմ նրա մուրհակները քսան տոկոս զեղչով: Այդ պահից սկսած, լուրը տարածվում է հարդի դեզի մեջ ընկած կրակի արագությամբ: Իրար հակասող ամեն տեսակ բաներ են խոսում: Բայց այնպիսի վստահություն գոյություն ունի Նյուսինգեն բանկի վերաբերմամբ, որ ամեն մարդ պահում է Նյուսինգենի մուրհակները:— Պետք է, որ Պալման մեզ օժանդակի այս գործում,— ասում է Վերբրյուստը: Պալման պատգամախոս է Կելլերների, որոնք արդեն խեղդվել էին Նյուսինգենի բանկի արժեթղթերով: Բավ էր, որ նա ահագանգող մի բառ արտասաներ: Վերբրյուստը ձեռք բերեց Պալմայի օժանդակությունը, որը ահագանգի նախանշանը տվեց:

Հաջորդ օրը մեծ տագնապ էր տիրում Բորսայում: Կելլերները, Պալմայի խորհրդով զիջեցին տալ իրենց արժեթղթերը տասը տոկոս զեղչով, և Բորսայում տիրապետողներ դարձան. նրանք ճանաչվում էին որպես շատ բանիմաց և խորամանկ: Տայֆերը իսկույն ծախեց երեք հարյուր հազար ֆրանկի՝ քսան տոկոսով, Մարտեն Ֆալլեն՝ երկու հարյուր հազար՝ տասնհինգ տոկոսով: Բայց Ժիգոնեն կռահեց խաղը: Նա ավելի բորբոքեց խուճապը, որպեսզի կարողանա ձեռք բերել Նյուսինգենի մուրհակներից, որպեսզի մի քանի տոկոս շահի, փոխանցելով Վերբրյուստին: Բորսայի մի անկյունում նա տեսնում է խեղճ Մատիֆային, որը երեք հարյուր հազար ֆրանկ ուներ Նյուսինգենի բանկում: Դեղավաճառը դժգույն ու գունատ, դողդողալով տեսավ սարսափելի Ժիգոնենին, իր նախկին թաղամասի վաշխառուին, որը մոտենում էր, ասես վերջին հարվածը տալու:— Գործերը վատ են ընթանում, կրիզիսը վրա է հասնում. սակայն այդ ձեզ չի վերաբերում, հայր Մատիֆա, դուք քաշվել եք գործերից:— Բայց սխալվում եք, Ժիգոնե, մոտ երեք հարյուր հազար ֆրանկով կապվել եմ. ես ցանկանում էի այդ գումարը օգտագործել իսպանական ռենտայի համար:— Ձեր հարյուր հազարները փրկված են, իսպանական ռենտան կարող էր ձեզ լրիվ կուլ տալ. մինչդեռ Նյուսինգենի մոտ ես ձեզ կարող եմ տալ որևէ բան ձեր հաշվին, ինչպես հարյուրից հիսուն:— Ես կցանկանայի, որ լուծարք կատարվի,— պատասխանում է Մատիֆան,— երբեք չի պատահել, որ մի բանկիր հիսուն տոկոսից պակաս վճարի: Ա՛հ, եթե հարցը միայն տասը տոկոս կորուստի մասին լիներ,— ասում է նախկին դեղավաճառը:— Դե, լավ, տասնհինգ տոկոսով համաձայն եք,— ասում է Ժիգոնեն:— Ինձ թվում է, չափազանց շտապում եք,— ասում է Մատիֆան:— Գնաք բարով, հաջողություն եմ ցանկանում ձեզ,— ասում է Ժիգոնեն:— Տասներկուսով համաձայն եք:— Համաձայն եմ,— ասում է Ժիգոնեն: Երկու միլիոնի արժեքումները նույն երեկոյան իսկ վերագնվեցին և դյու Տիյեն դրանք Նյուսինգենի բանկը տարավ, այդ երեք պատահական կոմպանյոնների անունից, որոնք հաջորդ օրն իսկ ստացան իրենց խաղագումարը: Ծերացող, սիրուն, կարճիկ բարոնուհի դ'Ալդրիգերը նախաճաշում էր իր երկու աղջիկների և Գոդֆրուայի հետ, երբ Ռաստինյակը դիպլոմատի տեսք ընդունած՝ եկավ ֆինանսական կրիզիսի մասին խոսք բացելու: Բարոն դը Նյուսինգենը,— ասաց նա,— մեծ համակրություն տածելով դ'Ալդրիգեր ընտանիքի նկատմամբ, կարգադրել է, դժբախտության դեպքում, բարոնուհու հաշիվները ծածկել իր լավագույն և ապահով արժեթղթերով, արծաթախառն կապարի հանքերում ներդրված արժեքումներով, բայց բարոնուհու ապահովության համար իսկ, հենց ինքը պետք է խնդրեր Նյուսինգենից վերոհիշյալ ձևով օգտագործելու համար արժեթղթերը:— Խե՛ղճ Նյուսինգենը,— ասաց բարոնուհին,— արդյոք ի՞նչ է կատարվում նրա հետ:— Նա Բելգիայում է. նրա կինը գույքերի բաժանում է պահանջում դատարանից, բայց ինքը գնացել է օժանդակություն

խնդրելու բանկիրներից:— Աստված իմ, այս դեպքը ինձ հիշեցնել է տալիս իմ խեղճ ամուսնուն: Միբելի պարոն դը Ռաստինյակ, անշուշտ այս բոլորը ձեզ շատ վիշտ է պատճառում, ձե՛զ, որ այնքան կապված եք այդ տան հետ: Միայն թե կողմնակի մարդիկ դրանից չտուժեն, հետագայում նրա բոլոր բարեկամները վարձատրվելու են: Նյուսինգենը դուրս կգա այդ դժվարություններից. նա ճկուն ու ձեռներեց մարդ է:— Նամանավանդ ազնիվ մարդ է,— ասում է բարոնուհին:

Մի ամիս չանցած, Նյուսինգենի բանկի պարտքերը լուծարքի էին ենթարկվել, և այն էլ միայն նամակների փոխանակությամբ, նամակներ, որոնց միջոցով յուրաքանչյուր ավանդատու պահանջում էր օգտագործել իր գումարը նախապես նշանակված արժեքներով, առանց որևէ ուրիշ պաշտոնական ձևակերպումների՝ բանկերի կողմից, բացի Նյուսինգեն դրամատան արժեթղթերի վրա կատարված գեղչի՝ ընդդեմ այն արժետոմսերի, որոնց նկատմամբ մեծ պահանջ կար: Եվ այն ժամանակամիջոցում, երբ դյու Տիյեն, Վերբյուստը, Կլապարոնը, Ժիգոնեն և իրենք իրենց ճարպիկ ու հմուտ համարող մի քանի մարդիկ, արտասահմանից Նյուսինգեն դրամատան մուրհակներ էին գնում, մեկ տոկոս շահաբաժին վճարելով, որովհետև դեռևս նրանք շահում էին, փոխանակելով այն ընդդեմ բարձր արժետոմսերի, շուկաները այնքան մեծ տարածում ունեին Փարիզյան բորսայում, որ ոչ ոք, ո՛չ մի բանից վախենալու պատճառ չուներ: Նյուսինգենի մասին մարդիկ շատախոսում էին, քննարկում էին նրա դրությունը, դատափետում և պատրվակներ էին գտնում նրան զրպարտելու, ասելով, որ նա շատ շքեղ է ապրում, որ կոմբինացիաներ է անում, որ երբ մարդ թույլ է տալիս իրեն վարվել այդպես, անխուսափելիորեն կկործանվի և այլն: Այս բոլոր իրադրությունների և աղմկաբարությունների եռուն պահին, եղան մարդիկ, որոնք շատ զարմացան Ժնևից, Բալից, Միլանից, Նեապոլից, Ջենովայից, Մարսելից, Լոնդոնից ստանալով նամակներ, որոնց մեջ իրենց թղթակիցները հայտարարում էին, առանց զարմանքի, որ իրենց առաջարկում են մի տոկոս շահ Նյուսինգենի մուրհակների համար: Նյուսինգենի, որի սնանկության մասին էին հայտնում:— Սրա տակ ինչ-որ բան կա թաքնված,— ասում էին զիշակերները: Դատարանը հայտարարել էր Նյուսինգենի և կնոջ միջև գույքերի բաժանում: Հարցն է՛լ ավելի բարդացավ, երբ թերթերը հայտնեցին բարոն դը Նյուսինգենի վերադարձի մասին, հայտարարելով, որ իբր նա Բելգիա էր գնացել համաձայնության գալու ինչ-որ բելգիացի նշանավոր արդյունաբերողի հետ, նախկին հանքածուխի հանքերի շահագործման կապակցությամբ, հանքահորեր, որոնք գտնվում էին Բոսսյու կոչվող անտառների շրջանում և որոնց շահագործումը կանգ էր առել: Բարոնը նորից հայտնվեց Բորսայում, սակայն նա հոգ չտարավ հերքելու իր բանկի մասին տարածվող զրպարտչական շուկաները, նույնիսկ նա արհամարհեց որևէ հայտարարություն անել թերթերի միջոցով. նա երկու միլիոն արժողությամբ մի կալվածք գնեց Փարիզի շրջակայքում: Վեց շաբաթ հետո Բորդոյի թերթը հայտարարեց, որ Նյուսինգենին պատկանող յոթ միլիոն արժողությամբ մետաղներով բարձած երկու նավեր են հասել: Պալման, Վերբյուստը և դյու Տիյեն հասկացան, որ խաղը խաղացված էր, սակայն միմիայն իրենք հասկացան այն: Դպրոցական աշակերտների նման նրանք ուսումնասիրեցին ֆինանսական այդ խաղի բեմադրությունը, գլխի ընկան, որ այն պատրաստված էր տասնմեկ ամիսների ընթացքում և հայտարարեցին, որ Նյուսինգենը Եվրոպայի ամենամեծ ֆինանսիստն է հանդիսանում: Ռաստինյակն այս բոլորից ոչինչ չհասկացավ, բայց նա դրանում շահեց չորս հարյուր հազար ֆրանկ, որ Նյուսինգենը նրան թույլ էր տվել շահելու, խուզելով փարիզյան ոչխարների: Այդ գումարով նա օժիտ պատրաստեց իր երկու քույրերի համար: Դեզլմոնը իր զարմիկ Բոդենորի կողմից նախագգուշացված լինելով, եկել էր խնդրելու Ռաստինյակից, որ նա իր միլիոնից վերցնի տասը տոկոս, եթե նրան հաջողվեր այդ գումարով գնել ջրանցքի արժետոմսեր, ջրանցք, որը կառուցվելու էր, որովհետև Նյուսինգենը այնքան լավ էր խաբել կառավարությանը այդ գործում, որ հիշյալ ջրանցքի բաժնետերերը շահագրգռված էին կառուցման աշխատանքների ձգձգումով: Շառլ Գրանդեն խնդրեց Դեֆինի սիրահարին իր փողերը փոխանակել արժետոմսերով: Մի խոսքով Ռաստինյակը տասը օրվա ընթացքում խաղաց Լոյի

դերը— ամենագեղեցիկ դքսուհիները խնդրում էին նրան արժետոմսեր տալ իրենց. այս տղան այժմ կարող է քառասուն հազար եկամուտ ունենալ, որի աղբյուրը գտնվում է արծաթախառն կապարի հանքերում ներդրված արժետոմսերում:

— Եթե ամեն մարդ շահում է, ապա ո՞վ է կորցնում,— ասաց Ֆինոն:

— Այժմ եզրակացնենք,— վերսկսեց Բիսիուն:— Հրապուրված այն կեղծ շահաբաժնից, որ ստացան իրենց փողերը արժետոմսերի վերածելուց մի քանի ամիս հետո, մարկիզ դ'Էգլմոնը և Բողենորը (ես նրանց ներկայացնում եմ ձեզ, որպես հասարակության տիպիկ ներկայացուցիչների) պահեցին դրանք, նրանց կապիտալը այժմ երեք տոկոս ավելի էր տալիս, նրանք սկսեցին փառաբանել դր Նյուսինգենին և պաշտպանեցին նրան ճիշտ այն պահին, երբ բոլորը կասկածում էին, որ նա կարող է դադարեցնել վճարումները: Գողֆրուան ամուսնացավ իր սիրելի Իզորի հետ և ստացավ հարյուր հազար ֆրանկի արժետոմսեր արծաթախառն կապարի հանքերում: Այս ամուսնության առթիվ Նյուսինգենները կազմակերպեցին այնպիսի փառահեղ մի պարահանդես, որի նմանը երբեք չէր եղել: Դելֆինը երիտասարդ հարսին նվիրեց կարմիր հակիներով մի սիրուն զարդ: Իզորը պարեց, սակայն ոչ որպես դեռատի աղջիկ, այլ որպես երջանիկ կին: Կարճահասակ բարոնուհին ավելի քան երբեք նմանվեց ալպյան հովվուհու: Պարահանդեսի ընթացքում դու Տիյեն Մալվինային, «Տեսն՝ լ եք Բարսելոնը»-ի Մալվինային չոր-չոր խրատում էր լինել տիկին Դերոշ: Դերոշը, դրդված Նյուսինգեններից և Ռաստինյակից, փորձեց խոսել շահաբեր գործառնությունների մասին, բայց հենց որ լսեց արծաթախառն կապարի հանքերի ակցիաներով օժիտ կազմելու խոսքը, ետ կացավ և շուտ եկավ Մատիֆաների կողմը: Այնուամենայնիվ Շերշ-Միդի փողոցում նա հայտնաբերեց անիծված ջրանցքի արժետոմսեր, որոնք Ժիգոնեն խցկել էր Մատիֆայի ձեռքը փողի փոխարեն: Պատկերացնում ես դու Դերոշին, երբ նա տեսավ, թե ինչպե՛ս փոքր թիակով խաղասեղանի վրայից Նյուսինգենը հավաքում է այն երկու օժիտների գումարը, որ նա թիրախ էր ընտրել: Աղետը չուշացավ: Կլապարոնի ակցիոներական ընկերությունը շատ գործեր ձեռնարկեց, սակայն կոկորդում մնաց: Ընկերությունը դադարեցրեց տոկոսների և շահաբաժինների վճարումները, չնայած, որ գործերը շատ լավ էին ընթանում: Այս դժբախտությունը զուգադիպեց 1827 թվականի իրադարձություններին: 1829 թվականին Կլապարոնը արդեն ճանաչված մարդ էր և բոլորն էլ գիտեին, որ նա երկու տիտանների դրածոն է հանդիսանում, նա ցած ընկավ իր պատվանդանից: Արժետոմսերի գինը հազար երկու հարյուր հիսուն ֆրանկից ընկավ չորս հարյուր ֆրանկի, չնայած որ նրանց իսկական արժեքն էր վեց հարյուր ֆրանկ: Նյուսինգենը, որ իմանում էր դրանց բուն արժեքը, գնեց այդ ակցիաներից: Կարճահասակ բարոնուհի դ'Ալդրիգերը վաճառել էր արծաթախառն կապարի հանքերում ներդրված իր արժետոմսերը, որոնք ոչ մի շահ չէին բերում. Գողֆրուան էլ վաճառեց իր կնոջ ակցիաները նույն պատճառով: Բարոնուհու նման Բողենորն էլ փոխեց հանքերում ներդրված արժետոմսերը, Կլապարոն ընկերության բաժնետոմսերի հետ: Պարտքեր ունենալու պատճառով նրանք հարկադրվեցին շատ էժան գնով վաճառել: Իրենց ունեցած յոթ հարյուր հազար ֆրանկի փոխարեն ստացան երկու հարյուր հազար ֆրանկ: Կորուստը հաշվելուց հետո, նրանք մնացած գումարը խոհեմաբար ներդրեցին երեք տոկոսանոց ռենտայում, որը արժենշված էր՝ հարյուրին յոթանասունհինգ:

Գողֆրուան, անհոգ և երջանիկ այդ տղան, որ միայն վայելել գիտեր, հանկարծ խելքի եկավ, որ ծանրաբեռնված է մանկամարդ ու սագի նման հիմար մի կնոջով, որն անկարող է տանել դժբախտությունը: Իր սիրած էակի փոփոխությունը նա նկատեց վեց ամիս հետո, երբ զգաց, որ քաշելու է նաև հոգսը առանց հացի մնացած մի գոքանչի, որ անընդհատ տուալետի մասին է երազում: Երկու ընտանիքները միացան, որպեսզի կարողանան մի կերպ իրենց գոյությունը պաշտպանել: Գողֆրուան ստիպված եղավ դիմել իրնախկին հովանավորներին, որոնք այժմ սառն վերաբերմունք էին ցուցաբերում, որպեսզի կարողանա հազար էկյու ռոճիկով մի պաշտոն ձարել

ֆինանսների մինիստրությունում: Բարեկամներ՝ ըր... ջրերը տարել էին: Ազգականներ՝ ըր... նրանք միմիայն զարմանում են և հետևյալ արտահայտություններով խոստանում.— «Ի՞նչ ես ասում, սիրելիս, բայց անհոգ մնա, ես պատրաստ եմ՝ բոլոր տեսակի աջակցություն ցույց տալու, խեղճ տղա»: Խոստումներ, որ քառորդ ժամում իսպառ մոռացության էին տրվում:

Բողենորը իր պաշտոնը պարտական էր դը Նյուսինգենին և դը Վանդենեսին: Հիմա Բողենորներն ու դ'Ալդրիգերները, պատվավոր և դժբախտ մարդիկ, ապրում են Մոն-Թաբոր փողոցում չորրորդ հարկում, չհաշված գետնահարկը: Աղուֆյուսների թոռը՝ թանկագին Մավլինան, ամեն ինչ կորցրել է, դաշնամուրի դասեր է տալիս, որպեսզի բեռ չդառնա իր փեսային: Թուխ, մարմնեղ, բարակ ու չոր, նա նման է Պասսալակայից¹⁴ փախած մումիայի, որը ոտով ման է գալիս Փարիզում: 1830 թվականին Բողենորը կորցրեց իր պաշտոնը, և իր կինը չորրորդ երեխան ունեցավ: Տանը ութ հոգի էին, չհաշված երկու սպասավորները (Վիրթը և իր կինը): Իսկ փողը, միայն ութ հազար ֆրանկ եկամուտն էր: Արծաթախառն կապարի հանքերը այնքան շահաբաժին էին տալիս, որ հազար ֆրանկանոց արժեթուղթը բերում էր հազար ֆրանկ եկամուտ: Ռաստինյակն ու տիկին դը Նյուսինգենը գնեցին Գոդֆրուայի և Բարոնուհու վաճառած ակցիաները: Նյուսինգենը Հուլիսյան ռևոլյուցիայի շնորհիվ դարձավ Ֆրանսիայի պեր և Պատվո լեգեոնի օրդենի ասպետ: Թեև 1830 թվականից հետո, նա երբեք լուծարք չկատարեց, բայց ասում են, որ նա ունի տասնվեցից մոտ տասնութ միլիոնի հարստություն: Հաշվի առնելով Հուլիսյան ռևոլյուցիայի հրամանագրերը, նա վաճառեց իր բոլոր արժեթղթերը և համարձակորեն փոխեց երեք տոկոսանոց ռենտայի, երբ հարյուրից այն իջել էր 45-ի, իսկ պալատում հավատացած էին, որ նա այդ անում է նվիրվածությունից դրդված. այդ նույն ժամանակամիջոցում, դյու Տիլեի հետ ընկերացած, նա երեք միլիոն կորզեց այդ լողող ստահակ Ֆիլիպ Բրիդոյից: Վերջերս, Բուլոնյան անտառ գնալու համար Ռիվոլի փողոցով անցնելիս, մեր բարոնը կամարների տակ նկատում է Բարոնուհի դ'Ալդրիգերին: Փոքրիկ պառավը գլխին ուներ վարդագույն եզրով կանաչ գլխարկ, հագել էր ծաղկավոր շրջագգեստ, մետաքսյա մանտիլ, մեկ խոսքով նա միշտ նույն ալայան հովվուհին էր, որովհետև ինչպես երբեմն չէր հասկացել, թե ի՞նչն է պատճառը իր փարթամ կյանքի, այնպես էլ չէր հասկանում, թե ինչն էր իր դժբախտության պատճառը: Նա հենվել էր խեղճ Մավլինայի վրա, որը հերոսական անձնագոհության օրինակ էր ցույց տալիս: Նայելով նրանց, թվում էր, թե Մավլինան է պառաված մայրը, այնինչ Բարոնուհին երիտասարդ աղջկա տեսքն ուներ. Վիրթը, հովանոցը ձեռքին, հետևում էր նրանց:

— **Ահա մառդիկ,**— ասում է Նյուսինգենը մինիստր պարոն Կուենտեին, որի հետ զրոսնելու էր գնում,— **որոնց հառստացնել ես չգառոխացա: Պոտորիկն անցել է, խնդրում եմ, նորից ցեղ մոտ տեխավորեք Պոտենտին:**

Բողենորը ֆինանսների մինիստրությունում աշխատանք գտավ շնորհիվ Նյուսինգենի, որին դ'Ալդրիգերները անչափ գովում էին որպես հերոսական բարեկամի, և Նյուսինգենը իր կազմակերպած պարահանդեսներին շարունակում է հրավիրել ալայան փոքրիկ հովվուհուն և նրա աղջիկներին: Աշխարհում որևէ մեկին հնարավոր չի համոզել, թե ինչպես այս մարդը երեք անգամ և առանց որևէ բռնության ցանկացավ կողոպտել մարդկանց, որոնք հարստացել էին նրա շնորհիվ և հակառակ նրա կամքին: Ոչ մի հիմք չկա Նյուսինգենին մեղադրելու: Ո՛վ համարձակվի ասել, թե ամենագոր բանկերը հաճախ ավազակների որջեր են, նա ամենամեծ զրպարտությունն արած կլինի: Եթե պարտատուների կուրսն իջնում կամ բարձրանում է, եթե արժեթղթերը բարձրանում կամ անկում են կրում, այդ մակընթացության ու տեղատվության պատճառը մթնոլորտային փոխներգործությունն է, որը կապ ունի լուսնի ազդեցության հետ և մեծն Արագոն մեղավոր է այդպիսի կարևոր երևույթի շուրջ ոչ մի գիտական տեսություն տված չլինելու համար: Սրանից էլ

սկիզբ էառնում մի ֆինանսական ճշմարտություն, որի մասին ոչ մի բան գրված չեմ տեսել ես, ոչ մի տեղ...

— Ո՞րն է այդ ճշմարտությունը:

— Այն, որ պարտապանն ավելի ուժեղ է, քան պարտատերը:

— Օ՛, — ասաց Բլոնդեն, — քո ասածի մեջ ես տեսնում եմ Մոնտեսկյոյի մեկ խոսքի մեկնությունը, որի մեջ նա խտացրել է օրենքների ոգին:

— Ո՞րն է այդ, — հարցրեց Ֆինոն:

— Օրենքները սարդի ոստայններ են, որոնց միջոցով դուրս են գալիս խոշոր ճանճերը, իսկ փոքրերը մնում են:

— Ի՞նչ բանի ես ուզում հանգել, — հարց տվեց Ֆինոն Բլոնդեին:

— Բացարձակ միապետական կառավարության, կառավարման այն միակ ձևին, որտեղ օրենքի դեմ եղած մտաեղացումները կարող են խափանվել: Այո, ինքնակալությունը կփրկի ժողովուրդներին, օգնություն ցույց տալով արդարադատությանը, որովհետև ներման իրավունքը մի մեղալ է, որ հակառակ կողմ չունի. այն թագավորը, որը կարող է ներում շնորհել չարանենգորեն սնանկացողին, ոչինչ չի վերադարձնի կողոպտված զոհին: Օրինականությունը սպանում է ժամանակակից հասարակությանը:

— Այդ բանը դու գնա՛ ընտրողներին հասկացրու, — ասաց Բիսիուն:

— Ինչ-որ մեկը արդեն զբաղված է դրանով:

— Ո՞վ:

— Ժամանակը: Ճիշտ է ասել Լիոնի եպիսկոպոսը, որ եթե ազատությունը հին է, միապետությունը հավերժական է. մտքով առողջ որևէ ազգ, ի վերջո, այս կամ այն կերպ դրան է վերադառնալու:

— Վա՛հ, ինչ-որ մարդիկ են եղել մեր կողքի կաբինետում, — ասաց Ֆինոն, երբ մենք դուրս գալու համար վեր էինք կացել:

— Կողքում միշտ էլ մարդիկ են լինում, — պատասխանեց Բիսիուն, որը կարծես ավելի էր հարբած:

ՆՅՈՒՍԻՆԳԵՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈՒՆԸ

«Նյուսինգենի բանկային տունը» առաջին անգամ հրատարակվել է 1838 թվականին, Բալզակի երկերի երկհատորյակում: 1844 թվականին գրողն այն մտցնում է «Մարդկային կատակերգության» առաջին հրատարակության տասնմեկերորդ հատորում, «Փարիզյան կյանքի տեսարաններ» շարքում:

Նյուսինգենի ֆինանսական սպեկուլյացիաները, որոնց մասին պատմվում է վիպակի մեջ, սկսվել էին դեռևս XIX դարի առաջին տարիներին: Իսկ Հուլիսյան միապետության ժամանակաշրջանում,

բարոն Նյուսինգենը, ստանալով Ֆրանսիայի պերի կոչում, արդեն ուներ 18 միլիոն ֆրանկի կարողություն և ֆինանսական աշխարհի ամենագոր գիշատիչներից մեկն էր:

Պատահական չէ, որ Նյուսինգենը հանդես է գալիս Բալզակի քսանից ավելի երկերում: Հեղինակն ինքը իր ստեղծած կերպարն այնքան բնորոշ էր համարում, որ իր նամակներից մեկում հիշատակելով բանկիր Ռոտշիլդին, նրան անվանում է «խսկը Նյուսինգեն»:

Բանկիր Նյուսինգենի գործունեությունը կրում է բացեիբաց կողոպտչական բնույթ: Նրա կերպարում Բալզակն ընդհանրացրել է գիշատչական և պարագիտային ֆինանսական արիստոկրատիայի տիպական գծերը Հուլիսյան միապետության ժամանակ Ֆրանսիայում, որի մասին Մարքսը մատնանշում է, որ այնտեղ բիրժան կազմում է ոչ արտադրողական ճանապարհով աճել ցանկացող կապիտալի ներդրման գլխավոր շուկան:

Ի տարբերություն «մեծ ճանապարհների ասպետների», այսինքն՝ պարզապես ավազակների, «բիրժայի ասպետները» մնում են անպատիժ և կշիռ ունեն հասարակության մեջ:

Հուլիսյան միապետությունը իշխանությունը կենտրոնացնելով բանկիրների ձեռքը, Ֆրանսիայի աշխատավոր ժողովրդին նոր ու ավելի ծանր թշվառություն բերեց:

«Նյուսինգենի բանկային տունը» վիպակում, Բալզակը մատնանշում է քաղցն ու չքավորությունը, որին դատապարտված են ֆրանսիական բանվորները: Կանգ առնելով Լիոնի ջուլիակների հայտնի ապստամբության վրա, նա գրում է, որ երբ դադարում են պատվերները, բանվորները քաղցից մեռնում են, ասենք, աշխատելով էլ նրանք հազիվ են ծայրը ծայրին հասցնում: «Տաժանակիրն անգամ նրանից երջանիկ է», — ցատումով ասում է Բալզակը:

1 «Անրի Մոնիեի խոսքով ասած...» — Պրյուդոմ — ինքնաբավական և սահմանափակ բուրժուայի տիպ, ֆրանսիական գրող Անրի Մոնիեի (1805—1877) «Պարոն Պրյուդոմի մեծությունն ու անկումը» կատակերգության և «Պրյուդոմի մեմուարները» երկի գործող անձ:

2 Կյոր Ժակ (1395—1456) — ֆրանսիական հարուստ վաճառական, Կարլ VII-ի գանձապահը: Պալատական շրջանակները, որոնք շահագրգռված էին նրա ունեցվածքի բռնագրավումով, մեղադրեցին նրան պետական դավաճանության մեջ. նա փախավ Ֆրանսիայից և մեռավ տարագրված:

3 «Նեկկերի բանկն այդ ձևով կորստյան մատնվեց» — Նեկկեր Ժակ (1732—1804), ժնեցի բանկիր, որը տեղափոխվել էր Ֆրանսիա. երկու անգամ եղավ ֆինանսների մինիստր Լուդովիկոս XVI-ի կառավարման օրոք:

4 «Բանկը Կրոնոսի նման խժռում է իր երեխաներին» — Կրոնոս — հունական դիցաբանության մեջ Ջնսի հայրը, որ մեկը մյուսի հետևից խժռում էր իր նորածին երեխաներին, որովհետև նրան կանխագուշակել էին, որ նրանցից մեկը կխլի իր իշխանությունը:

5 «Ժաննոյի դանակի նման. ...» — Ժաննո — ֆրանսիական հնամենի կատակերգության գործող անձ, նա միամտորեն պարծենում էր իր դանակով, այն համարելով անփոփոխելի, թեպետ փոխել էին այդ դանակի թե՛ շեղբը և թե՛ կոթը:

6 Պարնի Էվարիստ—Դեզիրե (1753—1814) — ֆրանսիական լիրիկ բանաստեղծ, որի ստեղծագործությունը XIX դարում Եվրոպայում լայն հռչակ էր վայելում:

7 Ռոբեր Մակեր — Սենտ-Ամանի և Ֆրեդերիկ Լեմետրի նույնանուն պիեսի (1835 թ.) գլխավոր գործող անձ՝ ճարպիկ խաբեբա և «մեծ ճանապարհի ասպետ»։ Ֆրանսիայում սկսեցին այդպես անվանել խարդախ և անազնիվ գործարարներին։ «Դասակարգային պայքարը Ֆրանսիայում 1848-ից մինչև 1850 թվականը» աշխատության մեջ, Կարլ Մարքսը Լուի-Ֆիլիպին անվանում է «Ռոբեր Մակեր՝ գահի վրա»։

8«...Ալգասցի այդ Կալեբը...» — Կալեբ, ծեր, նվիրված ծառա, Վալտեր Սկոտի «Լամերմորյան հարսնացու» վեպի գործող անձ։

9 «Միսիսիպի» — ակցիոներական ընկերություն, հիմնված ֆինանսիստ Լոուի կողմից՝ սպեկուլյատիվ նպատակներով։

10 «Դուք գոհարավաճա՛ռ եք, պարոն Ժոս» — Մոլիերի «Մերը բուժիչ» կատակերգությունից մի ֆրագ, որը Ֆրանսիայում առած դարձավ և մատնանշում է անձնական շահագրգռության մասին այն մարդու մոտ, որը խորհուրդ է տալիս։ Այդ կատակերգության գործող անձ Ժոսը խորհուրդ է տալիս հիվանդ աղջկան բուժելու համար ձեռք բերել աղամանդյա կամ սուտակի զարդարանք։

11 «Մեզ մոտ շատ են խոսել Լիոնի դեպքերի, փողոցներում թնդանոթի կրակ բացող Ռեսպուբլիկայի մասին...» — Բալզակը նկատի ունի ջուլիակների ապստամբությունը Լիոնում՝ Հուլիսյան միապետության առաջին տարիներին, որը հանդիսանում է պրոլետարիատի և բուրժուազիայի միջև վաղ ընդհարումներից մեկը։ Ապստամբությունը, որը տեղի էր ունենում «Ապրել, աշխատելով, կամ մեռնել կովելով» նշանաբանի տակ, դաժանորեն ճզմվեց կառավարական զորքերի կողմից։

12 «Սեն-Մերի փողոցի դեպքերից հետո...» — խոսքը վերաբերում է 1832 թվականի հունիսի 5—6 տեղի ունեցած ռեսպուբլիկական ապստամբությանը։ Փարիզի բանվորական թաղամասերն ընդգրկող ապստամբությունը ճնշվեց Լուի-Ֆիլիպի կառավարության և բուրժուական ազգային գվարդիայի զորամասերի կողմից։ Բալզակը մի քանի անգամ իր երկերում հիշատակում է Սեն-Մերի փողոցի դեպքերը։ «Միակ մարդիկ, որոնց մասին նա խոսում է անկեղծ հիացմունքով,— գրում է Էնգելսը Բալզակի մասին,— նրա կատաղի քաղաքական հակառակորդներն են, ռեսպուբլիկականներ Cloitre Sain-Merri-ի փողոցի հերոսները, մարդիկ, որ այն ժամանակ (1830—1836) իրոք ժողովրդական մասսաների ներկայացուցիչներն էին»։

13 «...Կապուի հեշտանքներում..» — արտահայտություն, որ ֆրանսերեն լեզվում ծառայում է անգբաղ, վայելքներով լի կյանք նշելու համար։

14 Պասսալակա — հնությունների վաճառական Փարիզում։